

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ  
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն  
2016

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА**

**Институт языка им. Р.АЧАРЯНА**

**Л.Ш. ОГАНЕСЯН**

**ТОЛКОВАНИЯ СЛОВ В АРМЯНСКОЙ  
ЛИТЕРАТУРЕ ПЯТОГО ВЕКА**

**Е Р Е В А Н**

**Издательство “Гитутюн” НАН РА**

**2016**

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական  
գիտությունների թեկնածու՝ *Ռ.Յ. Դոխոյան*

## ԱՌԱՋԱԲԱՆ

V դ. հայ մատենագրության մեջ կան բազմաթիվ մեկնություններ:

Այս երևույթը, որ կարևորվում է ոչ միայն տեղեկատվական, այլև լեզվաբանական տարաբնույթ հարցերի վերհանման առումով, առաջին հերթին կապված է Ս. գրքի թարգմանության, ապա և Աստվածաշնչին վերաբերող մեկնողական գրականության հետ: Այդ մեկնությունները հիմնականում երեք տեսակի են՝ իմաստաբանական, թարգմանական, ստուգաբանական:

*Ստուգաբանություն* հասկացությունը խիստ պայմանական է: Գիտական ստուգաբանությունը՝ որպես լեզվաբանության կարևոր բաժին, սկզբնավորվել է XIX դարում, թեև դրանից առաջ էլ կային ստուգաբանական հիմնավոր որոշ փորձեր: Վաղ շրջանում ավելի տարածված էին թարգմանական բնույթի բառամեկնությունները: Այդ շրջանի գրքերում, բացի օտար բառերից ու հատուկ անուններից, բացատրվում էին նաև առանձին ոճեր ու դարձվածներ:

Այս կարգի մեկնությունները նաև բառարանագրության արժեք ունեն և հիմք հանդիսացան հետագայում բառացանկերի, ապա և բառարանների կազմման համար<sup>1</sup>:

Մեկնվող բառերը հիմնականում հատուկ անուններ են. դա պատահական չէ. «Հատուկ անունները հասարակ անուններ են եղել, և այս հանգամանքը հանգեցրել է նրանց սկզբնական (ստուգաբանական) իմաստի երկրորդ պլան մղելուն<sup>2</sup>»:

Մեկնություններ կան և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական գրականության մեջ: Թարգմանական գրականությանը չենք

---

<sup>1</sup> **Հ. Ամայան**, *Հայ միջնադարյան բառարանագրությունը*, Ե., 2007, էջ 14, 29:

<sup>2</sup> **Գ. Ջահուկյան**, *Լեզվաբանության պատմություն*, Ե., 1960, հ. I, էջ XLVII:

անդրադարձել՝ հաշվի առնելով հետևյալը. ա) այնտեղ մեկնված են հիմնականում Ս. գրքին վերաբերող անուններն ու հասկացությունները, որոնց զգալի մասը կա և ինքնուրույն գրականության մեջ, բ) դրանց լիարժեք քննությունը հնարավոր է միայն եբրայերենի, հին հունարենի, ասորերենի բնագրերի համեմատությամբ:

Թարգմանական գրականության մեջ որոշ դեպքերում հայ թարգմանիչը տալիս է հայերեն բացատրությունը՝ հավելելով «որ հայերեն անուանի», «հայք ասեն» և նման նախադասություններ. «Դիայ, զոր Հայքն Արամագղ ասեն» (Ոսկ., Պօղ. I, 301): «Զեւս, զոր և Դիոսն կոչեն և հայերէն Արամագղ» (ն.տ., 302): «Որ քաղղէարէն Իսահակ անուանի և հայերէն ծաղր» (Փիլոն, Մնաց., 207):

Կան բառերի բացատրություններ, որոնք լեզվաբանական տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Օրինակ՝ Փիլոնը *Աբրամ* և *Աբրաամ* բառերի սկզբնական իմաստների տարբերությունը կապում է վանկերի քանակի հետ. «Այդ երկավանգ անունն Աբրամ մեկնեալ է *հայր վերամբարձ*, իսկ եռավանգն Աբրաամ թարգմանեալ է *հայր ընտրեալ*» (Փիլ., Մնաց., 213):

*Ձիաստաց* բառը, ըստ ՆՀԲ-ի, վկայված է միայն թարգմանական գրականության մեջ. բառարանը բացատրում է. «Ազգ չարատանջ մեղուաց կամ ճանճից ձիոց. պիծակ, խումբ պիծակաց»: Ձեռագիր բառարաններում՝ «մեղու կամ պիծակ, կամ կրէտ սև թևաւոր, որ յաղբս լինի» (Տե՛ս Ամալյան, նշվ. աշխ., էջ 265):

Բառը կա Աստվածաշնչում. «Եւ ձիաստացն առաքեցէ Տէր Աստուած քո ի նոսա» (Բ. օրէնք, Է 20): Հուն. σφοκίαισ, ռուս. шершней, լատ. crabrones (դրված են հոգնակի թվով):

Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ի քննական բնագրի կազմող Կ. Մուրադյանը ծանոթագրում է. «Բնագրի մեղու

ընդհանուր անվանումը թարգմանվել է որոշ մոտեցումով *ձիաստաց* (=ձիապիծակ)» (էջ 375):

*Ձիաստացը*, անշուշտ, հայ թարգմանչի ստեղծած բառն է: Վկայված է նաև *ձիաստան*, *ձիաստանի* տարբերակներով: Անբացատրելի է մնում բառի *ստաց* բաղադրիչը (թեև Արմ-ում այն զետեղված է *ստանալ* բառահոդվածում բերվող բառերի շարքում), իսկ Հ.Ոսկեբերանն էլ գրում է. «Եբրայեցին և ասորին ոչ մեղուս ասեն, այլ ձիաստաց» (Ոսկ., Եսայ., 92):

Մեր պատմության և ընդհանրապես հայ իրականության հետ ավելի սերտ առնչություններ ունեն ինքնուրույն գրականության, հատկապես պատմագրության մեջ հանդիպող մեկնությունները: Այդ մեկնություններում բացահայտվում են հեղինակի օտար լեզուների իմացությունը, տվյալ ժամանակաշրջանում գործառվող բառի իմաստային նրբերանգները և լեզվաբանական տեսանկյունից շատ կարևոր մի հանգամանք ևս. այն է՝ փոխատու լեզվում և հայերենում V դարում գործող հնչյունական-հնչյունափոխական, տառադարձման որոշ օրինաչափություններ: Ուշադրության արժանի են հատկապես տեղանունների, որոշ անձնանունների մեկնությունները: Չբացառելով ակնհայտ կեղծ կամ ժողովրդական ստուգաբանության առկայությունը՝ չպետք է ժխտել նաև գիտական հիմք ունեցող բացատրությունների առկայությունը. հատկապես Մ. Խորենացու «Պատմության» մեջ: Այս «ստուգաբանությունների» վերաբերյալ կան բազմաթիվ գիտական վարկածներ, որոնք, ըստ կարելիվոյն, ամփոփված են մատենագիրների քննական բնագրերը կազմողների և թարգմանիչների ծանոթագրություններում: Մեր աշխատանքում անդրադարձել ենք հիմնականում նոր շրջանում հրատարակված հոդվածներին:

Ինքնուրույն գրականության մեջ նույնպես կան աստվածաշնչյան բազմաթիվ մեկնություններ՝ քաղված թարգմանական

գրականությունից: Դրանցից ներառել ենք միայն այնպիսիները, որոնցում նկատել ենք տարբեր, երբեմն ոչ ճիշտ բացատրություններ՝ համեմատելով հունարեն համապատասխան հատվածների և մի քանի բառարանային տվյալների հետ:

Քննության ենք առել մի շարք բառեր, բառակապակցություններ, որոնք V դ. մատենագիրները չեն մեկնաբանել: Սա գուցե կարող է դիտվել մեր աշխատանքի վերնագրի և շարադրանքի անհամապատասխանություն, սակայն բովանդակային առումով մերժելի չպետք է դիտվի:

Ընթերցողը, անշուշտ, կնկատի, որ ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել մի շարք հեղինակներ (Կորյուն, Հ. Մանդակունի, Մամբրե Վերծանող...), ինչպես նաև Եզնիկի, Եղիշեի, Խորենացու որոշ գործեր\* . դրանց չենք անդրադարձել, որովհետև մեկնությունները հազվադեպ են կամ ընդհանրապես չկան:

Նպատակահարմար ենք գտել նաև համառոտակի անդրադառնալ տվյալ հեղինակի (կամ գործի) լեզվի և ոճի, բառապաշարի յուրահատկություններին:

---

\* Հայ մատենագրությունը ամբողջապես ընդգրկված է «Մատենագիրք հայոց»-ի հատորաշարում: 5-րդ դարի գործերը զետեղված են Ա-Բ սովորաձավալ հատորներում (Անթիլիաս-Լիբանան, 2003):

Մեր երախտագիտությունն ենք հայտնում հայագիտության համար չափազանց կարևոր այդ վեհ գործը նախաձեռնողներին, հովանավորներին, կատարողներին, գիտական խորհրդի անդամներին՝ որպես ուղեցույց ունենալով Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի «Հայրապետական գիր օրհնութեան» հետևյալ տողերը. «Հայագիտութիւնը առաքելութիւն է ... Մեր սպասումն է, որ հայ մատենագիրները միայն անցեալի հոգեմտաւոր ժառանգութեան պատկանող անձեր չմնան, այլ դառնան մեր ներկայ կեանքի հունաւորող, հարստացնող, ապրող ու ապրեցնող գանձեր»:

## ԳԼՈՒԽ I

### ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»<sup>1</sup> երկը առանձնահատուկ տեղ ունի V դարի հայ ինքնուրույն գրականության շարքում: Բովանդակային առումով այն նորություն էր: Աստվածաբանական-փիլիսոփայական հարցերի քննությունը, բնականաբար, ենթադրում է նաև լեզվական յուրահատկություններ:

Հայերենը դեռ չուներ փոքրիշատե մշակված համապատասխան տերմիններ: Եզնիկը կարողացել է մի շարք գիտական հասկացություններ արտահայտել սովորական բառերով՝ վերջիններիս տալով նոր իմաստներ, միաժամանակ շրջանառության մեջ դնելով բոլորովին նոր գիտաբառեր:

Առաջին հերթին սա է Եզնիկի լեզվին բնորոշ հիմնական հատկանիշը, որով այն տարբերվում է V դ. այլ հեղինակներից:

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, Եզնիկի գրքի հիմնահարցը *գոյի, էության, է-ի* պարզաբանումն է. «Չկան դեռ գիտական որոշ տերմիններ, բայց Եզնիկը կարողանում է գտնել հարկավոր բառերը, երբեմն նույն նշանակության համար երկու-երեքը, օրինակ *բաղադրյալ* բառի համար գործածում է *յողել, յողուածոյ*»<sup>2</sup>:

Եզնիկ Կողբացու գրքի բովանդակության և լեզվական առանձնահատկություններին անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ<sup>3</sup>:

---

<sup>1</sup> *Եզնիկայ վարդապետի «Եղծ աղանդոց»*. Թարգմանությունը և ծանոթագրությունները **Ա. Աբրահամյանի**, Ե., 1994 թ. (Եզնիկի աշխատությունը բաղկացած է չորս գրքից: Հղումները նշում ենք ըստ գրքերի):

<sup>2</sup> **Մ. Աբեղյան**, *Երկեր*, Գ, Ե., 1968, էջ 149, 152:

<sup>3</sup> Նորագույն ուսումնասիրություններից հարկ է նշել **Վ. Առաքելյանի** «*Եզնիկի լեզուն և ոճը*» (Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ117-136), Մ.Մինասյանը եզնիկագիտությանը վերաբերող բազմաթույթ դիտարկումներից



Անդրադառնանք Կողբացու մի քանի մեկնություն-  
թարգմանություններին:

*Արթր* - «Եւ մանաւանդ զի առանց արթերն ասէ, որ է *ն*»  
(IV, Է): Հուն. ἄρθρον բազմիմաստ է, ունի նաև «քերականական  
հոդ» իմաստը<sup>4</sup>: Հոդ (գրք. յոդ) քերականական տերմինը հայերե-  
նում շրջանառության մեջ է մտել Թրակացու քերականության  
թարգմանությամբ: Եզնիկը ճիշտ է ըմբռնել հուն. բառի իմաստը:

*Իդոս* - «Իսկ պղատոնեանքն, աստուած և հիւղ և իդոս, որ  
առաջին՝ նիւթ է և երկրորդն՝ առանձինն ինչ ուրուք» (III, Դ):  
Թարգմանված է «Իսկ պլատոնականները աստծու (հետ  
ընդունում էին) և հյուլեն և իդոսը, որոնցից առաջինը նյութն է,  
երկրորդը՝ միայն մեկին հատուկ բան»:

*Հիւղ*-ի մասին կխոսենք համապատասխան տեղում, ինչ  
վերաբերում է *իդոս*-ին, նկատված է, որ Եզնիկի աշխատության  
մեջ հուն. εἶδος շփոթված է ἴδιος-ի հետ, որ իրոք նշանակում է  
«իրեն պատկանող, սեփական»:

Ընդարձակ ծանոթագրությամբ հարցին անդրադարձել է  
պրոֆ. Աշ. Աբրահամյանը (էջ, 328, ծան. 365):

*Խարամանի* - «Այլ թէ Արիմնն չար կարծիցի նոցա, վասն  
զԽարամանի անունն յանձին կրելոյ՝ առ ի յարեւէ զարեգակնա-  
տենչիկսն արկանելոյ, ուստի և զանունն իսկ զԽարամանոյ առ»  
(II, Թ):

Այս նախադասության *առ ի յարեւէ զարեգակնատենչիկսն  
արկանելոյ* (քանի որ արևապաշտներին արևից զրկեց) հասվածը  
որոշ ուսումնասիրողների մղել է *Խարամանի* բառի մեջ տեսնելու

---

գատ հրատարակել է Եղծ ադանդոցի քննական բնագիրը (Տե՛ս «Հանդես ամսօրեայ»,  
1987, էջ 367-469: 1988, էջ 10-45: 1990, էջ 79-126: 1991, էջ 127-193: 1992, էջ 139-187):  
Ա.Աբրահամյանի անգերագանցելի թարգմանության թվով 405 ծանոթագրություն-  
ները պարզաբանում են երկի բովանդակային և լեզվին առնչող էական հարցեր:

<sup>4</sup> **И. Дворецкий**, *Древнегреческо-русский словарь*, М., 1958, стр. 232.

իրան. xvar «արև» բաղադրիչը, որը մերժելի է: Ընդունելի է այն տեսակետը, ըստ որի *Խարաման*-ը Ահրիման-ի հնչյունափոխված ձևն է (իրանական դիցաբանության մեջ Ահրիմանը չարի աստվածությունն էր):

Ճիշտ է համարվում *Խարաման* ձևը: Պրոֆ. Ա. Աբրահամյանը նույնպես ընդունում է, որ *Խարաման*-*Ահրիման*-ը նույն անունն է՝ Ավեստայի Anro-Manyus-ը «չար գործերի արարիչը» (էջ 319, ծան. 274):

Հ. Աճառյանը *Խարամանի* «դև, սատանայ, մի տեսակ չար օձ» բառը համարում է ասորական փոխառություն. xarmāna «օձ»: Չառարկելով այս ստուգաբանությանը՝ կարծում ենք՝ այն կապ չունի Եզնիկի նշած *Խարաման(ի)* հետ (իմաստային տարբերությունը ակնհայտ է): Աճառյանը ենթադրում է նաև, որ «Բառը մեր մեջ ժողովրդական ստուգաբանությամբ միացուելով գրադաշտական դենի Ահրիման չար աստծու հետ (պիլ. Ahraman, Ahrman), ստացաւ սրա էլ նշանակութիւնները (տե՛ս Արմ., *Խարամանի* բառահոդվածը):

*Հարկաւոր* - «...Ասի հրեշտակ ոգի, այլ ոգի հարկաւոր՝ որ է հնազանդ և կամակատար» (I, ԻԳ): Գրաբարում բառը բազմիմաստ է. ՆՀԲ-ը նշում է նաև «սպաս, յարգ. այսինքն սպասահարկու. պաշտօնեայ» իմաստները, ԱԲ-ը՝ «ծառայող, սպասաւոր»: ՆՀԲ-ը բերում է երեք վկայություն. երկուսը թարգմանական գրականությունից և Եզնիկի վերոհիշյալ նախադասությունը: Նոր Կտակարանի «Ո՛չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք, որ առաքին ի սպասաւորութիւն...» (Եբր. Ա, 14) նախադասությունը աշխարհաբար թարգմանված է. «Չէ՞ որ բոլորն էլ սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասաւորութիւն նրանց...» ռուս. «Не все ли они суть служебные духи, посылаемые на служение для тех...»:

*Հարկաւոր-ծառայող-սպասարկող* իմաստային կապը ակնհայտ է: Ենթադրելի է, որ *հարկաւոր* բառի նշված իմաստով գործածությունը գրաբարում հաճախական չէր՝ հատկապես V դ. ինքնուրոյն գրականության մեջ\*:

*Հելլէն-* «Եւ Հելլէնք կոչին Յոյնք՝ յառնէ միոջէ, որում Հեղինսս անուն էր յելլադացոց աշխարհին: Բայց այլք ասն՝ եթէ ի ձիթենւոյն, որ յԱթէնս բուսաւ իւրովի. վասն զի ձիթենի յունարէն ելէա կոչի» (III, Ե): Չանդրադառնալով երկրանունը (ժողովրդի անունը) անձնանվան կամ բառանվան հետ կապելուն՝ նշենք, որ Եզնիկը ճիշտ է ներկայացնում հունարէն բառերը.

*Հիւղ* - «... որպէս Յունացն հեթանոսաց և արանց մոգոց հերձուածողաց, որ չար իմն էութիւն հակառակ բարոյ դնեն, զոր հիւղն կոչեն՝ որ թարգմանի նիւթ» (I, Բ):

*Հիւղ*-ը Արմ-ում մեկնված է «նիւթ, տարր, նախանիւթ», հուն. Յլղ «նյութ»:

Հունարենի բառարանում բառի համար նշվում է ութ իմաստ, որոնցից չորրորդը՝ որպէս փիլիսոփայական տերմին՝ նյութ «մատերիա» (Дворецкий, II, 1662):

*Նիւթ* բազմիմաստ բառը Եզնիկի վերոբերյալ հատվածում տերմինային արժէք ունի:

*Հոզի/ոզի* -«Քանզի ոգոյ և հողմոյ անուն էրբայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է» (I, ԻԳ): Եզնիկը ուզում է ասել, որ հոզի, շունչ, քամի հասկացությունները հիշյալ լեզուներում նույն բառով են արտահայտվում: Շարունակւոյթյան մեջ Եզնիկը գրում է, որ ուշադիր լինելու դեպքում կտեսնենք, որ այդպէս է նաև հայերէնում. «նա թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ՝ նոյնպէս

---

\* Վ. Առաքելյանը կարծում է, որ ժողովրդախոսակցական լեզվում գործածական *հարզևոր* բառը. հմմտ. Թումանյանի «Վաղ ժամանակ մի հայ շէնում մի *հարզևոր* հարս է լինում» գրաբարյան *հարկաւորն* է, որը ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է *հարզևոր* (Տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 123):

գտանի. յորժամ տագնապեալ ոք յումեքէ իւրէ՝ ասէ, չես ոգի կլանել, չես ոգի առնուլ» (այսինքն՝ չթողեց շունչ քաշեմ, չթողեց շունչ առնեմ): Զարգացնելով իր միտքը՝ Եզնիկը գրում է. «Մարդկանց հոգիները կոչվում են ոգեղեններ, նույնն է թէ հոդմեղեններ» (75):

*Հողմ* - «հոգի, շունչ» հանդիպում ենք և Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ում: Եւ դարձեալ ասէ, եթէ՝ «Հողմ Աստուծոյ շրջեր ի վերայ, ջուրց» (Ճառ Բ): Կեսարացու մեջբերումը Ս. գրքից է, որտեղ *հողմի* փոխարեն *հոգի* է. «Եւ հոգի Աստուծոյ շրջեր ի վերայ ջուրց» (Օճնդ., Ա, 2):

*Հոգի*-ն ծագում է հ.ե. \*Peu «փչել, շնչել» արմատից «նախնական մարդու համար «*հոգի, քամի, շունչ, օդ, փչիւն*» միևնոյն գաղափերներն էին» (Տե՛ս Արմ, *հոգի* բառահոդվածը)՝ Աճառյանը բերում է նաև Եզնիկի հիշյալ վկայությունը՝ չառարկելով երբայերենում և ասորերենում *հոգի, շունչ, քամի* հասկացությունները նույն բառով արտահայտելու Եզնիկի հաղորդմանը:

Հունարենում էլ՝ πνεῦμα-ն ունի «քամի» և «հոգի, կյանք» իմաստները:

*Յաթ*՝«Եւ յասորի լեզու քանզի չմարթի երկին ասել, ասէ, ի սկզբանէ արար Աստուած զյաթն երկինս և զյաթն երկիր... յաթն ասելով՝ որ է տարր՝ իբրեւ զմիոջէ տարրէ միոյ երկնի յայտ առնէ թարգմանութիւնն» (IV, Է): Արմ-ը բառը համարում է ասորական փոխառություն՝ «տարր, նախանիւթ», 2. «նշան, հայցականի բաղադրյալ ձևի»:

Ա. Աբրահամյանը ծանոթագրում է, որ «յաթ»-ի որպէս հայցականի նշան բացատրությունից զատ եզնիկը տալիս է նրա բուն իմաստը («տարր»), որպէսզի երկնքին վերաբերող իր միտքը հիմնավորի (էջ 336, ծան. 451)<sup>5</sup>:

---

<sup>5</sup> Եզնիկը այստեղ բանավիճում է մե՞կ, թե՞ մի քանի երկինքների գոյության շուրջ: Այդ մասին տե՛ս մեր «Դիտարկումներ Աստվածաշնչի որոշ հատվածների

Բերենք նշված հատվածի աշխարհաբար թարգմանությունը. «Եւ քանի որ ասորերեն լեզվով «երկին» չի կարելի ասել, ասված է՝ «Սկզբում աստված ստեղծեց հաթ երկինքը և հաթ երկիրը... սակայն ասելով «հաթ»-ը, որ նշանակում է տարր, թարգմանությունը որպէս մեկ տարրից (կազմված) մեկ երկինք է ցույց տալիս»:

«Եղծ աղանդոցի» երկրորդ բաժինը՝ գիրքը, վերաբերում է գրադաշտական կրոնի սկզբունքներին, որոնք, բնականաբար, հերքում, քննադատում է Եզնիկը՝ ելնելով քրիստոնեական ուսմունքի դիրքերից: «Եզնիկը պարսից կրոնի համար հավանորեն օգտվել է և՛ բերանացի ավանդություններից, և՛ մի գրավոր աղբյուրից, որ դեռ չի բացահայտված: Ուստի նրա հակաճառությունը մի թանկագին աղբյուր է Ջրադաշտական կրոնի համար»<sup>6</sup>: Անկախ աղբյուրների գրավոր, թե՛ բանավոր լինելու հանգամանքից՝ հայ իրականության մեջ Եզնիկը առաջինն էր, որ հայերենով իրազեկեց հարևան ժողովրդի կրոնի մի շարք ելակետերի, աստվածությունների և կրոնական-հավատալիքային յուրահատկությունների մասին:

Ուշադրության արժանի է *Ջրուան* բառի մեկնությունը. «Մինչ չև բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի, Ջրուան ոմն անուն էր, որ *թարգմանի բախտ կամ փառք*» (II, Ա) (ընդգծումը մերն է- Լ.Հ.): Ընդգծված նախադասությունը Ա. Աբրահամյանը թարգմանել է. «որ թարգմանվում է բախտ կամ փառք»՝ ծանոթագրելով. «հայտնի չէ, թե Եզնիկն ի՞նչ աղբյուրի հիման վրա է նշում «բախտ կամ փառք» իմաստները: Եզնիկի երկի Ջմյուննիայի հրատարա-

---

վերաբերյալ» հոդվածը («Ձահուկյանական ընթերցումներ», 2014 թ., էջ 88, 89): Աշխարհաբար թարգմանության մեջ ավելի ճիշտ կլիներ *յայթ* (ինչպէս գրաբարում) ձևը, քանի որ ասորերեն՝ yat-ը V դ. գրաբարում հնչել է *յայթ* և ոչ թե *հայթ*:

<sup>6</sup> Մ. Աբեղյան, *նշվ. աշխ.*, էջ 154:

կուրթյան մեջ «անուն էր» արտահայտությունից հետո ավելացված է «այսինքն Արամազդ»: Դրանով հրատարակիչները հավասարության նշան են դրել Ջրվանի և Արամազդի միջև» (տե՛ս էջ 314, ծան. 233):

Նույն ծանոթագրության մեջ Ա. Աբրահամյանը անդրադառնում է Հ. Հյուբշմանի և Հր. Աճառյանի ստուգաբանությանը, որոնց կարծիքով «զենդերենում *zrvan* նշանակել է ժամանակ, աստուծու վերագրվելով դարձել է հաստուկ անուն»:

*Ջրվան-ժամանակ* կապը թերևս անուղղակի կերպով արտահայտված է Եզնիկի մեկ այլ վկայությամբ: Ժամանակը անսկիզբ է և անվերջ, հավիտենական է. բնականաբար, ըստ զրադաշտական կրոնի, Ջրվանն էլ այդպիսին է, բայց Եզնիկը հերքում է այդ թեզը. «Ջրուանն չէր մշտնջենաւոր, այլ յումեքէ եղեալ» (II, Դ):

Նախքան **Ջրուան-բախտ** մեկնաբանմանն անցնելը՝ նկատենք, որ «աստված», «ժամանակ» և «ճակատագիր» հասկացությունները դիցաբանության մեջ սերտորեն կապված են. ճակատագիրը ժամանակի մեջ կատարվող (կատարվելիք) երևույթ է, որը տնօրինում է աստված: Հին հունական դիցաբանությունից հայտնի է, որ «Քրոնոսը վստահ չէր, որ իշխանությունն ընդմիջտ կմնա իր ձեռքում: Նա երկյուղ ուներ, որ իր դեմ կապստամբեն գավակները և իրեն կդատապարտեն նույն ճակատագրին, ինչ ինքը արժանացրեց իր հորը...»: «Օլիմպոսում ճակատագրի աստվածուհին էր Տիքեն (ըստ հռոմեացիների՝ Ֆորտունան)»<sup>7</sup>: Ի դեպ, ժամ-ը ունի նաև «խրաքանչիւր կենդանակերպի 1800-երորդ մասը՝ որով աստղաբաշխներն ու ախտարագետները մարդու բախտն են որոշում» իմաստը (տե՛ս Արմ, *ժամ բառահողվածը*):

Փորձենք բացահայտել *Ջրվան, բախտ* կամ *փառք* կապը:

---

<sup>7</sup> Ն.Ա. Կուսն, *Հին Հունաստանի լեզունդներն ու առասպելները*, Եր., 1956, էջ 21-29:

Եզնիկը այդ կապին անդրադառնում է մի քանի անգամ. «Այլ թէ և բախտ ևս էր՝ որպէս ասենն՝ Զրուանն, ապաքէն ուրուք բախտ էր և ո՛վ էր արդեւք՝ ոյր բախտն էր: Զի բախտ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան» (II, Զ): Վերոհիշյալ մեջբերման *որ ասենն* կապակցությունը հուշում է, որ Զրվան-բախտ նույնությունը Եզնիկը գիտի իրանական սկզբնաղբյուրից: Շարունակելով այդ դատողությունների շարքը՝ Եզնիկը գտնում է, որ «Արդ էթէ բախտ էր Զրուանն՝ չէր ինչ անձնաւոր, ուստի յայտ է՝ թէ բնաւ և էր իսկ ոչ Զրուանն» (II, Զ):

Զրադաշտական կրոնի կարևորագույն ելակետերից մեկը ճակատագրի (բախտի) յուրօրինակ աստվածացումն է, այն առաջնային է. մի փիլիսոփայություն, որը քրիստոնեությունը մերժում է: Ըստ Եզնիկի՝ «Մահվան համար սահմանված ճակատագիր Աստվածատուր գրքերում ոչ մի տեղ չենք գտնում, որովհետև մահվան ու կյանքի տերը կարող է և՛ կրճատել, և՛ երկարացնել իր հրամանը... ինչպէս որ ջրհեղեղի ժամանակ ասաց՝ «Այս մարդկանց կյանքի օրերը թող լինեն հարյուր քսան տարի...» (II, ԺԳ):

Իրանական դիցաբանության մեջ այդ *տեքը* հենց Զրվանն էր՝ ճակատագիր-աստվածը: «Երկրային բոլոր գործերը առաջանում են ճակատագրի կանխորոշմամբ... որը Զրվանն է՝ հզոր և մշտնջենական կառավարիչը»<sup>8</sup>:

Ավելորդ չենք համարում նշել, որ *baxt* բառի արմատն է իրանական *bag/baž*-ը՝ «բաժանել, բաշխել», որի անցեալ դերբայն է *qún*. *baxta*= սանս. *bhakta*՝ բախտն ըմբռնելով իբրև ի վերուստ բաշխուած, բաժանուած վիճակ» (Տե՛ս Արմ, *բախտ* բառահոդվածը):

---

<sup>8</sup> *Зороастрийские тексты. Суждения духа разума (Дадестан-и меног-и храд..., издание подготовлено О. М. Чунаквой, М., 1997, стр. 99.*

**Ամփոփենք:** «Զրուան... որ թարգմանի բախտ կամ փառք» նախադասության մեջ *բախտ*-ը ոչ թե Զրուան անվան ստուգաբանությունն է կամ թարգմանությունը, այլ Զրվանի դերի, գործունեության, պաշտոնի մատնանշումը, պարզաբանումը:

*Փառք*-ը նույնպես *Զրվան* բառի թարգմանություն չպետք է դիտել, այլ նրա «աստվածային» լինելու բնութագրիչներից մեկը:

Եզնիկը մերժում է Զրվանի կատարյալ (իմա՝ «աստված») լինելը նաև հետևյալ փաստարկով, որ եթե նա կատարյալ լիներ, ինքը կստեղծեր երկինքն ու երկիրը, և կատարյալը ումի՞ց կարիք ուներ խնդրելու որդի, ինչի համար հազար տարի զոհ էր մատուցել: Եզնիկը բերում է (բնականաբար և քննադատում) զրադաշտականների պատասխանը՝ «փառաց առներ զյաշտն», այսինքն՝ փառքի համար է զոհ մատուցում:

Փառքը, փառավորվելը խորթ չեն աստվածներին և ոչ միայն զրադաշտական: Եզնիկի երկի առաջին գրքում՝ «Եղծ աղանդոց հեթանոսացն», որը իրանական կրոնին չի վերաբերում, անդրադարձ կա Հիսուսի՝ հիվանդներին բուժելու մասին, որտեղ ասվում է «Իբրև տեսին ժողովուրդքն զարմացան եւ փառաւոր առնէին զԱստուած»: (Մտթ., Թ. 8, Եզն., I, Ի):

Զրադաշտական կրոնի *բախտ* (ճակատագիր) հասկացությանը անդրադարձել է նաև Եղիշեն՝ անշուշտ ծանոթ լինելով Եզնիկի գրվածքին: Միհրներսեհ Վզուրկ հրամանատարը Հայոց մեծերին ուղղված նամակում մերժում է քրիստոնեության որոշ դրույթներ, նաև վիրավորված է, որ հայերը «ծաղր առնեն զանուն բախտի և զփառաւորութիւնն յոյժ այպանեն»<sup>9</sup>:

*Չանուն բախտի* ասելով՝ Միհրներսեհը նկատի ունի Զրվանին. Ե. Տեր-Մինասյանը վերոհիշյալ նախադասությունը

---

<sup>9</sup> Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 52:



թարգմանել է. «Ծաղրում են բախտի անունը և խիստ պախարակում են փառավորությունը»:

Կարծում ենք՝ թարգմանության մեջ մի փոքր անճշտություն կա: Գրաբարում *անուն* բառը ունի նաև «փառք, հռչակ» իմաստները: Ուրեմն՝ պետք է թարգմանել «ծաղրում են բախտի (իմա՝ Զրվանի) համբավը, հռչակը, փառքը»:

Եզնիկը «բախտ, ճակատագիր» իմաստով գործածում է և *հրաման* բառը. «Հրամանա՞ւ, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց» նախադասությունը թարգմանված է. «Հարցնում են՝ «Մարդիկ ճակատագրո՞վ են մեռնում, թե՞ առանց ճակատագրի» (II, ԺԳ):

*Հրաման*-ը իրանական փոխառություն է՝ միջին պրս. frāman «հրաման, կարգադրություն»: Գրաբարում *հրաման*-ը հիմնականում գործածվում է նշված իմաստով: Բառը ունի հաճախական կիրառություն, և այդ արմատով կազմած բազմաթիվ բառեր կան. *հրամանաբար, հրամանաբեր, հրամանադրութիւն, հրամանագանց (լինել), հրամանակատար, հրամանապետ, հրամանատար...* և այլն:

*Հրամանի*՝ «ճակատագիր» իմաստով գործածությունը հաճախական չէ: ՆՀԲ-ը *հրամանք* կամ *հրաման* մեկնում է «ճակատագիր կամ օրհաս հեթանոսական»՝ նշելով հունարեն 'εἰμαρμένη համապատասխանակը: Բնագրային օրինակը Ոսկեբերանից է, իսկ հայ թարգմանիչը տալիս է հունարեն բառի բացատրությունը. «Զծնունդսն ասես և զիմարմենն, զոր հայերեն ճակատագիր և բախտ ասեն» (Տե՛ս Արմ, իմարմինե բառահողվածը):

5-րդ դարի ոչ թարգմանական գործերից ՆՀԲ-ը հղում է միայն Մանդակունուն և Եզնիկին՝ վերջինիս դեպքում *ստէպ* նշումով:

Մանդակունու վկայության մեջ *բախտ, ճակատագիր, հրաման* հոմանիշներ են. «... մի մոլորեցուք իբրև զհեթանոսսն ի բախտ և ճակատագիր եւ ի հրամանս»<sup>10</sup>:

Ուշ շրջանի գործերում *հրաման*-ի՝ նշված իմաստով գործածություն կա Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում. «Նոքա որք զբախտ և զճակատագիր և զհրաման համբաւեն, ոչ ինչ ասեն ի կամաց մեր գործիչ, այլ զամենայն ի հարկէ ասեն. զի զեղիսաբար զկենցաղս վճարեցեն»<sup>11</sup>:

*Ճակատագիր* բառը նույնպէս գրաբարում հաճախական չէ: Այն վկայված չէ Աստվածաշնչում, 5-րդ դարի պատմագրական գործերում (Կորյուն, Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշէ, Փարպեցի): Խորենացու *Պատմության* մեջ հանդիպում ենք *ճակատագրեալ* դերբայական ձևին: «Ինքնակալ Յուլիանոս, Ծնունդ Բնաքայ. Արամազդայ որդի, և *ճակատագրեալ յանմահութիւն*» (ընդգծումը մերն է – Լ.Հ.) (III, ԺԵ): Ընդգծված բառակապակցությունը Ստ. Մալխասյանը թարգմանել է «ճակատագրով անմահության սահմանված»:

Բառը երկու անգամ գործածված է Եզնիկի գրքում՝ դարձյալ զրադաշտական կրոնին վերաբերող գրքում: «Եթէ կարճիչք յանցանաց էին դեւք, ոչ երբէք զմարդիկ ի կռապաշտութիւն յօժարեցուցանէին, և ոչ ի պէսպէս աղանդս փիլիսոփայից... ոչ ի բաշխս բախտից, և ոչ ճակատագրաց, և ոչ կապելոց հրամանաց...» (II, ԺԲ): «Եւ ուր իցէ այն, զոր ասենն, եթէ որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել, այլ որ փառաւորն գրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ, և ուր հրամանքն իցեն և յումմէ հրամանքն...» (II, ԺԵ):

---

<sup>10</sup> *Մատենագիրք հայոց*, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003 թ., էջ 1271:

<sup>11</sup> «Գիրք հարցմանց» *համաբարբառ*, գիրք Գ, Ե., 2012 թ., էջ 374 (համաբարբառը կազմել է բ.գ.թ. Սուսաննա Գրիգորյանը):

*Ճակատագիր* և պրս. *sarnevēšt* (*sar* «գրուիս, ճակատ» և *nevēšt* «գրել բայի հիմքը») ունեն բառակազմական նույն կաղապարը):

*Բախտ* գրաբարում բազմիմաստ է (տե՛ս ՆՀԲ): Աստվածաշնչում այն վկայված է լոկ երկու անգամ և բնավ կապ չունի զրադաշտական կրոնի հետ: Բերենք Ս. գրքի օրինակները. «Եւ ասէ Լիա, առ իս բաղդ իմ եւ անունեայ զանուն նորա զար» (Ծննդ., Լ, 11): Հուն. «και ειπεν λεια εν τυχη και επωνομασεν το ονομα αυτου Γαδ» (հուն. *τυχη*-ն նույնպես բազմիմաստ է) (Տե՛ս *Дворецкий*, *стр.* 1657): Եբրայերենում *Չաղ* նշանակում է «բախտ» (*ԲՄԳ*, էջ 105), «երջանկություն» (*Симфония*, *стр.* 181): «Եւ կազմէիք դիւաց սեղան և խառնէիք խառնելիս բախտից...» (Եսայ., ԿԵ, 11): Ռուս. «Приготовляете трапезу для Гада и растворяете полную чашу для Мени»: (Օանթազգրվում է, որ *Гад*-ը և *Мени*-ն արևի և լուսնի աստվածներն են):

Ճայերեն և ռուսերեն հատվածների ակնհայտ տարբերությունը թվացյալ է: *Դեւ*-ը նախապես ունեցել է «աստվածություն, բարի ոգի» իմաստը (Տե՛ս Արմ, Դեւ, Տիւ բառահոդվածները):

Անկախ տարբեր բնույթի օրինակների համադրումից՝ *հրաման-ճակատագիր* (բախտ) իմաստային կապը աղերսվում է զրադաշտական գաղափարախոսության հետ: Վերջին հաշվով, *ճակատագիրը* (նախասահմանվածությունը) նույնպես վերուստ տրված հրաման, պատգամ է:

Ամենայն հավանականությամբ գրաբարյան *ճակատագիր* և *հրաման* «ճակատագիր» բառերը հայ մատենագրության մեջ առաջին անգամ վկայել է Եզնիկը:

*Բախտ* բառը, բացի մի շարք իմաստներից նաև զրադաշտությանը վերաբերող տերմին է, և որպես այդպիսին՝ դարձյալ առաջին վկայությունը Եզնիկինն է:

## ԳԼՈՒԽ II

### ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ագաթանգեղոսի «Պատմությունը»<sup>1</sup> V դարի ամենաձավալուն էրկն է: Այնտեղ գտնում ենք իրական ու առասպելական պատմություններ, կրոնական ուսմունք, հայ հեթանոսական իրականություն, քարոզներ, զրույցներ: «Ագաթանգեղոսի գրքի ուղիղ կեսը նվիրված է քրիստոնեական ուսմունքին՝ հատկապես Աստվածաշնչի ու Ավետարանների մեկնաբանությանն ու ջատագովությանը: Ուստի և բնական է կրոնական և եկեղեցական բառերի առատությունը, որ նա առաջին անգամ գրի է առել մեր գրական լեզվով» (Առաքելյան, 1981, էջ 151)\*: Այս և այլ բնագավառներին վերաբերող բազմաթիվ բառեր կան, որոնց առաջ վկայությունները Ագաթանգեղոսինն են:

Ագաթանգեղոսի գրքի շատ հատվածներ, բառեր մեկնաբանվել են հետազոտողների կողմից, իսկ Արամ Տեր-Ղևոնդյանի ծանոթագրությունները դրանց ամփոփումն է՝ նաև նոր գիտական վերլուծություններով՝ տարբեր բնագրերի և այլալեզու թարգմանությունների համեմատության հենքով:

---

<sup>1</sup> Ագաթանգեղայ պատմություն Հայոց. Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի: Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983: (Հղումները նշում ենք ըստ պարագրաֆների (դրվագների):

\* Վ. Առաքելյանի հաշվումներով Ագաթանգեղոսը հազարից ավելի նոր բառեր է գործածել, մեր հաշվումներով՝ մոտ 550, որից 32-ը ՆՀԲ-ը չի վկայել: (Հովհաննիսյան, 2006 թ., էջ 137-139): Մեր աշխատանքում նորակազմ բառերը խմբավորված են ըստ բառակազմական յուրահատկությունների՝ նախադաս և հետադաս բաղադրիչների հաճախականության հաշվառումով (էջ 134-140):

«Պատմության» մեջ բառերի մեկնությունները այնքան էլ բազմաթիվ չեն: Դրանք հիմնականում օտար հատուկ անունների բացատրության փորձեր են: Ահա մի քանի օրինակ:

*Աղամ* – Աստվածաշնչյան այս անձնանվան մեկնությունը գտնում ենք V դ. շատ գործերում. մեկնությունները, ընդհանրություններով հանդերձ, ունեն նաև մասնակի տարբերություններ:

Ագաթանգեղոսը Աղամին համարում է «Աստծոյ ստեղծած», նաև «հողածին». «Քանզի նմանութեամբ մարդոյ երևեալ Աստուծոյ ի ստեղծանել զմարդն հող յերկրէ և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղև մարդն յոզի կենդանի» (271): «Արդ՝ նահապետքն կարգեալք, Աղամն առաջին աստուածաստեղծ, այսինքն Աղամ» (292):

Եզնիկը Աղամին կոչում է *Նորաստեղծ*. «Այնչափ ինչ չար ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև ածեալ զնորարարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել» (I, ԺԶ): Եզնիկը նկատի է ունեցել Ս. գրքի, Ծննդ. Բ, 19 հատվածը. «... Եւ ստեղծ էւս Տէր Աստուած զամենայն գազանս... և ւծ զնոսա առ Աղամ տեսանել զինչ կոչեացէ զնոսա»:

Հ. Աճառյանը գրում է. «Եբրայերէն Adam-ը բուն նշանակում է *մարդ, մարդ էակ*: Հները կարծում էին, թե բուն նշանակում է «հող» (Արմ, I, էջ 48): Մարդու հողածին լինելը վկայում է Ս. Գիրքը: «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ» (Ծննդ., Ա, 7):

Ընդունելի է համարվում Աղամ «մարդ» կամ «կարմիր ավազից» մեկնությունը (տե՛ս Симвония, стр. 10):

*Բագայառիճ* – «Գայր հասանէր ի մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամագոյ, ի գիւղն գոր բագայառիճն կոչեն ըստ պարթևարէն լեզուին» (790) (Ձեռագրերում՝ նաև Բագառիճն, Բագառիջն): «Պատմության» մեջ այս տեղանվան միակ վկայությունն է: *Բագ* «աստված» բառի իրանական ծագումը

անժխտելի է: Պարզ չէ երկրորդ բաղադրիչի բնույթը: Խորենացու գրքում *Բազայառինջ* է (II, ԺԴ):

Պատմահայրը, սովորաբար, այդ կարգի բառերը ստուգաբանում է: Խորենացին թերևս վստահել է Ագաթանգեղոսին և խուսափել կրկնությունից<sup>2</sup>:

*Առիճ* բաղադրիչով այլ տեղանուններ մեր մատենագրության մեջ վկայված են (Գայլառիճ, Ձիթառիճ, Մկնառիճ, Արջոյ առիճ...): Գ. Ղափանցյանը կարծում է, որ *Առիճ*-ը «տեղ, բուն, վայր» ցույց տվող բառ է՝ հավելելով. «*Առինջ* «տեղ, բնակատեղի» բառը թե՛ որպես առանձին հատուկ տեղանուն և թե՛ այլ բառերի հետ որպես բարդության երկրորդ մաս, ունի մեզ համար նաև այն պատմական նշանակությունը, որ ստեղծված լինելով Փոքր Ասիայի խեթական (թե՛ պրոտոխեթական) լեզվաստեղծական բնագավառում... տարածվել է հայասցիների և քալայցիների գաղթի հետ թե՛ Արաքսի հովտով դեպի արևելք և թե՛ հարավ-արևելյան ուղղությամբ»<sup>3</sup>:

*Բազայառիճ*-ի վերաբերյալ կան մի շարք ստուգաբանական փորձեր: Հ. Աճառյանը, համաձայն լինելով Հյուբշմանի հետ, իրանական լեզուներից փոխառյալ տեղանունների ցանկում ներառում է և *Բազայառիճ*-ը (ՀԼՊ, I, 307): Գ. Ջահուկյանի կարծիքով. «Հյուբշմանի ցանկում տեղ են գտել տեղանուններ, որոնց իրանական լինելը կարելի է ընդունել խիստ

---

<sup>2</sup> Ագաթանգեղոսը Խորենացու համար հեղինակություն էր: Խորենացին նրան անվանում է «աջող քարտուղարն Տրդատայ» (II, ԿԷ) և մի քանի տեղ բարեխղճորեն հղում նրան. «զմնացեալս ի գրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (II, ՀԴ), «Իսկ որ ինչ ի նորա ժամանակի Տրդատայ գործք՝ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (II, ՁԸ), «որ համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (II, ՁԳ):

<sup>3</sup> Գ. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 67:

վերապահությամբ: *Բագայառիճ, Բագնայր...* բառերի մեջ միայն առաջին բաղադրիչներն են իրանական<sup>4</sup>:

Ուսումնասիրողները ուշադրություն չեն դարձրել *պարթևարէն* բառին:

Պարթևերենի՝ միջինիրանական լեզուներից մեկի գոյության առաջին և միակ վկայությունը Ագաթանգեղոսինն է: ՆՀԲ-ում *պարթևարէն* բառահոդվածում նշված է միայն վերոհիշյալ օրինակը: Նպատակահարմար ենք գտնում այս բառի մասին խոսել ավելի մանրամասն: Պարթևստանը (Պարթևք) գտնվում էր Կասպից ծովից հարավ-արևելք: Անկախ պետության կարգավիճակ է ձեռք բերել Արշակունիների դինաստիայի ժամանակ (մ.թ.ա. 250 – մ.թ. 224 թթ.): Իրանագիտությունը որոշակի տվյալներ չունի հին պարթևերենի լեզվավիճակի մասին: Աքեմենյան շրջանից պարթևերեն գրավոր հիշատակարաններ չեն վկայվել:

Միայն 20-րդ դ. սկզբներին Արևելյան Թուրքեստանում մանիքեյական տեքստերի (հուշարձանների) հայտնաբերման շնորհիվ, պարզվեց, որ այդ լեզուներից մեկը պարթևերեն է:

Պարթևերենի հնչյունաբանության, բառապաշարի և քերականական կառուցվածքին վերաբերող առաջին լուրջ ուսումնասիրությունները հրապարակվել են անցյալ դարի 40-ական թվականներից:

Պարթևերենը գործածությունից դուրս է մղվել V-VI դարերում (տե՛ս ОИЯ, II, 147-158): Հին հայերենի իրանական փոխառությունները կատարվել են իրանական լեզուներից՝ հատկապես միջին պարսկերենից և պարթևերենից: Իրանագիտությունը հիմնականում բացահայտել է նշված լեզուների առանձնահատկությունները, որոնք և հնարավորություն են տալիս հայերենի իրանական փոխառությունների շարքում

---

<sup>4</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրան*, Ե., 1987, էջ 582:

տարբերակել միջին պարսկերեն և պարթևերեն շերտերը: Այս հարցում, սակայն, որոշակի դժվարություններ են ներկայացնում հիշյալ միջին իրանական լեզուների հնչյունական և բառապաշարային ընդհանրությունները:

Անկախ *բագայառիճ* բառի վերջին բաղադրիչի՝ իրանական թե այլ ծագման հարցից՝ Ագաթանգեղոսի վկայությունը կարևորվում է որպես պարթևերենի առաջին հիշատակություն:

Ենթադրում ենք, որ *պարթևերենի* մասին վկայություն չկա եվրոպական և ասիական հին լեզուներում\*:

*Բագաւան* – «Գայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթևարէն լեզուէն՝ Դիցաւան» (817): Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, երկրորդ անգամ է օգտագործում *պարթևարէն* բառը: Վկայությունը ուշագրավ է մեկ այլ առումով: Ագաթանգեղոսը թարգմանել է միայն բառի առաջին՝ *բագ* բաղադրիչը: Հաջորդ պարբերության մեջ Ագաթանգեղոսը արդեն *Բագաւանի* փոխարեն գրում է *Դիցաւան*. «Ապա գայր հասանէր յանուանեալ Դիցաւանն ամենայն մեծամեծօքն»: Երկու օրինակներում (*Բագաւան*, *Դիցաւան*) *աւան*-ը, ըստ երևույթին, հեղինակը համարել է հայերեն բառ կամ հայերին հասկանալի, որի հոմանիշը քաղաքագեօղն է: Ի դեպ, Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ *աւան*-ի գործածությունը հաճախական է (11 անգամ):

Երկու խոսք *աւան* բառի ծագման մասին: Հայագետների մի զգալի մասը (Հյուրշման, Աճառյան, Ջահուկյան...) ընդունում

---

\* *Պարթևերեն* բառը չկա ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած և Է. Աղայանի բացատրական բառարաններում: Ստ. Մալխայանի բառարանում *պարթևարէն* գլխաբառից հետո գրված է «տե՛ս պահլավերէն», վերջինս էլ բացատրվում է «միջին պարսկերեն լեզու, որ գործ էր անում Պարսկաստանում Սասանյանների ժամանակ»: Այս մերժելի բացատրությունը, բնավ, բառարանագրի չիմացությունը չէ: Հեղինակը բառարանի կազմման աշխատանքը սկսել է 1922 թ. և ավարտել 1936 թ. (հրատարակել է ավելի ուշ):



են բառի իրանական ծագումը, որը, թեև ըստ Աճառյանի, միջին իրանական լեզուներում վկայված չէ, բայց կա հին պարսկերենում *āvahana-* «գյուղ, ասան»: Գ. Չահուկյանը նշում է նաև պարթևերենում *āvān-*ի վկայված լինելը՝ (Չահուկյան, 1987, էջ 517, ՀԱԲ, էջ 99):

Բառի իրանական ծագումը մերժում է Գ. Ղափանցյանը և ավելի հավանական է համարում *աւանի* աղերսը ուրարտ. *ebani* «երկիր» բառի հետ: Լեզվաբանը նույն ծագումնաբանական կապն է տեսնում մեգրելերենի *abani* «տեղ» բառի միջև: “*b*”-ի դիմաց հայ. *w(ւ)* հնչյունափոխությունը համարում է օրինաչափ՝ համեմատելով ուրարտ. *abili* – հայ. «աւել» գուգահեռը:

Մի շարք լեզուների տվյալների համեմատությամբ Գ. Ղափանցյանը եզրակացնում է. «Ըստ իս, ասորական *awwānā*, թալմուտական *avnā* «իջևան», քրդական *awāni* «շենք, շեն տեղ» և սանսկր. *avāni* «երկիր, հող» փոխառություններ են այս հին ասիական լեզուներից» (Ղափանցյանը ընդհանրություն է տեսնում նաև իտեթ. *Umene* «քաղաք» և խոտիտական *Umini* «երկիր» բառերի հետ» (Ղափանցյան, 1961, էջ 133):

Մենք նույնպես հակված չենք *աւան*-ը իրանական փոխառություն համարելու: Իհարկե, ստուգաբանությունների դեպքում առաջին հերթին կարևորվում է հնչյունական-հնչյունափոխության օրինաչափությունները (որոնք թե՛ իրանական, թե՛ այլ ծագման դեպքում ընդունելի են), բայց լրացուցիչ փաստարկները նույնպես կարևոր են:

Դարեհ Վշտասափի Բիսեթունյան եռալեզու (հին պարսկերեն, ակկադերեն, էլամերեն) արձանագրության մեջ *աւան*-ը վկայված է լոկ երկու անգամ. երկու դեպքում էլ այդ տեղանունը Իրանի տարածքում չէ. մեկը Էլամում է, մյուսը՝ Հայաստանում (Ուրարտու-ում): Բերենք վերջինիս վերաբերող հատվածի թարգմանությունը. «Արմինիայի մեջ Չուգա անունով մի ավան

կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ» (§ 26)<sup>5</sup>: Արձանագրողը, ըստ երևույթին, օտար՝ ոչ իրանական բնակավայրի անվանումը թողել է նույնությամբ, չի թարգմանել. մի երևույթ, որ այժմ էլ ընդունված է. հմմտ. (ռուսական) խուտոր, (լեռնային) աուլ, (հունական) պոլիս... և այլն:

*Բեթղեհեմ* – «Ի սկզբանե»՝ զԱստուածութիւնն ցուցանէ, «Բեթղեհեմ»՝ զմարմինն պատմէ» (388): Չակերտների մեջ դրված բառերի մեկնությունները վերաբերում են Աստվածաշնչի «Մարգարեություն Միքիայ» գրքի հետևյալ տողերին. «Եւ դու, Բեթղեհեմ, տուն Եփրաթայ՝ սակաւորդ իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի: Վասն այնորիկ տացէ զնոսա մինչեւ ծննդականին ծնցի...» (Ե, 3-4): Աստվածաշնչյան մեջբերմանը Ագաթանգեղոսը անդրադառնում է երկու անգամ (էջ 388, 392)՝ բնագրից չնչին շեղումներով, որը տվյալ դեպքում կարևոր չէ:

Բացատրության կարիք ունի «Բեթղեհեմ» զմարմինն պատմէ» մեկնությունը: Այս նախադասությունը աշխարհաբար թարգմանված է. «*Բեթղեհեմը՝ մարմին է նշանակում: Ագաթանգեղոսի մեկնության և աշխարհաբար թարգմանության վերաբերյալ որևէ ծանոթագրություն չկա:*

---

<sup>5</sup> Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը. թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Գ. Մ. Նալբանդյանի**, Ե., 1964, էջ 14: Ի դեպ, այս արձանագրության մեջ բազմիցս հիշատակվում է *Արմինիա* տեղանունը: Հայերի մի քանի անձնանուններ թերևս առաջին վկայություններն են. «Մի մարդ Արիսա անունով, հայ Հալդիտայի որդին Բաբելոնում ապստամբեց (§ 49)», «Մեկը՝ Արիսա անունով հայ, նա ստելով այսպես ասաց. «Ես Նաբուկոդոնոսորացիսն եմ (§ 52)»: Այս անձնանունները կան և Աճառյանի բառարանում (*Արիսա*-ն՝ *Արիսա* գրությամբ) (Տե՛ս Անձ. բառ., հ. I, էջ 265, հտ. III, էջ 12):

*Բեթղեհեմ* բառացի նշանակում է «հացատուն» (տե՛ս Симфония, стр. 110): Բառիմաստը, ինչպես տեսնում ենք, կապ չունի «Բեթղեհեմ» գմարմին պատմե՛լ-ի հետ:

*Բեթղեհեմ*-ը Քրիստոսի ծննդավայրն է, այն երբեմն կոչում են նաև *Յուդայի Բեթղեհեմ*:

«Բեթղեհեմ գմարմին պատմե՛լ»-ով Ագաթանգեղոսը շեշտում է Հիսուսի ծնվելը, մարմնանալը այդ բնակավայրում:

***Հոփսիսիմե*** – «Մանաւանդ դու, *Հոփսիսիմե*, ըստ անուանդ քում արդարև *ընկեցեալ* եղեր Գայիանեաւդ և քոյովք սիրելեօքդ ի մահուանէ ի կեանս» (175): Այս հատվածը Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանել է. «Մանավանդ, դու, *Հոփսիսիմե*, արդարև, ըստ քո անվանը, մահվանից դեպի կյանք նետվեցիր (ընկեցեալ) Գայանեի ու քո սիրելիների հետ»:

Հստակ չէ «Հոփսիսիմե ըստ անուանդ ընկեցեալ» հատվածը և թարգմանությունը: Ոմանք *Հոփսիսիմե* և *ընկեցեալ* գուգահեռի մեջ տեսնում են «թաքնված» ստուգաբանություն՝ ենթադրելով, որ Ագաթանգեղոսը նկատի է ունեցել հուն. ριπτω-ριψω «նետել, գցել» բայը (Տե՛ս ծան. էջ 513):

Արաբական տարբերակում բառը կապվում է Եպրասիա «բարեբախտություն» անվան հետ, որը հայերի մոտ ուշ միջնադարում է հանդիպում: Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով «հայկական և հունական Ագաթանգեղոսի մեջ այդ անվան բացակայությունը թույլ է տալիս ենթադրելու, որ արաբ թարգմանչի ձեռքով է ավելացված»<sup>6</sup>:

---

<sup>6</sup> Ա. Տեր-Ղևոնդյան, *Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը*, Ե., 1968, էջ 63:

**Մեզադէ**– «Ղևոնդէս արքեպիսկոպոս մետրոպոլիտ մեզադէ Կեսարու և ամենայն ուխտ սրբոյ եկեղեցւոյ, քահանայութեան, եպիսկոպոսաց... ի Տէր խնդալ» (820):

Հուն. *μεγάλη* «մեծ» բառը Ագաթանգեղոսը չի թարգմանում՝ ըստ երևույթին նկատի առնելով այն, որ հոյն եպիսկոպոսին տրված տիտղոս է:

Հայերեն (հայի) անձնանուն լինելու դեպքում մեր մատենագիրները տալիս են սովորաբար «հայացված» *Ղևոնդ* ձևը: Հմմտ. «... և ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղևոնդ և Կորիւն կարդային» (Խոր., III, Կ):

Համառոտ անդրադառնանք Ագաթանգեղոսի երկու այլ վկայության, որոնք որոշ պարզաբանման խնդիր ունեն:

«Եւ անդէն արկեալ նմա քուն զարմանալի, և հանեալ ոսկր ի կողից նորա՝ շինեաց զայն ի պատկեր կնոջ և կացոյց առաջի նորա» (275): Ագաթանգեղոսը նկատի ունի Աստվածաշնչի այն վկայությունը, որ Ադամին օգնական ունենալու համար «Շինեաց Տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին, և ած զնա առ Ադամ» (Ծննդ. Բ. 22): Շարունակության մեջ կարդում ենք. «*Սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ*» (Ծննդ. Բ. 23): Ինչպէս գրաբար, այնպէս էլ աշխարհաբար ու այլ լեզուներով թարգմանությամբ հստակորեն չի բացահայտվում «*կին*» անվանելու լեզվաբանական բացատրությունը: Աշխարհաբար թարգմանված է. «Թող սա կոչուի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծուեց», ռուս. «Она будет называться женою, ибо взято от мужа»:

Հարցի պարզաբանմանը օգնում է երբայական բնագիրը: Եբրայերենում *այր* և *կին* նույնարմատ բառեր են, այր՝ *iš*, կին՝ *išša* (*išša*) *a*-ն իզականակերտ ածանց է\*:

---

\* Եղիշեն իր «Մեկնութիւն արարածոց» գրքում ավելի մանրամասն է անդրադարձել կնոջ ոչ թե հողածին այլ «կողածին» խնդրին. «Եւ ընդէ՞ր ոչ ի հողոյ, իբր և զԱդամ»

«Պատմության» առաջաբանում Ագաթանգեղոսը, նշելով, որ իր պատմությունը գրում է թագավորական հրամանով, շարունակում է. «...զի ոչ եթէ կամօք ինչ յօժարեցաք հաւանել առնել զայս, այլ իբր ոչ կարի ինչ ընդդէմ մարթացեալ դառնալ արքայատուր հրամանացն, որչափ յուժի կայր՝ մարթացեալ ըստ հրամանացն պատմեսցուք: Եւ մեր զայս ջան յանձին կալեալ, *անկեալ ի վաճառականութիւն քանից*, առեալ զահ երկիւղի, և տուեալ զգեղեցկադիր յարմարումն պատմության ... ըստ օրինին, ըստ ժամանակին, ըստ իրացն եղելոցն, ըստ հրամանացն ի *վաճառ մատուցուք* (§ 7: Ընդգծումները մերն են – Լ.Ն.):

*Վաճառականութիւն քանից*-ը աշխարհաբար թարգմանված է «սկսենք *խոսքի վաճառականությունը*», իսկ *վաճառ մատուցուք*-ը՝ «*շարադրել*». «...ըստ օրէնքի, ժամանակի և մեր ստացած հրամանների շարադրենք: Իսկ ռուսերեն՝ «Взяв на себя этот труд мы приступим к торговле словом»<sup>7</sup>:

*Վաճառ, վաճառականութիւն* և *վաճառ* բառով բազմաթիվ կազմություններ գրաբարում առնչվում են *առևտուր* հասկացության հետ:

ՆՀԲ-ը *վաճառ* բացատրում է. «Տուրևառ» փոխանակութիւն իրաց ընդ ընչից, և իրք փոխանակելիք գնոց», *վաճառականութիւն*՝ «Գործ վաճառականաց. վաճառ, տուրևառ»: Երկու բառա-

---

հարցին պատասխանում է. «Զի մի համապատիւ իցէ, որպէս եւ ոչ հանգէտամանակ եւ ոչ համահասակ, այլ կրսեր եւ երկրորդ, զի հնազանդ յիցի Ադամայ եւ լուռ» (ՄՀ, Ա, էջ 785): Եղիշեն փորձում է պատասխանել աջ թե՛ ձախ կողմից ստեղծելու հարցին. «թուի թէ զձախոյ, զի ասեն թէ կող մի ավելի է կնոջն ի ձախն, բայց յորժամ Աստուած է արարիչ երկոքեանն աջոյ են» (ն.տ.): ՆՀԲ *հանգէտամանակ* «ժամանակակից» բառով բերում է միայն վերը նշված օրինակը:

<sup>7</sup> **Агатаңгелос**, *История Армении. перевод с древнеармянского*, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна, Ер., 2004, стр. 7:

հողվածներում էլ մի շարք այլ վկայությունների հետ բառարանը նշում է և Ագաթանգեղոսի՝ վերը բերված օրինակները:

Աշխարհաբար թարգմանության մեջ ծանոթագրվում է *խոսքի վաճառականություն* «Չպետք է բառացի հասկանալ. սակայված է հեղինակի ընտրած համեմատության հետ և նշանակում է խոսքի շարադրանք» (ծանոթ. – 1977 թ., հրատ. խմբագիրների) (էջ 508):

Փորձելով կապ տեսնել *վաճ(առ)* և *շարադրանք* բառերի միջև՝ կարելի է հիշյալ *վաճառ*-ի *վաճ* բաղադրիչը համարել իրան. *vač* «ձայն, խոսքը», սակայն հիմնավորման համար լուրջ փաստարկներ չկան\*:

Մնում է, ենթադրել, որ գրաբարում *վաճառ քանից* փոխաբերական իմաստով «շարադրել, խոսել» գործածական է եղել: Պատճենում է այն որևէ օտար լեզվից, թե հին հայերենի բարբառային երևույթ: Համենայնդեպս, նման կարգի մի օրինակ գտնում ենք Եզնիկի գրքում՝ *ծախել* հոմանիշով:

«Ըստ մերում տկարութեան ապաւինեալ յԱստուած շնորհսն մխել ի խնդիր ճառիցս... և *մեզ ոչ ի զուր ինչ գրանս ծախել*» (I, Ե) (ընդգծումը մերն է – Լ.Ն.): Ընդգծված նախադասությունը թարգմանված է «մենք էլ իզուր տեղը խոսքեր չենք վատնի»:

---

\* իրան. *vač* (*vak*) «խոսք» արմատով հայերենի իրանական փոխառությունների շարքում առկա են մի քանի բառեր՝ *գրուակ* «խոսք, զրույց», ամբարիաւած «ամբարտավան», նուաճ(ել)՝ բառացի՝ «խոսքի տակ զցել» ... նուաճել բառի ստուգաբանությունը տես **Է. Աղայան**, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 125-126:

### ԳԼՈՒԽ III

#### ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փավստոս Բուզանդի երկը առաջին փորձն է գրելու հայոց պատմություն<sup>1</sup>, որը իր մեջ պարունակեր նաև հինը: Այդպիսի մի երկ անհրաժեշտ է եղել 5-րդ դարում, երբ պետք էր ոչ միայն եկեղեցին ուժեղացնել, այլև ազգային աշխարհիկ քաղաքական ինքնագիտակցություն զարգացնել» (Աբեղյան, Երկեր, հ. Գ., էջ 192):

Մ. Աբեղյանը Բուզանդի «Պատմությունը» գնահատում է առաջին հերթին հայ ժողովրդի, ազնվականության, երկրի ներքին կյանքի, հասարակական տարբեր խավերի հարաբերությունը ներկայացնելու համար՝ հավելելով «մինչդեռ ներքին կյանքի ուսումնասիրության համար կարելի է ազատ կերպով օգտվել Փավստոսի ընծայած բազմակողմանի հարուստ նյութերից, նույնը կարելի չէ ասել անձերի ու դեպքերի, եղելությունների վերաբերմամբ... Հետևաբար կարելի չէ անվերապահորեն օգտվել նրանից իբրև մի պատմական ստույգ աղբյուրից» (ն.տ., էջ 196):

Բուզանդի գրքի լեզուն նույնպես արժանացել է տարաբնույթ գնահատումների: Ինչպես նշում է Վարազ Առաքելյանը, «Փավստոս Բուզանդի լեզուն և ոճը քամահրել են իբրև ոչ օրինակելի... դրա պատճառն այն է, որ Բուզանդը կեղծ բարեպաշտ չէ: Իրերը կոչում է իրենց անուններով և երբեմն այնքան առաջ է գնում, որ մինչև իսկ իրենց անուններով նկարագրում է անպատշաճ եղելություններ ու արարքներ: Բացի այդ հներին դուր չի եկել Փավստոսի պարզախոսությունը,

---

<sup>1</sup> Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց. (բնագիրը Զ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ.Մալխասյանցի), Ե., 1987:

ռամկական պատմելաձևը և լեզվական միջոցների օգտագործումը» (Առաքելյան, 1981, 160):

Իհարկե, անժխտելի է ժողովրդախոսակցական տարրերի առատությունը, և եթե ոմանք դա համարում են գրական լեզվից շեղում, ապա այն պետք է ընդունել վերապահորեն, որովհետև 5-րդ դարը հայ գրավոր, գրական լեզվի ձևավորման շրջանն էր, և դժվար է որոշել գրական-խոսակցական լեզվի սահմաններն ու դրանց առանձնացման չափանիշները:

Հայերենի զարգացման պատմության դիտակետից Բուզանդի երկը արժևորվում է նաև նրանով, որ մեզ են հասել V դարից (բնականաբար նաև ավելի վաղ շրջանից) գործածական ոճեր, դարձվածներ, լեզվի տարածքային տարբերակների բնորոշ բառեր:

Մեր հաշվումներով Բուզանդի «Պատմության» մեջ մոտ 100 բառ V դ. մատենագրության առաջին վկայություններն են (տե՛ս Հովհաննիսյան, 2006, 128-129):

Բուզանդի գրքում օտար բառեր շատ կան, որոնք հեղինակի կողմից չեն թարգմանվում կամ իմաստները չեն բացատրվում, այդ կարգի բառերից գերակշիռ են միջին իրանական լեզուներից անցած փոխառությունները:

Նկատելի են «թաքնված» մեկնություններ, որին կանդրադառնանք հետագա շարադրանքում: Ուշադրություն դարձնենք մի քանի բառերի (հիմնականում իրանական), որոնց վերաբերյալ հեղինակը դարձյալ որևէ բացատրություն չի տալիս. ուսումնասիրողների կողմից տարակարծություններ կան բառիմաստների, բառաձևերի հարցում:

**Բաշխիշ** - «Նոյնպես և ամենայն զօրացն տային բաշխիշ ի մեծամեծ աւարացն ածելոցն» (V, Բ): Մտ. Մալխասյանը, հաշվի առնելով Ն. Բյուզանդացու դիտարկումը, **բաշխիշը** ուղղում է



*բաշխել* (էջ 292), որովհետև «Փավստոսի լեզվում այսպիսի նոր  
ոամկաբանություն անընդունելի է» (էջ 439, ծան. 166):

*Բաշխիշ*-ը հինգերորդարյան եզակի վկայություն է:

Հ. Աճառյանը բառը համարում է իրան. փոխառություն՝  
պահլավերեն *baxšišn* ձևից «պարզև, նվեր, ընծա», ն.պրս. *baxšiš*,  
թրք. *baxšiš...* (Տե՛ս Արմ, *Բաշխիշ* բառահոդվածը):

Կարծում ենք *բաշխիշ* ձևի առկայությունը մերժելի չէ: Այն  
իրան. \**bag:baš* արմատի տարբերակն է՝ «բաժանել, պարզա-  
տրել, նվիրել» իմաստով (ՅՈւՅ, տ. 2, Մ., 2003, սրբ. 45): Այդ  
արմատներով բազմաթիվ բառեր կան նաև հայերենի իրանական  
փոխառությունների շարքում: *Բաժան(ել)* բառում էլ նշված  
արմատն է:

*Բաշխիշ*-ի երկրորդ բաղադրիչը իրան *išn* – արդյունավետ  
ածանցն է, որի հիմնական գործառույթներից մեկը բայահիմքե-  
րից գործողության անվանումներ (գոյականներ) կերտելն է.  
հմտ. *rēxtan, rēz* «հոսել, թափվել»-ից *rēzišn* «հոսանք» (ՕՈՅ, II,  
67): Եթե բառը հետագա գրչություն չէ, ճիշտ ձևը պետք է  
համարել *բաշխիշն*:

***Չինդկապետ*** (*զինդակապետ, զինդկապետ, զնդկապետ*  
տարբերակներով): Առաջին անգամ վկայել է Բուզանդը:  
«Յաղագս զինդկապետին, որ իննսուն բիրով եկն ի վերայ Հայոց  
թագաւորին... և սպանանէր զնդկապետն ի մէջ բանակին» (IV,  
ԽԳ): Բառը ՆՀԲ-ն չունի:

Հ. Աճառյանը, ելնելով համատեքստից, բառը մեկնում է  
որպես «պարսկական զօրապետական մի աստիճան», ավելաց-  
նելով՝ «Անշուշտ պիլ. \**zindākrat* ձևից է. սակայն այս բառը ո՛չ  
աւանդուած է իրանական գրականութեան մէջ, ո՛չ էլ կարող է  
ստուգաբանորէն մեկնուիլ»: Աճառյանը մերժում է այդ բառի  
ստուգաբանական փորձերը (Տե՛ս Արմ, *Չինդակապետ* բառա-  
հոդվածը):

Բառի իրանական բնույթը կասկածից դուրս է, ակնհայտ է նաև, որ այն ռազմական բնագավառին է վերաբերում:

Չանդրադառնալով նախորդ ուսումնասիրողների ստուգաբանություններին՝ առաջարկում ենք հետևյալ ստուգաբանությունը: Բառի առաջին բաղադրիչը *zand* (միջին իր. *znd-*)-ն է, որ նշանակում է «մարգ, շրջան» (տարածքային միավոր), ա-ն հոդակապ է, *պետ-* բառի ծագումն ու իմաստն էլ հասկանալի է, հիշենք, որ *պետ-*ը նույնպես իրանական փոխառություն է, ինչ վերաբերում է *կ-*ին, ապա ենթադրել է, որ այն իրանական *ig-* (*ik-*) ածանցն է՝ *i-*-ի սղմամբ:

Այդ ածանցը գործուն էր միջին իրանական լեզուներում և կազմում է հարաբերական ածականներ. հմմտ. *šahr* «երկիր, քաղաք, մարզ» - *šahrīg* «քաղաքացի» *zēndān* «բանտ, կալանատուն» - *zendānīg* «կալանավոր» (ՕИЯ, 1981, 69): Այս բնույթի հարաբերական ածականները ունեն նաև գոյականական իմաստ: Ուրեմն՝ *զինդկապետը* կնշանակի «տվյալ տարածքի գորքի՝ տարածքային (տարածքում տեղակայված) զորախմբի հրամանատար»:

Այդ ածանցով բառերից են նաև *պարսիկ*, *պահլավիկ*, *խուժիկ*, *վաշտիկ* (հնչյունափոխված՝ վաշտական), որոնք ամբողջական փոխառություններ են:

**Ժանու** - Այս բառը V դ. մատենագրության մեջ վկայել է միայն Բուզանդը. «Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ...» (IV, ԺԵ), «Բայց զկանայսն Շապիոյ թագաւորին Պարսից ոչ ումէք ինչ թոյլ տար Մուշեղ... անարգել ինչ զնոսս ումէք, այլ ժանուարս տայր նոցա և ...արձակէր» (V, Բ): Ստ. Մալխասյանը թարգմանում է՝ *ժանվարով* և ծանոթագրում, որ կա և աղավաղ ձևը՝ «ժանեալ»՝ «պատգարակի մի տեսակ, մարդիկ և իրեր փոխադրելու համար» (էջ 432, ծան. 109): ՆՀԲ-ում գլխաբառը *ժանու*- ձևով է, Արմ-ում՝ *ժանուար* «գահավորակ»:

Բառի իրանական բնույթը կասկած չի հարուցում, մանավանդ որ պարսկերենի *zambar* զուգահեռից գատ այն ենթադրում է իրան. \**janī* «կին» բառը, որը Հ. Բեյլին տեսնում է նաև հայերենում վկայված Ջնիկան բառում<sup>2</sup>:

Փոքր-ինչ ճշտման կարիք ունի բառիմաստը. այն ոչ թե «գահավորակ, պատգարակ» է ընդհանրապես, այլ «կանանց համար պատրաստված, նախատեսված պատգարակ, կամ գահավորակ»: Իմաստային այդ նրբերանգրը հուշում է *ժանու* բաղադրիչը: Վերը բերված օրինակները այդ են հաստատում, այդ է հաստատում նաև շատ ուշ շրջանից վկայված հետևյալ օրինակը. «Իսկ տաճիկքն կալեալ զերանելի կոյսն մերթ ի քարշ, մերթ ի յոտին, և տարեալ մուծին ի ժանուարն»<sup>3</sup>

*Ճեմիշն* - «Եթե յորժամ գիտիցես թե քաջ արբեալ իցէ և գմտօք գառանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես հարուցեալ իբրև ի ճեմիշն երթալոյ պատճառաւ և դուք պատեսչիք գնովաւ» (V, ԼԵ): Վարագդատ թագավորը, որոշելով սպանել Մուշեղին, վերջինիս հրավիրում է խնջույքի՝ նախօրոք պայմանավորված լինելով զինված մարդկանց հետ, որ երբ Մուշեղը հարբի և սկսի գառանցել, ինքը զուգարան գնալու պատրվակով դուրս կգա, և դա նշան կլինի, որ հարձակվեն և սպանեն սպարապետին:

*Ճեմիշն* իրանական փոխառություն է և նշանակում է «արտաքնոց, զուգարան»:

Աճառյանը, ընդունելով բառի իրանական ծագումը, որպես զուգահեռ վկայակոչում է պրս. *čašma*-ն, «որ բուն նշանակում է

---

<sup>2</sup> Ավելի մանրամասն տե՛ս Եղիշեի վկայած Ջնիկան բառին վերաբերող շարադրանքում: Հայերենում փոխառյալ *Ջնի(կան)* և *ժանու(ար)* նույնիմաստ, բայց տարաձև արմատները լրացուցիչ փաստեր են՝ իրանական լեզուներում հնչյունափոխական օրինաչափությունների վերհանման առումով:

<sup>3</sup> Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հտ II, էջ 128:

«աղբիւր» և երևի փխբ. նշանակում է նաև «արտաքնոց» (Տե՛ս Արմ, *ճեմիշ* բառահոդվածը): Աճառյանը պահլավերեն ձևը համարում է «անհայտ»: Սակայն բառը առկա է միջին պարսկերենում՝ čamišn «միզելը, զուգարան» (Տե՛ս MacKenzie, 21):

Գրաբարի բառարաններում (ՆՀԲ, ԱԲ, Արմ) *ճեմիշ* գլխաբառն է, որը պետք է ուղղել՝ *ճեմիշն*:

**Մարդպետ** – Բառը 5-րդ դարի հեղինակների գործերում հաճախական չէ: Այն չկա Կորյունի, Եզնիկի, Ագաթանգեղոսի, Եղիշեի աշխատություններում: Փարպեցին և Խորենացին վկայել են մեկական օրինակ: Բուզանդի գրքում *մարդպետ* վկայված է 27 անգամ, հաճախական է նաև *հայր մարդպետ* բառակապակցությունը: Բերենք մեկ օրինակ. «Ապա կոչեալ եղև առ նա Հայր Մարդպետն իբրև ի պատիւ մեծարանաց, եկն եմուտ Մարդպետն ի բերդն յՈղական» (V, Գ): Գրաբար տեքստում երկու բաղադրիչներն էլ մեծատառով են, իսկ աշխարհաբար թարգմանության մեջ՝ միայն *Հայր*-ը:

*Մարդպետ*-ը ՆՀԲ-ը մեկնում է «պետ կնոջ մարդոյ, կամ մարց պետ. Կամ մարզպետ՝ վարժապետ կանանց. այն է ներքինապետ»: Ըստ Արմ-ի՝ «ներքինապետ Հայոց արքունեաց»:

*Մարդ* բաղադրիչը իրանական մի ցեղի անվանում է, որը Հայաստան գալով զբաղվում էր ավազակությամբ: «Հայոց մեջ սրանց բնակած գաւառը կոչուեց *Մարդաստան*, ժողովուրդը՝ Մարդացիք, իսկ իրենց գլխաւորը (որ է Մարդոց ցեղապետը) անցնելով պալատական ներքինապետութեան պաշտօնին, *մարդպետ* բառն էլ դարձաւ հոմանիշ «ներքինապետ» բառին (Աճառյանը հղում է Ադոնցին): Բուզանդի Պատմության թարգմանիչը՝ Ստ. Մալխասյանը, ծանոթագրում է, որ «հայր» հատուկ անուն չէ, այլ ամեն մի ներքինապետի հարգական կոչում. միայն մի ներքինապետի հատուկ անուն է պահպանել

Փավստոս – դա Դրաստամատն է, որը հիշում է նա Ե., Է գլխում (Էջ 426, ծան. 54):

Նկատենք, որ Բուզանդը Դրաստամատին «ներքինապետ» չի համարում, այլ «ներքինի»։ «Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ...: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի, որ ի կողմանս յայնս» (V, Է):

Գրաբարի բառարանները նշում են բառի միայն «ներքինապետ» նշանակությունը, այնինչ Հայաստանում մարդպետությունը տնտեսական, ռազմական ուժեղ կառույց էր: Մարդպետները ունեին հսկայական կալվածքներ, ռազմական միավորումներ:

*Մարդպետ* իր բովանդակային կողմով ավելի նման է *պետ* բաղադրիչով մարդպետ, գաւառապետ, դեհպետ, տիտղոսներին: Դա ակնհայտորեն զգացվում է վերը բերված օրինակից, ինչպես նաև Բուզանդի «Պատմության» հետևյալ հատվածից. «Յաղագս Դղակայ մարդպետի՝ գոր կացուցին սահմանակալ... Եւ մնաց առ նմա երեսուն հազար ընտիր ընտիրք նիզակաւորք...» (V, Զ):

Նման օրինակներ կան նաև այլ հեղինակների գործերում: «Եւ սուրբն Վարդան տէրն Մամիկոնէից... միջոցի գնդին կարգեր գլխաւոր գտերն Արծրունեաց և զմարդպետն Միհրշապուհ...» (Փարպ., ԼԹ), «...առաքեաց... և զՊաճոկ ի Մարդապետական գնդէն» (Փարպ., Ղ): «Եւ այլ գունդք ի զօրացն Մարդպետական այրուձիոյ» (ԼԴ):

Ըստ Ն. Ադոնցի «Մարդպետը տոհմական-իշխանական տիտղոս է և ոչ մի առնչություն չունի, առհասարակ, պաշտոնի հետ: Մարդպետ-իշխանը ըստ պաշտոնի կոչվում էր թագավորի հայր..., ուստի և *մարդպետություն* և *հայրություն* գործ են անվում

որպես համանիշ հասկացություններ: Թե իրականում ի՞նչ է նշանակում այդ բարձրագույն կոչումը, անհայտ է, գիտենք միայն, որ մարդպետի պարտականությունների մեջ էին մտնում արքունի գանձերի և այն բերդերի տնօրինությունը, որտեղ դրանք պահվում էին»<sup>4</sup>:

Ինչպես վերը նշել ենք, Խորենացին *Մարդպետ* վկայել է մեկ անգամ. «Տեսեալ զայս Տիրանայ և յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր, և հանդերձ երդմամբ կոչէ առ ինքն զԶօրայ» (III, ԺԵ): Այս օրինակում էլ չի զգացվում հայր Մարդպետի կապը ներքինության կամ ներքինապետության հետ:

Խորենացու այս վկայության ծանոթագրության մեջ Ռ. Թոմսոնը մարդպետին վերագրում է. «պալատական բարձր պաշտոնյա, սենեկապետ» իմաստները, բայց չի նշում «հարեմի վերակացու» իմաստը [Thomson, էջ 265, ծան. 90]:

Ժ. Մահեն, բնագրից շեղվելով, հավելում է «ներքինապետ» բառը. «Tiran... envoie son chef des eunuques, appelé Haïr...» (Mahé, 261):

Մի խոսքով *մարդպետը* իշխանական տիտղոս է:

Իրանագետ Հ. Բեյլին, հաշվի առնելով իրանական լեզուներում նկատված d>z հնչյունափոխական երևույթը, ենթադրում է, որ իրան. marza-ն իրանի որոշ բարբառներում կարող է ունեցած լինել marda – ձևը, որը առկա է հայերենում փոխառյալ *մարդպետ* բառում (TPS, 1956):

Ուրեմն՝ մարզպան, մարզպանութիւն, մարզպետ և մարդպետ, մարդպետական, մարդպետութիւն բառերի առաջին բաղադրիչները նույնարմատ բառեր են, ավելի ճիշտ նույն արմատի տարբերակներ: Իսկ այդ հասկացությունների

---

<sup>4</sup> Ն.Ադոնց, *Հայաստանը Հուստիանոսի դարաշրջանում*, Ե., 1987, էջ 499:

բովանդակային ընդհանրությունը հաստատվում է վերը նշված և նման կարգի այլ օրինակներով:

**Շաւակի** - «Եւ հրաման տայր հոլանել զամենայն ազատ կանանին, և նստուցանել աստի անտի ասպարիսին, և ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շաւակի անցանէր առ կանանովն և որ յակն գային, մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն...» (IV, ԾԸ):

ՆՀԲ-ում բառի միակ վկայությունն է՝ «Բառ անյայտ. Իբր Արշաւակի և կամ որպէս այլազգ «փառք կամ ցոփութիւն»:

ՆՀԲ-ը արշաւակի-ն մեկնում է «արշաւակի, յարշաւս, արագ ընթացիւք վազելով», ԱԲ-ն՝ «վազելով»:

Արմ-ը *շաւակի*-ն համարում է գրչագրի սխալ «որ պէտք է կարդալ *արշաւակի*» (Տե՛ս Արմ. *Արշաւ* բառահոդվածը): Ստ. Մալխասյանը *շաւակի*-ն թարգմանել է «արշավելով»: «Իսկ ինքը Շապուհը ձի հեծած, արշավելով անցնում էր կանանց միջով, և որոնք որ աչքին դուր էին գալիս՝ մեկ-մեկ տանում էր իր մոտ պիղծ խառնակության...»:

Համատեքստի բովանդակությունը հուշում է, որ *շաւակի*-ն *արշավակի* թարգմանելը տրամաբանական չէ: (Շապուհը ձիով արշավելով չէր կարող ընտրել իրեն դուր եկած կանանց):

*Շաւակ*-ին սխալագրություն չպէտք է համարել: Միջին պրս. կա (šudan) šaw- «շարժվել», «գնալ»<sup>5</sup>: Šaw-ը տարբեր նախածանցներով (ձևությամբ) կազմությունները ունեն տարբեր իմաստներ՝ արշաւը՝ միջ. պրս. \*aδšāw «արշավ», *ապաշաւ*-ը՝ \*apašāw «զոջում»:

Ուրեմն՝ վերը բերված օրինակի «հեծեալ ի ձի, շաւակի անցանէր» պէտք է թարգմանել «ձի հեծած գնում էր...»:

---

<sup>5</sup> D.MacKenzie, A concise Pahlavi dictionary, London, 1971.

*Շաւակի*-ն ամենայն հավանականությամբ հայակազմություն է իրան. *šaw+ակի* (մակբայակերտ ածանց):

***Տապրիկ*** – Բառը կա Բուզանդի «Պատմության» չորրորդ դպրության ԻԹ գլխի վերնագրում. «Յաղագս Դմաւունդ Վսեմականայ, որ իննսուն բիրուն տապրիկ գորօքն՝ գոր առաքեաց ի վերայ Արշակայ արքային Հայոց»: Եզակի վկայություն է: Բառի վերաբերյալ կան տարբեր մեկնություններ: Հ. Աճառյանը այն համարում է անստույգ նորագյուտ բառ, թերևս հատուկ անուն (տե՛ս Արմ, *տապրիկ* բառահողվածը): Հայկազյան բառարաններում *տապրիկ* չկա. թերևս բառարանագիրներն էլ այն համարել են հատուկ անուն:

Ստ. Մալխասյանը *տապրիկ գորօք*-ը թարգմանում է Տապարիստանի գորքով և ծանոթագրում, որ Տապարիստանը պարսկական նահանգ էր: «Տապարիստանը պարսկական նահանգ էր նախկին Մարաստանում» (Տե՛ս ծան. 132): Վ. Առաքելյանը, հիմք ընդունելով ձեռագրերից մեկում *տապրիկ*-ի փոխարեն *պատրիկ* ձևը, կարծում էր, որ գործ ունենք դրափոխության հետ՝ *պատրիկ-տապարիկ*՝ և հավելում, որ «առանց կասկածելու *տապրիկ* բառը պետք է դուրս հանել Արմատականից»<sup>6</sup>:

Կարծում ենք՝ Վ. Առաքելյանի բացատրությունը այնքան էլ համոզիչ չէ: Ավելի հավանական է, որ *տապրիկ*-ը գորամիավորման տեսակ է՝ *տապար* բառից, այսինքն՝ «տապարակիր գորքով»: (Բուզանդի գրքում կան մի շարք այլ գորատեսակների անվանումներ):

*Տապար*-ը, բացի «կացին, փայտ կտրելու գործիք» իմաստից, նաև զենքի տեսակի անվանում է. ըստ ՆՀԲ-ի

---

<sup>6</sup> Վ. Առաքելյան, *Փավստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը* (ՀՍՍՌ ԳԱ ակադեմիա, Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտ, աշխատությունների ժողովածու, հատոր III, Ե., 1948 թ., էջ 321:



«զինուորական գործի տապարաձև՝ միասայրի կամ երկսայրի. Սակր»: Հուն. *πέλεκϋσ*-ը նշանակում է «կացին և սակր»:

*Տապար*-ը իրանական փոխառություն է՝ «կացին, սակր», իսկ Բուզանդի հիշյալ վերնագրում հենց իրանական գորատեսակի անվանումն է:

### **Ներքոնշյալ բառերը իրանական փոխառություններ չեն.**

***Արքիդիակոն*** - «Եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յդեաց զիւր աթոռակիցն զԽադ, և զիւր արքիդիակոնն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր» (IV, ԺԵ): Այս բառի բացատրությունը գտնում ենք պատմության VI դպրության հետևյալ հատվածում. «Իսկ առ մեծին քահանայապետին Ներսէսի էր լեալ *սարկաւազապետ*» (ԺԶ):

ՆՀԲ-ը *արքիդիակոն* իրավացիորեն համարում է հուն. բառ, որ նշանակում է սարկավազապետ, ավագ սարկավագ: ՆՀԲ-ի միակ օրինակը Բուզանդից է, իսկ *սարկաւազապետ* բառով Բուզանդի վկայությունը չի նշում:

Այս բառի առաջին գործածությունը թերևս Բուզանդինն է: Բառը չկա Աստվածաշնչում, Կորյունի, Եզնիկի, Ագաթանգեղոսի, Փարպեցու գործերում: Բացի Բուզանդից՝ եզակի վկայություն կա Խորենացու «Պատմության» մեջ: «Բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւազապետին... տարեալ հանգուցին յիւրեանց զիւղն յԱշտիշատ» (III, ԿԷ):

***Էնկումիա*** - «Ապա ձեռնադրեցին զնա, և հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէին զնա, և բազումք ասէին նմա էնկումիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանգեալ ի սա» (IV, Դ): Բառը վկայել է միայն Բուզանդը: «Հոգի սուրբ հանգեալ ի սա»-ն, *էնկումիա*-ի թարգմանություն-մեկնությունը չէ: Հունարեն բառ է, նշանակում է «ներբողներ, գովեստ»:

**Պարեգոտ – անակիւղ** «... ագաւ նա պարեգոտ մի՝ գոր անակիւղս կոչեն, և էած գօտի ընդ մէջ իւր» (IV, ԾԹ):

ՆՀԲ-ում *անակիւղ* գլխաբառն է, բայց նշվում է, որ գրվում է նաև *անակիւղ*: «Ազգ ինչ հանդերձից, կամ պարեգօտի»: Ըստ Արմ-ի՝ Անակիւղ՝ «մի տեսակ կարճ պարեգօտ»: Բառարանների միակ վկայությունը վերոհիշյալ օրինակն է: Անակիւղ-ը հունարենից կատարված փոխառություն է: Հուն. *ἀνάκωλος* «կարճասարուն» (Արմ): Հ. Աճառյանը երկու ձևերից ճիշտը համարում է *անակիւղ*-ը, «որ պետք է կարդալ *անակող*: Նկատելի է նաև բառի ծայրի u ձայնը, որ չի կարող յոգնակի հայցականի նշան լինել, ուստի աւելի լաւ է համարել յն. բառի վերջածայնը, որով բառը կուղղուի և կդառնայ *\*անակողոս* կամ *\*անակովղոս*»:

Բուզանդը ոչ թե թարգմանում կամ մեկնում է *պարեգօտ*-ը, այլ նշում է նրա կարճասարուն լինելը:

Արմ-ում *պարեգօտ*-ը համարվում է իրանական փոխառություն: Այդ ստուգաբանությունը ընդունում է նաև Գ. Ջահուկյանը: Է. Աղայանը բառը համարում է բուն հայկական կազմություն՝ պարե-գօտ կամ պարի-ա-գօտ և ենթադրում է, որ իրանական լեզուները փոխառել են հայերենից: Նա *գօտ*-ը նույնպես հայերեն բառ է համարում<sup>7</sup>: Է. Աղայանի ստուգաբանությունը ավելի համոզիչ է: Բառարանները ճիշտ են համարում պարեգօտ (պարեգաւտ) ձևը:

\*

\* \*

Բուզանդի պատմության լեզվաոճական առանձնահատկություններից մեկը հոմանշային բառաշարքերն են. «Բուզանդը,

---

<sup>7</sup> Է. Աղայան, *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 132-135, 48, 50:

իբրև ժողովրդական խոսքի սիրահար, առատորեն օգտվում է բառական հավելադրություններից, որոնք երբեմն քառաստիճան են դառնում: Բանօգտագործման այս եղանակը ոճական առումով պարզունակ է և մինչև իսկ հասարակ ու նախնական: Երկու, երեք, չորս համանիշ կիրառվում են մի նշանակության համար, որից առաջանում է ձևի և իմաստի անհամաչափություն, տարբեր ձևերի նպատակագուրկ կրկնություն, բազմաբառությամբ բնագրի ավելորդ ծանրաբեռնում» (Առաքելյան, 1981, 162):

Լեզվաբանի այս գնահատականը, թվում է, չափազանց խիստ է: Լեզվական այդ յուրահատկությունը Բուզանդի մտածողության ձևն է, որն ավելի ընդգծված է, քան 5-րդ դարի այլ հեղինակների մոտ: Պետք է տեսնել նաև դրականը: Հումանիշների առատությունը արժեքավոր տեղեկություն է նախ և առաջ պատմական բառագիտության առումով: Շարքերի միավորների մեջ կան ինչպես գրական, այնպես էլ ժողովրդախոսակցական շերտին պատկանող բառեր, որոնց թվում կարող են լինել տարածքային-խոսվածքային տարբերակներ՝ կարևոր փաստեր պատմական բարբառագիտության համար: Բառերի շարքերը գրաբարի հումանիշների բառարանների նմուշներ են, իսկ որոշ շարքեր՝ երկլեզվյան բառարանների: Եվ, վերջապես, դրանք բառերի մեկնություններ են:

Վ. Առաքելյանի՝ վերը բերված մեջբերման շարունակության մեջ նույնպես շեշտվում է հումանիշների դրական կողմը. «Այդ միջոցը հաճախ օգնում է վերականգնելու հնացած և մթագնված բառերի իմաստը, կամ ընթերցողին օգնում է հազվագյուտ ու անձանոթ, երբեմն էլ օտար բառերի իմաստը հասկանալու»:

Բերենք այդ կարգի «մեկնություններից» օրինակներ՝ որոշ դիտարկումներով:

**Գաղատոս- որմնաշեն** – «Զի կալեալս կապեալս տարցուք... ի գործ կաւագործութեան գաղատոս որմնաշենս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից» (V, Դ): *Գաղատոս* նշանակում է «քարտաշ, որմնադիր»: Բառը գրաբարում հաճախական չէ. երկու անգամ վկայված է Աստվածաշնչում:

Այդ բառով 5-րդ դ. գրաբարում այլ կազմություններ չկան: *Գաղատոսաշեն*-ը ըստ ՆՀԲ-ի միակ վկայությունն է միջինհայերենյան շրջանից:

*Գաղատոս*-ը փոխառյալ բառ է, որը կա և վրացերենում. Աճառյանի կարծիքով հայերենը և վրացերենը փոխառել են մի այլ լեզվից, «որովհետև ո՛չ հայերենը, և ո՛չ վրացերենը բնիկ բառի երևոյթ չունին»: Գ. Ջահուկյանի կարծիքով բառը (հայերենում և վրացերենում) «ծագում է փոքրասիական գալերի (գալատների, կելտերի) անունից» (ՀՄԲ, 146):

Առարկելի է և *որմնաշեն* ձևը (կարող է լինել տպագրական սխալ): ՆՀԲ-ում և ԱԲ-ում *որմնաշեն* է: *Որմ-* արմատով բոլոր կազմությունները ՆՀԲ-ում առանց ն-ի են. հմմտ. *որմածակ, որմակալ, որմակից, որմաշեն, որմարզել...*:

**Կուսակալք-կողմակալք-գաւառատեարք**- «Եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսես, մեծամեծ նախարարք և կուսակալք, կողմակալք, գաւառատեարք...» (IV, ԾԱ, 248): Ընդգծված բառերը նույնանիշներ են: *Կուսակալի* առաջին բաղադրիչը՝ կոյս «կողմ» բառն է, որը իրանական փոխառություն է, իսկ կողմ(ն)՝ բնիկ հայերեն:

Գրաբարում վկայված է և *կողմնակալ* ձևը: Սակայն բարդություններում բացառելի չպետք է համարել *կողմ-* բաղադրիչի առկայությունը, որով մի շարք կազմություններ կան նաև արդի գրական լեզվում ու որոշ բարբառներում: ՆՀԲ-ում արձանագրված են *կողմակալ* և *կողմնակալ* բառերը:

Ըստ Համաբարբառի տվյալների՝ Բուզանդի գրքում *կողմ*-ով երկու վկայություն կա, իսկ *կողմն*-ով՝ 67<sup>8</sup>:

**Մազդեզանցն-մոզուցն-** «... զի եթող զօրէնս քրիստոնէութեան... և կալաւ զօրէնս մազդեզանցն, այսինքն զմոզուցն» (IV, ԻԳ): Զրադաշտական կրոնին վերաբերող բառեր են: *Օրէն* բառն էլ այս համատեքստում ունի «կրոն» իմաստը:

*Մազդեզները* և *մոզերը* զրադաշտական կրոնի գիտակներն են (ՆՀԲ-ում նաև հոմանիշներ): *Մոզ*-ը գրաբարում հաճախական է և բազմիմաստ. ունի նաև «մարգարէ», «սուտ գուշակ», «հմայող», «աստղագետ» իմաստները: Բուզանդը, անշուշտ, տեղյակ էր բառի բազմիմաստությանը, և որպէսզի շեշտէր զրադաշտական կրոնին վերաբերելը, «զօրէնս զմոզուցն»-ից հետո հավելում է «եպակ արեգական և կրակ», ինչը բնորոշ է զրադաշտականներին:

5րդ դարում պրս. *մոզ*-ի իմաստը հասկանալի էր բոլորին, իսկ *մազդեզն*-ը՝ միայն որոշակի գիտական մակարդակ և գիտելիքներ ունեցող անձանց. հենց այդ պատճառով էլ Բուզանդը բացատրում է վերջինիս բառիմաստը:

**Ոստիկան-վերակացու-** «Եւ անդէն յերկիրն Հայոց ոստիկանս թողին և վերակացուս» (IV, ԾԵ):

*Ոստիկան*-ը նույնպէս գրաբարում բազմիմաստ է. ՆՀԲ-ը նշում է հետևյալ իմաստները. «վերակացու, տեսուչ, դիտապետ, իշխան, գլխաւոր, հրամանատար, կուսակալ»՝ նկատելով նաև որ «ի պատմութիւնս հայոց *ոստիկան* կոչին կուսակալք եկեալք ի հագարացոց, որպէս երբեմն մարգպան կոչէին պարսիկքն»:

*Վերակացու-ոստիկան*-ով մեկ այլ օրինակ ևս ունի Բուզանդը. «...զմնացեալսն ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց թողուին» (V, ԺԶ): Ն. Ադոնցը

---

<sup>8</sup> Տե՛ս *Հայկական համաբարբառ*, Բուզանդ, հ. 2, Ե., 1976, էջ 285-287:

գրում է, որ այս հաղորդման մեջ *նստիկան*-ի բառիմաստը բացահայտում է *վերակացու* բառը<sup>9</sup>:

*Ոստիկան* բառը իրանական ծագում ունի, պիլ. *ōstikān* (*ōstigan*) «հավատարիմ, վստահելի» (Արմ), պահլավերենի բառարաններում՝ «հիմնավոր, հաստատուն, հնազանդ» (Նալբանդյան, 1994, MacKenzie, 65): Պաշտոններ ցույց տվող իմաստները միայն հայերենում են: Հայերենը իրանական բառաձևի մեջ ներառել է բոլորովին նոր իմաստներ: Փոխառությունների շարքում սա յուրօրինակ երևույթ է, և հարց է առաջանում. բառը դիտել որպես փոխառություն, թե՞ ոչ: Կարծում ենք՝ ոչ:

*Որթողոքս-ուղղահալատ*- «Եւ ետ հրաման՝ զի զԵւսեբիոս արկանել ի բանդ, և ընդ նմա զբազումս, և նեղութիւն ի վերայ ուղղահալատ որթողոքսաց քրիստոնէից հասուցանէր» (IV, Ը): Շարքի առաջին անդամը հունարեն է և նշանակում է «ուղղափառ»:

*Պողոտայ-ճանապարհ*- «Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին և ոչ կցեցին ի միմեանս պողոտայի ճանապարհին» (III, Ը):

ՆՀԲ-ը *պողոտայ* բառին վերագրում է մի քանի իմաստ՝ ավելացնելով «բայց վարի ի մեզ և որպէս Ուղի, արահետ, ճանապարհ արքունի: ՆՀԲ-ը բերում է վկայություն Ագաթանգեղոսից. «Պահէին զամենայն անցս ճանապարհաց պողոտայցն»:

*Պողոտայ, ճանապարհ* բառերը փոխառություններ են տարբեր լեզուներից: Ժողովրդական լեզվում թերևս տարածված էր *ճանապարհ* բառը: Այդ է հաստատում և վիճակագրությունը: Բուզանդը *պողոտայ* գործածել է 2 անգամ, *ճանապարհ*՝ 30:

---

<sup>9</sup> Ն.Ադոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, Ե., 1987, 54:

**Ռոճիկ-կերակուր-** «... և այնչափ խորշել և մերժել յանպիտոյիցս, մինչև զկերակուրս աւուրն ռոճկին արհամարհել» (IV, Ե): *Ռոճիկ*-ը իրանական փոխառություն է: Իրանական աղբյուրներում վկայված է rōzīg «օրվա սնունդ, պարեն» ձևով (MacKenzie, 72), rōč, ruz «օր» հնչյունական տարբերակն են: Բուզանդը, անշուշտ, գիտեր պրս. rōč «օր» իմաստը, և «զկերակուրս աւուրն» *ռոճիկի* ձիշտ մեկնություն է:

**Սատրապ-նախարար-** «Ապա ի մի ժողով կուտեացն առ արքայն Արշակ մեծամեծ նահապետի... ամենայն սատրապ նախարարք... (IV, Բ): Երկու բառերն էլ փոխառություններ են՝ *սատրապ*-ը հունարենից, *նախարար*-ը՝ պարսկերենից: Վերջինս հաճախական գործածություն ունի, նաև բառակազմական գործուն բաղադրիչ է՝ (նախարարագունդ, նախարարագն, նախարարական, նախարարակոյտ, նախարարապետ... և այլն): Բուզանդի գրքում *նախարար*-ը վկայված է 75 անգամ, *սատրապ*-ը՝ 4: 5-րդ դ. *սատրապ* բաղադրիչով կազմություններ չկան (ՆՀԲ-ի նշած օրինակները առարկելի են):

*Սատրապ*-ը Բուզանդը մեկնում է հայերենում հասկանալի *նախարար* բառով:

**Սոփեստես-ճարտար-** «Եւ պատժեցին նմա, զի էր այր մի սոփեստես ճարտար ի քաղաքի միոջ» (V, Ժ): Երկու բառերն էլ փոխառություններ են:

Հունարենում բառը ունի «զիտակ, տեղյակ, վարպետ, սոֆիստ (փիլիսոփա)... իմաստները: *Ճարտար*-ը ըստ Արմ-ի նշանակում է «վարպետ, արուեստագետ, 2. քերթող, իմաստասեր, 3. լաւ, հմտորեն»: Ինչպէս տեսնում ենք, երկու բառերի հոմանշությունը ակնհայտ է: Սակայն դրանք տարբերվում են գործածության հաճախականության և բառակազմական հնարավորությունների տեսանկյունից:

*Սոփեստես*-ը V դ. հայ ինքնուրույն գրականության մեջ օգտագործել է թերևս միայն Բուզանդը (14 անգամ): ՆՀԲ-ը այլ հեղինակներից վկայված օրինակ չի նշում: *Սոփեստ* բաղադրիչով ՆՀԲ-ը վկայում է միայն *սոփեստություն* կազմությունը:

Բնականաբար, հուն. բառը անհասկանալի կլիներ հայ ընթերցողի համար, այդ պատճառով էլ հեղինակը տալիս է «ճարտար» բացատրությունը:

Արդի հայերենում *սոփեստ*, *սոփեստություն* գործածվում են «իմաստակ, թերուս, բայց իրեն զիտուն ներկայացնող մարդ» իմաստներով: Բացառելի չպետք է համարել, որ նշված իմաստներով գործածություններ եղել են շատ ավելի վաղ:

Հին հունարենում, սկսած Պլատոնից, σοφιστής-ը ուներ նաև «կեղծ փիլիսոփա, шарлатан» իմաստները (Дворецкий, II, 1491):

*Ճարտար*-ը իրանկան փոխառություն է և հայերենում ձեռք է բերել նոր իմաստներ:

*Ճարտար* բաղադրիչով գրաբարում կազմվել են մի շարք բառեր. *ճարտարաբան*, *ճարտարասան* (որից՝ *ճարտասան*)..., *ճարտարաբանել*, *ճարտարաբանություն*, *ճարտարաբար*, *ճարտարագէտ*, *ճարտարագործ*, *ճարտարադէտ*, *ճարտարագգեստեալ*, *ճարտարալեզուություն*, .....*ճարտարապետ*, *ճարտարեմ*... և այլն:

***Սպարակիր-Վահանաւոր***- «Ի լեզեոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն Հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին» (V, Ե): *Սպար* և *վահան* հոմանիշներ են: Գրաբարում ավելի հաճախական է *ասպար*, իրան. \*aspar ձևը: (*Սպարակիր*, *սպարապետ* բառերի *սպար*-ը տարբեր արմատներ են (համանուններ): Գրաբարում *ասպար* բաղադրիչով են կազմված *ասպարաբեկ*, *ասպարակող*, *ասպարաւոր*, *ասպարափակ*, *ասպարել*, *գերասպարել*... բառերը:



*Քաղեայ-աստեղագետ*- «Իսկ ի վաղիս անդր ժողովեցան եկին ամենայն քաղեայքն և աստեղագետքն» (IV, ԾԴ): *Քաղեայ*-ն «աստղագուշակ, հմայող» հանդիպում է նաև *քաղդեայ* ձևով, որը ճշտորեն ներկայացնում է ասոր. xaldāyā ձևը: *Քաղդեայ-քաղեայ* բառաձևերում անբացատրելի է դ-ւ հնչյունավիճակությունը:

\*

\* \*

Բուզանդի գրքում այս կարգի բառերի յուրահատուկ բացատրության օրինակներ շատ կան: Նկատելի է, որ հիմնականում մեկնվող բառը հոմանիշային շարքի առաջին անդամն է:

Հոմանիշների գործածությունը բնորոշ է նաև հունարենից կատարված թարգմանություններին. «Հունարեն մեկ բառին համապատասխանող գույգերը մեծ մասամբ հոմանիշներ են կամ հունարեն բառի տարբեր իմաստներ արտահայտող բառեր, երբեմն էլ մեկը լրացնում է մյուսին»<sup>10</sup>: Գ. Մուրադյանը բազմաթիվ օպինակներ է բերում Աստվածաշնչից, ինչպես նաև 5-րդ դ. թարգմանական այլ գործերից:

---

<sup>10</sup> Գ.Մուրադյան, *Հունարանությունները դասական հայերենում*, Ե., 2010, 213-216:

## ԳԼՈՒԽ IV

### ԵՂԻՇԵԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### I Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին<sup>1</sup>

Այս գրքի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցում քննվում են ինչպես բովանդակային, գաղափարախոսական, այնպես էլ հեղինակի լեզվի և ոճին առնչվող հարցեր: «Գիրքը հավաստի դյուցազներգությունն է դյուցազնական մի ճակատագրական գոտեմարտի, որ հայ ժողովուրդը ձեռնարկել էր լինել-չլինելու երկընտրանքի առջև վճռականորեն կանգնած: Եվ գիրքը գրված է այդ ողբերգական ժամանակը ապրած հայ ժողովրդի բոլոր խավերի կյանքը, կենցաղը, մտածումները, պատմական պահին առնչվող վերաբերումները ուսումնասիրած, միաժամանակ իր համակրանքներն ու հակակրանքները բացարձակորեն դրսևորող ժամանակակից մարդու ձեռքով, որը V դարի գրական լեզուն կերտողներից մեկն է» (Առաքելյան, 1981, էջ 192):

Եղիշեի գրքի աշխարհաբար թարգմանության ծանոթագրությունների շարքում կան նաև բառերի բացատրություններ<sup>2</sup>:

Կրկնությունից խուսափելու համար կանդրադառնանք միայն մի քանի բառերի՝ առկա մեկնաբանությունների լրացումներով:

Ակնհայտորեն մեծաթիվ են իրանական իրականությանը վերաբերող բառերը:

---

<sup>1</sup> Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց. աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Ե., 1957:

<sup>2</sup> Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին. թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989:

*Ապար աշխարհ* – Այս տեղանունը Եղիշեի գրքում կիրառված է չորս անգամ. բերենք երկու օրինակ. «Եւ կատարեցան սոքա վեցեքեան... ի մեծ անապատին յԱպար աշխարհի, ի սահմանս Նիւշապուռի քաղաքի» (182): «Քանզի իշխան դենպետ էր Ապար աշխարհին» (143): Այս և մնացած օրինակներում *Ապար*-ի բացատրություն չկա:

Գրքի մեկ այլ բաժնում նույն տեղանունը Եղիշեն անվանում է *Վերին աշխարհ*. «... զի ոչ դուզնաքեայ ոք խոտորեցաւ ի նոցա օրէնսն, այլ այր մի համակդէն, երևելի ընդ ամենայն Վերին աշխարհս» (158):

Ե. Տեր-Մինասյանը ծանոթագրում է. «Բառացի թարգմանությունն է Ապար աշխարհի կամ Ապրշահիի»: Բառի առաջին բաղադրիչը միջին պարսկերէնում abar «վերին, բարձր» բառն է (MacKenzie, 1):

Եղիշեի գրքում վկայված են իրանական գրադաշտական կրոնին վերաբերող բազմաթիվ բառեր, որոնց զգալի մասը չի մեկնաբանում: Իրանական իրականությանը վերաբերող բառերը կարևորվում են ստուգաբանության, իրանական տարբեր լեզուներից փոխառելու, ինչպես նաև բուն իրանական կրոնագիտության որոշ հարցերի պարզաբանման տեսանկյունից:

Բերենք մի փոքր հատված, որտեղ առկա են մի շարք կրոնական տերմիններ. «Նա և գոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեանն կարգին, *Համակդէն* անուն էր. գիտէր և *զԱմպարտքաշն*, ուսեալ էր և *զԲոզպայիտն*, ունէր և *զՊահլաիկն* և *զՊարսկադէնն*: Քանզի այս հինգ *կեշտք* են, որ զրաւեալ ունին զամենայն *օրէնս մոզութեանն*, բայց արտաքոյ սոցա է մեւս ևս այլ վեցերորդ, գոր *Պետմոզն* կոչեն» (143-144): (Ընդգծումները մերն են – Լ.Ն.): Այս բառերը մեր մատենագրության մեջ առաջին կամ միակ վկայություններն են: Արևելագետ Ֆրայը Եղիշեի վերոբերյալ հատվածից ենթադրում է,

որ *պահլավիկ* և *պարսկադեն* հյուսիսային և հարավային մոզերի դպրոցներ են կամ աղանդներ (Фрай, Наследие Ирана, М., 1972, стр. 274):

**Ատրուշան** - «Հրաման ունիմք ի գեօղս և ի քաղաքս շինել ատրուշանս» (70): Եղիշեն բառը գործածել է 8 անգամ: ՆՀԲ *ատրուշանը* մեկնում է «տուն կամ մեհեան կրակի կրակապաշտից, կրակատուն»: Եղիշեն քաջ գիտեր այս և նման կարգի բառերի իմաստը և օգտագործել է նաև հայերեն *կրակատուն* հոմանիշը (3 անգամ). «Ինքեանք ինքեանց ձեռօր զկրակատունսն այրեին» (70): Կրակատանը վառվող կրակը Եղիշեն անվանում է «վռամական կրակ». «Շինել ատրուշանս և զվռամական կրակն ի ներքս դնել» (70): ՆՀԲ-ը ունի միայն այս վկայությունը: *Ատրուշան, կրակատուն* բառերի հոմանիշ է և հունարենից փոխառյալ *պիլոփոն*-ը. «Հրով վառեաց զպիլոփոնն պարսից...» (ՆՀԲ):

*Կրակատուն*-ը ոչ թե բառի բաղադրիչների, այլ ատրուշան հասկացության թարգմանությունն է:

*Ատրուշան* բառի ստուգաբանության տարբեր փորձեր կան (Տե՛ս Արմ, *Ատրուշան* բառահոդվածը): Մեր կարծիքով ավելի հավանական է atur «կրակ» և rōšān «վառ» կազմությունը: Բուզանդը *ատրուշանը* մեկնում է «տուն կրակին պաշտելոյ» (10, ԻԳ):

Եղիշեն քաջածանոթ է զրադաշտական կրոնական տերմինաբանությանը՝ անշուշտ նաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի միջոցով: Բնականաբար, այդ կարգի բառերը անթարգմանելի են:

Իրանական ծագում ունեցող որոշ բառեր Եղիշեի գրքում մենիմաստ են՝ զուտ իրանական կրոնին վերաբերող հասկացություններ են: Աստվածաշնչում (նաև այլ հեղինակների մոտ) *մոզ* բառը ունի ընդհանրական «կախարդ, քուրմ,

աստղագուշակ» իմաստները: Եղիշեի գրքում *մոզ* և հատկապես *մոզպետ*, *պետմոզ* բառերը զուտ գրադաշտական կրոնին վերաբերող տերմիններ են: «Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մոզուց և մոզպետաց, զտիւն և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց» (53): «Եւ եղս յետ աւուրց քսան և հնգից մոզպետն ինքնին մոզոքն հանդերձ հասաներ մեծաւ զօրութեամբ» (58): «...զոր Պետմոզ կոչեն» (144):

Եղիշեն կիրառել է նաև *մովպետ* և *մովպետան մովպետ* ձևերը. «Մովպետան մովպետ ռատ յազէ» (181), «Եւ հրամայեաց ևս Դենշապուհ երկուս ևս ընկերակիցս, և զՄովան հանդերձապետ՝ ի ձեռանէ Մովպետան մովպետի» (160):

*Մոզպետ* և *մովպետ* ձևերը ենթադրում են իրանական տարբեր աղբյուրներ. գ-ով ձևերը պարթևերենից են, իսկ վ-ով ձևերը՝ միջին պարսկերենից: Միջին պարսկերենից են նաև իզաֆեթային ձևերը. «Որք ոչ սիրով ունին *զդենի մազդեզն*, այնպիսեաց և աստուածքն են ցասուցեալ» (131):

Եղիշեն *մոզերին* կոչում է նաև *զպաշտօնեայք ձախակողման*. «Եւ իբրև ետես՝ եթէ վայրատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչեր զպաշտօնեայս ձախակողմանն, որք կապեալ էին կռապաշտութեանն անլուծելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցոյ» (8):

Այս հասկացության իմաստը ավելի ակնհայտ է դառնում Եղիշեի մեկ այլ գործում. «Ես ընդ աջմէ Հաւր նստուցից զձեզ եւ զամենայն ինչ յաջողեցից ձեզ. *չիք ի ձեզ մասն խաւարի*, եւ ոչ կողմ ձախոյ... Եւ մի ի ձախ կողմ արկանէք զգործիս ձեր. քանզի որ որդիքն ձախոյ են՝ ծնունդք են խաւարային իշխանութեան... Եւ որպէս լաւագոյնն յաջակողմանն երեւեցաւ, նոյնպէս և վատթարագոյնն ձախակողմն ընտրեաց կամաւք և ոչ

բնութեամբ... նոքա են այժիք, որ կան ի *ձախոյ կողմանն հարն* իւրեանց սատանայի» (ընդգծումները մերն են – Լ.Հ.)<sup>3</sup>:

*Աջակողման-ձախակողման* բառերում *աջ* և *ձախ* բաղադրիչները խորհրդանշական-փոխաբերական իմաստ ունեն: «Լեզուների մեջ առհասարակ աջը համարուած է լաւ, բարեգուշակ, յաջողութեան կողմ, մինչդեռ ձախը նշան է անյաջողութեան, իբրև չար, անբարեգուշակ կողմ» (Տէ ս Արմ, *Աջ* բառահոդվածը):

Եղիշէի վերոգրյալ նախադասության մեջ աջակողմանները քրիստոնյաններն են, ձախակողմանները՝ գրադաշտական մոզերը:

Իրանական կրոնական բառաշերտից են նաև *դէն, դէնիմագդեզն* «գրադաշտական կրոնը»: Գրքում *դէն*-ը գործածված է 11 անգամ, *դէնիմագդեզն*՝ 4: Վերջինիս՝ ՆՀԲ-ի միակ վկայությունը Եղիշէից է: Բառի իրանական բնույթը հաստատում է նաև իզաֆեթային կազմությունը, որը բնորոշ էր միջին պարսկերենին: Պարսից Միհրներսեհ Վզուրկ հրամանատարը հայերին ուղղված նամակում գրում է «Դուք գիտասօջիք, ամենայն մարդ, որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դէնի մագդեզն նա խուլ է և կոյր, և ի դիւաց Հարամանոյ խաբեալ ... եւ այսպես բաժանին արարածքս, հրեշտակ Որմզդի են, իսկ դելքն Արհմնոյն» (24-25): Հովսէփ եպիսկոպոսի պատասխան նամակում, բնականաբար, մերժվում են Միհրներսեհի դրույթները: Եպիսկոպոսի հերքման մեջ կա մի ուշագրավ փաստ՝ կապված հայերենի և պարսկերենի առնչության հետ: «Զղևս չար ասացեր. գոն և դևք բարի, *գոր և դուք և մէք հրեշտակս անուանեմք*» (31) (ընդգծումը մերն է - Լ.Հ.):

---

<sup>3</sup> Եղիշէ, *Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարանս տեառն*, (ՄՀ, I, 1039, 1051):

Եղիշեն նշում է հասկացության անվանման նույնությունը երկու լեզուներում: Նա, ըստ էության, *հրեշտակը* փոխառություն չի դիտում, թերևս այն պատճառով, որ բառը հաճախական է հայերենում, *հրեշտակ* բաղադրիչով կան բազմաթիվ հայակազմություններ. *հրեշտակաբար, հրեշտակաբեր, հրեշտակագնաց, հրեշտակագոր, հրեշտակաձանօթ, հրեշտակակերպ, հրեշտակակրօն, հրեշտականամ, հրեշտականման, հրեշտակապետ...* և այլն: Եթե Եղիշեն (կամ նամակագիրը) հայերենում և պարսկերենում տեսնում է նույն բառը, ապա բնականաբար ենթադրվում է նաև արտասանական նույնություն. ստուգաբանական բառարաններում *հրեշտակ* համարվում է փոխառություն պիլ. frēštak-ից\*: Հայտնի է, որ գրաբարը Ֆ- հնչյույթ չուներ, և հաճախ օտար *ֆր* հնչյունակապակցությունը գրվում էր *հր*-ով: Գուցե *հր* հնչարտասանություն է եղել նաև միջին պարսկերենի որևէ խոսվածքում, իբրև ֆ-ի նեղվածքի թուլության արտահայտություն:

**Ջնիկան մայպետ**-ը կրոնական բառաշերտից չէ: «Արդ զվեց զայս սուրբս յանապատին՝ ուր կատարեցին, Դենշապուհ և մոզպետն և Ջնիկան մայպետն անդէն ի տեղուջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն» (179): 160-րդ էջում *մայպետի* փոխարեն *մարզպետ* է. «Եւ հրամայեաց ևս Դենշապիոյ երկուս ևս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն. զՋնիկանն, որ էր մարզպետ արքունի, և զՄովան հանդերձապետ՝ ի ձեռանէ Մովպետան մովպետի»: Ճիշտ պետք

---

\* Հայերենի բոլոր փուլերում *հրեշտակ* հասկացության մեջ բացասական երանգ չկա: Ղարաբաղի բարբառում *\*հրիշտրակ* հիմնականում այլ իմաստ ունի՝ «շատ տգեղ, այլանդակ»:

Իհարկե, հնարավոր է, որ նույն բառը ունենա հակադիր իմաստներ, ինչպես *դել*-ը ունի «այս, չար ոգի, չար հրեշտակ» նաև՝ «հոգի, բարի ոգի, հրեշտակ» իմաստները (տե՛ս ՆՀԲ, Արմ): Եղիշեն նույնպես ընդունում է չար և բարի դների գոյությունը: Բարբառային *հրիշտրակ*-ի առաջին բաղադրիչը թերևս *հրեշ* բառն է, որը թե՛ իմաստային, թե՛ հնչյունափոխական՝ (է→ի) հիմնավորում ունի:

է համարել *մայպետ* ձևը: Ծանոթագրվում է, որ մի շարք ձեռագրերում *մարգպետի* փոխարեն *մայպետ* է: Փարպեցու գրքում մի քանի անգամ հանդիպում ենք այդ բառակապակցությանը. «Տայր հրաման Վեհդենշապհոյ առնուլ... օգնականս յաւագանւոյն, զՋնիկան մայպետն արքունի և զՄովան անդերձապետ», «...նստէին ամբարապետն Վեհդենշապուհ ու Ջնիկան մայպետն արքունի» (Փարպեցի, 1982, § Ծ, ԾԵ):

ՆՀԲ-ը *Ջնիկան մայպետը* բառերը չունի. ըստ երևույթին բառարանագիրները *Ջնիկան մայպետը* համարել են անձնանուն:

*Մայպետ*-ի ստուգաբանության առաջին փորձը Բ. Պատկանյանինն է: Նա բառի առաջին բաղադրիչը համարում է իրան. *may* «գինի» բառը: Սակայն այս ստուգաբանությունը մերժվեց, որովհետև բառը չունի «տակառապետ» իմաստը:

Հ. Աճառյանը *մայպետը* համարում է իրանական փոխառություն՝ «պարսկական անձանօթ մի պաշտօնեայ»:

Անբացատրելի է մնում բառի *մայ* բաղադրիչի իմաստը:

*Ջնիկան մայպետ*-ի վերաբերյալ ուշագրավ և մեր կարծիքով համոզիչ ստուգաբանություն է առաջարկում արևելագետ Հ. Բեյլին: Ըստ գիտնականի՝ *Ջնիկան*-ը արքայական հարեմի հսկիչն էր, վերակացուն (իրան. \*janikān-*jan*- ավեստ. *janī* «կին», իսկ *ikan*- ածանցը մասնագիտություն նշող ձևույթ է): *Մայպետ* բառի առաջին բաղադրիչն էլ թերևս իրան. \**may-pat*, \**mayapati*-ից է: Հնարավոր է, որ *մայ*-ը իրան. *mātak* (հայ. *մատակ* «էգ» բառն է՝ (*t-y* հնչյունափոխության օրինակ է իր. *pati-āzāta*- հյ. *Պայազատ* զուգահեռը (TPS, 1956, 111-112):



Եղիշեի գրքում կան մի շարք շրջասություններ (պայմանականորեն այդպես համարենք նաև մականունները): Շրջասություն է վերը նշված *աջակողման/ ձախակողմանը*: Բերենք այլ օրինակներ.

**Ամլորդի** - «Մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամլորդոյն ի Յորդանան գետ»: Ամլորդին Հովհաննես Մկրտիչն է, որը Չաքարիայի և ամուլ կնոջ՝ Եղիսաբեթի որդին է (տե՛ս ՆՀԲ-ը և աշխարհաբար թարգմանության ծան. 54): *Ամլորդի* բառը կա և Եղիշեի մեկ այլ գործում. «Այսաւր կուսածինն յամլորդոյն ընդունի զձեռնադրութիւն»<sup>4</sup>:

Ըստ ՆՀԲ-ի՝ բառի առաջին վկայությունը Եղիշեից է:

**Չորագլուխ յաղթութեան** - «Կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զգօրագլուխն յաղթութեան» (5): Նկատի ունի Քրիստոսին: Մեկ այլ տեղ Եղիշեն Քրիստոսին անվանում է «իմանալի արեգակ», «Տեսանէ զաներևոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական» (110):

**Խոստովանող** - «Չայս խորհուրդ խորհելով աստուծաշնորհ նախարարացն՝ մեծաւ թախանձանօք ածէին զխոստովանողն ի հաւանութիւն» (189): Խոսքը Աբրահամ Խոստովանողի մասին է:

**Օերն դառնացեալ** - «Յորժամ ծերն դառնացեալ ի ներքս ընկեց», «Քակեաց յինքենէ զծերն լի դառնութեամբ, յորում հանգուցեալ էր սատանայ» (42, 88, 91):

---

<sup>4</sup> Եղիշե, *Ի մկրտութիւն Քրիստոսի* (ՄՀ, I, 960):

**Մեծ բլուրն մսեղէն** - «Դավիթ ի մանկութեան ժամանակին քարի կործանեաց զմեծ բլուրն մսեղէն» (108): Նկատի ունի Գողիաթին, որին պատանի Դավիթը քարերով (պարսատիկով) սպանել է:

Գողիաթի մասին որոշ տեղեկություններ կան Աստվածաշնչում. «...բարձրութիւնը նորա վեց կանգուն եւ թզաւ, եւ սաղաւարտ ի գլուխ նորա, եւ գրահս վերտս զգեցեալ, եւ կշիռ զրահից նորա հինգ հազար սիկղ պղնձոյ և երկաթոյ» (Ա, Թագ, ԺԷ, 5): Դավիթը հրեական պատմության ամենանշանավոր դեմքերից է, նաև սաղմոսների հեղինակ:

**Մեծ վարդապետն հեթանոսաց** - «Մանաւանդ զի ունիմ ինձ գրաւական զմեծ վարդապետն հեթանոսաց, որ ի ցաւս մարմնոյ անձին մխիթարէր» (173): Ե. Տեր-Մինասյանը ծանոթագրում է, որ Պողոս առաքյալի մակդիրն է\*:

---

\* Աստվածաբանական գրականության մեջ բարձրագույն գնահատանքի է արժանացել Պողոս առաքյալի գործունեությունը: Գործունեության սկզբնական շրջանում նա Հիսուսին հավատացողներին հալածողներից մեկն էր: Հետագայում դարձավ քրիստոնեության նվիրյալ և քարոզող: Որոշ ուսումնասիրողներ նույնիսկ նրան համարում են քրիստոնեության հիմնադիր: Նա քրիստոնեությունը հանեց հրեական նեղ շրջանակներից և նրան տվեց համաշխարհային բնույթ (տե՛ս **ԱԵՈ**, *Երկերի ժողովածու*, հ. 1, Ե., 1966, էջ 409):

## II Մեկնութիւն Արարածոց<sup>1</sup>

V դ. հարուստ մատենագրության շրջանակներում այս աշխատանքը կարևորվում է սուրբգրային աստվածաբանության հարցերի քննության և մեկնության առումով՝ առաջինը լինելով հայ ինքնուրույն գրականության մեջ:

«Արարածոց մեկնության» նախնական բնագիրը մեզ չի հասել: Տարբեր դարերի և հեղինակների ձեռագրերում պահպանված «Արարածոց մեկնության» առանձին հատվածների ժողովումը և մանրագնին ու բազմակողմանի քննությունը կատարել է մեծանուն գիտնական Լևոն Խաչիկյանը: Գիտնականը համոզիչ փաստարկներով հանգել է այն եզրակացության, որ Եղիշեի հիշյալ գործի ամբողջական բնագիր արդեն XIII դ. գոյություն չի ունեցել, առանձին հատվածներ պահպանվել են Վարդան Արևելցու տարբեր գործերում: Միաժամանակ գիտնականը հուշում է, որ իր հավաքած հատվածները «Կարող են միայն մոտավոր, լավագույն դեպքում բավարար պատկերացում տալ այն մեծարժեք աշխատության մասին, որի ամբողջության կորուստը թերևս մեր հին գրականության ամենացավալի կորուստը պիտի համարել... Այնուամենայնիվ, անժխտելի է, որ Եղիշեի Արարածոց մեկնության պահպանված հատվածները ոչ միայն հնարավորություն են տալիս բավարար գաղափար կազմելու այդ կորած երկի մասին, այլև նյութ են ընձեռում մեր հին մատենագրության բազմաթիվ երկերի հետ առնչվող այլևայլ հարցերի լուսաբանման համար»<sup>2</sup>:

Եղիշեն իր գրքում մեկնել է «Գիրք ծննդոց»-ի բազմաթիվ բառեր, նախադասությունների ամբողջական հատվածներ:

---

<sup>1</sup> Օգտվել ենք «Արարածոց մեկնության» ՄՀ-ում զետեղված հրատարակությունից (հտ., Ա., 2003 թ.):

<sup>2</sup> Լևոն Խաչիկյան, «Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Ե., 1992 թ., էջ 79, 81:

Նշենք մի քանիսը՝

ա) *Հատուկ անուններ.*

*Արարատ* - «Արարատու լեռան, ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւնն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ: Գոյ ի Պաղեստինու եւ ի Գամիրս Արարատ, այլ մերս Այրարաթ լսի» (810):

Այս մեկնությունը նկատի ունի Աստվածաշնչի «Եւ նստաւ տապանն ի յերօներորդում ամսեան... ի լերինս Արարատայ» (Ծննդ., Ը, 4) հատվածը:

Հունարեն և ռուսերեն տարբերակում նույնպես *Արարատ* է, իսկ լատիներեն Աստվածաշնչում՝ «Արմենիայի լեռների վրա» - «...super montes Armeniae»:

Չենք անդրադառնում Արարատ բառի ստուգաբանությանը և այդ լեռան՝ Հայաստանում կամ այլ տարածքում գտնվելու տարակարծություններին<sup>3</sup>: V դ. մատենագրության մեջ հիշյալ լեռնանունը ունի *Արարատ* կամ *Արարադ* գրությունը: *Այրարաթ*-ը եզակի վկայություն է<sup>4</sup>:

Ուշադրության արժանի է և «այլ մերս Այրարաթ լսի» նախադասությունը: Կարծում ենք՝ «մերս» ասելով՝ նկատի ունի ոչ թե հայերենը, այլ նրա որևէ տարածքային տարբերակ, որը, թերևս, հեղինակի մայրենի խոսվածքն էր: Գրական լեզվից շեղում պետք է համարել նաև *Արարատու* սեռական հոլովածը: V դ. բոլոր վկայություններում *Արարատայ* կամ *Արարատոյ* է: Կարելի է ենթադրել, որ *Արարատու* ձևը հետագա գրչագրական-սրբագրական հետքեր ունի կամ Եղիշեի գրածը չէ:

<sup>3</sup> **Ա.Մուշեղյանը** կարծում է, որ «Եբրայերեն բնագրի Արարատը Հայաստան էրկիրն է: (Տե՛ս «Աստվածաշնչյան Հայաստան», Ե., 2005, էջ 161, 163):

<sup>4</sup> *Այրարաթ* վկայել է և Գրիգոր Խլաթեցին (15-րդ դ.)՝ որպես գավառի անվանում. «Եւ ընտ գաւառ Այրարաթին մըտին յաշխարհն յԱղւանին» (Տե՛ս «Յիշատակարան Աղետից» Գրիգորի Խլաթեցոյ. պատմական վիպասանութիւն, Վաղարշապատ, 1897, էջ 4):

**Ասեր, Գաղ** - «Գաղ, որ է բախտ, Ասեր, որ է երանութիւն» (851): Մեկնությունները հավաստի են: *Ասերը* մեկնում են նաև «երանելի անվանված»:

**Բենիամին** - «Եւ հայրն կոչեաց Բենիամին, որդի աջոյ» (860): Բառարանները ունեն «աջ ձեռքի որդին» կամ «երջանկության որդին» բացատրությունը<sup>5</sup>:

**Եղովմ, Իսաւ, Յակոբ** - «Եւ մայրն դնէ անուանս մարգարեութեամբ իրիցուն Իսաւ՝ արիւնտո, եւ կոչեցաւ Եղովմ հողեղէն սրտմտութիւն... իսկ կրսերոյն՝ Յակոբ, որ է խաբող» (839): Այս մեկնությունը վերաբերում է Ս. գրքի հետևյալ հատվածին. «Եւ եկն ել որդին անդրանիկ շառագոյն ամենեւին իբրեւ զմորթ թաւ, եւ անուանեաց նորա զանուն Եսաւ, եւ ապա ել եղբայր նորա... և կոչեաց զանուն նորա Յակոբ» (Մննդ., ԻԵ, 25):

«Յակոբ, որ է խաբող» մեկնությունը ճիշտ է: Առարկելի է կամ, ավելի ճիշտ, հստակ չէ Եսաւ (Իսաւ) և *Եղովմի* բացատրությունը: *Եսաւ* եբրայերեն նշանակում է «մագոտ», Եղովմ՝ «կարմիր»: Եղիշեի Իսաւ «արիւնտո» մեկնությունը թերևս նկատի ունի վերոհիշյալ օրինակի *շառագոյն* «շեկ, կարմիր» բառը և զանց է արված «մորթ թաւ» կապակցությունը, որը նշանակում է «մագոտ մորթ»: Ինչ վերաբերում է *Եղովմին*, ապա այն, ըստ էության, Եսաւի մականունն է. հմմտ. «Եւ ասէ Եսաւ ցՅակոբ, տուր ինձ ճաշակել ի շիկաթանեղ յայդմանէ, զի նքթեալ եմ. վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Եղովմ» (Մննդ., ԻԵ, 30):

**Զարուղոն** - «Եւ վեցերորդին կոչեաց Զարուղոն, որ է պարզել» (851): Այս մեկնությունը վերաբերում է Ս. գրքի հետևյալ հատվածին. «Եւ ասէ Լիա, պարզելեաց ինձ Աստուած պարզել... եւ կոչեաց զանուն նորա Զարուղոն» (Մննդ. Լ, 20-21): *Զարուղոն*

---

<sup>5</sup> Մեկնությունները համեմատել ենք մի շարք բառարանների համապատասխան բառահոդվածների հետ: Որոշ դեպքերում բառարաններում նկատելի են տարբեր բացատրություններ:

հատկանունը եբր. *zbl* արմատից է, որ նշանակում է «բնակություն, բնակարան» (Անձ. բառ., հտ. Բ, էջ 162): Ըստ *Симфония*-ի՝ «князь»: Ձեռագիր բառարաններում՝ *Հոկումն*: Հ. Ամալյանը ուղղում է՝ *հասումն* (Ամալյան, 2007, էջ 210):

Եղիշեն ոչ թե բառիմաստն է բացատրում, այլ կրկնում է ըստ Ս. գրքի՝ Աստծո պարզև լինելը:

**Յովսեփ** - «... ետ նմա որդի, եւ կոչեաց Յովսեփ՝ յաւելումն թարգմանեալ» (851): Ճիշտ մեկնությունն է: Ըստ համաբարբառների՝ «պիտի ավելացնի» կամ «Աստված կավելացնի»:

*Հովսեփի* այլ բացատրություններ էլ կան. «աճումն», «վայր իջուցիչ» «աստուածաբնակ» և այլն (Տե՛ս Անձ. բառ., հտ. Գ, էջ 709):

**Նեփթադիմ** - «Եւ զերկրորդն կոչեաց Նեփթադիմ, որ թէպէտ ծառ ծաղկեալ կոչի, վաղվաղակի ցրուի և ցնդի» (850): Այս մեկնությունը վերաբերում է Ծննդոց գրքի Լ, 8 հատվածին. «Օգնեաց ինձ Աստուած, զի գուպարեցայ ընդ քեռ իմում եւ յաղթեցի. եւ կոչեաց զանուն նորա Նեփթադիմ»: Անհասկանալի է Նեփթադիմի մեկնությունը: Եբրայերենում Նեփթադիմ նշանակում է «կովող», որը Աստվածաշնչի նշված հատվածում համապատասխանում է *գուպարեմ* բային: Վերջինս, ըստ ՆՀԲ-ի, ունի «մրցել, ոգորիլ, մաքառիլ» իմաստները<sup>6</sup>:

**Ուզմաուս** - «Եւ անուն տեղոյն էր յառաջագոյն Ուզմաուս, քաղդեարէն Լուզ՝ հայերէն Նշուս» (847):

ՆՀԲ-ը սովորաբար հատկանուններ չի արձանագրում, իսկ *նշուս*-ը մեկնում է «ուր իցէ նուշ կամ նշենի շատ»՝ վկայելով «անուն տեղոյն՝ լուզ. Հայերէն նշուս» նախադասությունը: Այլ օրինակներ բառարանը չունի:

---

<sup>6</sup> Աստվածաշնչի (1929 թ., Վիեննա) հրատարակության մեջ *գուպարեցայ*-ն սխալատպոյթամբ *գումարեցայ* է:

բ) *Այլ կարգի բառեր (ոչ հասկանուններ)*

**Անքիղոս** - «Ձուկն անքիղոս (այլ ձևագրում՝ անքիղոս), որ կոչի կողամայր, որովայն ոչ ունի» (776): ՆՀԲ-ում անքիղոս (անքիղոս) արձանագրված չէ: Իսկ *կողամայր* բառահոդվածի հղված միակ բնագրային օրինակում անքիղոս ձևն է «Ձուկն անքիղոս, որ կոչի կողամայր...»:

Անքիղոսը հունարեն *ἄγκυλος* «օձաձուկ» բառն է, որի նախաձևն է \**αγκέλοσ*, և հայերենը, ինչպես նշում է Հ.Աճառյանը, «Ենթադրում է ճշտի հուն.-ն *ἀγκολοσ* ձևը, որից փոխառեալ է նաև ֆրանս. ancyle «կողամայր» (Տե՛ս Արմ, *անքիղոս* բառահոդվածը):

**Ատրոքոս** - «Եւ հաւն ատրոքոս քանզի կերակրի ի մնացեալ մտոյն, որ մնա յատամունսն Հիւղոսի» (776):

Գրաբարի բառարանները *ատրոքոս*-ը համարում են սխալագրություն, ճիշտը՝ \*տրոքիլոս- հուն. *τροχιλος* «եզիպտական դաշտակտցար, ցախսարեկ»<sup>7</sup>:

Ինչ վերաբերում է *հիւղոս*-ին, ապա, կարծում ենք, ավելի ճիշտ պետք է համարել *կոկորդիլոս (կոկորդիլոս)*-ը, որ առկա է ձեռագրերից մեկում:

Եթե հավաստի է Արմ-ի բացատրությունը, *հիւղոս*-ը այլ կենդանանուն է (ոչ թե կոկորդիլոսի): Հուն. *ὕλλοσ*-ը կատվի մեծությամբ մի կենդանի է, որ կոկորդիլոսին վնասելու պատճառով պաշտվում էր հին եզիպտացիների կողմից (Տե՛ս Արմ, *հիւղոս* բառահոդվածը):

**Կատովիլես** - «Ուրեմն հաւատարիմ է կինն ի կողէն Ադամայ ստեղծեալ կատովիլեսն (այլ ձևագրում՝ կատովիլեսն)

---

<sup>7</sup> Դվորեցկու բառարանում բառի բացատրությունն է 1. *Птица* ржанка египетская («крокодилий сторож»), 2. предполож. птица крапивник (стр. 1651):

թոշուն է, որ կոչի վայրահայեաց...» (777): Ըստ Արմ-ի ճիշտ ձևը \*կատովդէպս-ն է:

**Մայն, հագիպիմայն, հապա, հաղկուշտու:** Ներքոգրյալ հատվածում հեղինակը նշում է «հողմ» և «հոգի» բառերի հունարեն և եբրայերեն տարբերակները. «Զի յոյնն մայն ասէ հողմոյն անուն, եւ հագիպիմայն՝ հոգւոյն: Եւ եբրայեցին հապա՝ հողմոյն եւ հաղկուշտու հոգւոյ» (770): Տարբեր լեզուներում *հողմ, հոգի, շունչ* բառերի հոմանշային ընդհանրությունները ակնհայտ են (Տե՛ս Արմ *հոգի* բառահոդվածը):

Այդ մասին խոսում է նաև Եզնիկը: Շարունակության մեջ Եղիշեն հավելում է, որ այդպես է հայերենում. «Այլ ի մերս յայտնապէս և պարզ է հողմոյ կոչումն եւ հոգւոյն, գոր գիտեմք հաւաստի եթէ յաղագս արարչակից Հոգւոյն Սրբոյ է բանս»:

Ենթադրում ենք, որ հունարեն ձևերի մեջ գործ ունենք սխալագրության հետ: *Մայն*-ը թերևս հուն. *ἀνεμος* «քամի» բառն է, *հագիպիմայն*-ի դեպքում ենթադրելի է հուն. *πνεῦμα* «քամի, շունչ, հոգի» բառը, այս դեպքում էլ անբացատրելի է մնում *հագի* բաղադրիչի իսկությունը: Եբր. համարվող *հապա, հաղկուշտու* բառերի ձևի և բառիմաստի վերաբերյալ մեզ չի հաջողվել որևէ համոզիչ բացատրություն գտնել: Ըստ որոշ մեկնությունների՝ *haad*-ը Մովսեսի՝ Աստծուն ուղղված խոսքերն են՝ «Մենք վերադառնում ենք տեր, և խնդրում, որ ներես մեզ», *kusht* (ակկադ.) և *Qushtu* (արամ.), նշանակում են «Աստծո իշխանություն»<sup>8</sup>, եբր. *Ha'ad* նշանակում է «շնչառություն, շունչ»<sup>9</sup>:

**Մութանաբի, ջանդարի** - «Առնէ երիս գաւազանս շէր, գոր շշի ասէն եւ պարսք՝ մութանաբի, եւ սաւսի, գոր ջանդարի ասէն» (852): ՆՀԲ-ում *ջանդարի* բառ չկա: Արմ-ում կա *ճանդարի* (սուսի):

<sup>8</sup> Տե՛ս Encyclopedia of biblical interpretation, New York, 1962, pp. 70, 78: [www.worldcat.org](http://www.worldcat.org):

<sup>9</sup> [www.hebrewetymology.com](http://www.hebrewetymology.com).



Աճառյանը ընդունում է բառի իրանական բնույթը՝ առանց ստուգաբանության: Բառի երկրորդ բաղադրիչը՝ դար(ի), անշուշտ, իրան. dar-ն է «փայտե սյուն, հեծան», որը բանաստեղծություններում ունի նաև «բարձր և ձիգ ծառ» իմաստը: Առաջին բաղադրիչի *ճան*, թե *ջան* ձևերից նախնականի հարցը վիճելի է: Հայ բարբառները ունեն *ճանդար(ի)* ձևը (Տե՛ս Արմ):

*Մութանաբին* թերևս արաբերեն է (9-10-րդ դ. արաբ բանաստեղծ, իրանական գրականության գիտակ Մութանաբին մի քանի առակներ ունի ծառերի մասին): Այս դեպքում պետք է ընդունել, որ մեկնությունը կատարվել է ուշ շրջանում:

*Սաբեկ* - «Սաբեկայ պրկումն թարգմանի կամ երկճղի կամ կոտրատուն» (835): Այս բուսանունը մեկ անգամ գործածվում է Աստվածաշնչում. «Խոյ մի կախեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերաց» (Ծննդ., ԻԲ, 13): Հ. Աճառյանը նշում է, որ եբր. *səbak*-ը «ծառի իրար անց կացած թաւ ու խիտ ճյուղերը» բառն է, որի նշանակութիւնը չիմանալով, Եօթանասունք՝ անփոփոխ պահել են յն. *σαβεχ* տառադարձությամբ, որից նաև հայերեն ձևը» (Տե՛ս Արմ, *Սաբեկ* բառահոդվածը):

Աստվածաշնչի համապատասխան հատվածը ռուսերեն թարգմանված է. «... и вот позади овен, запутавшийся в чаще рогами своими», արևելահայերեն՝ «Մացառուտ թփի մեջ եղջիրներից մի խոյ է կախուած»:

\*

\*            \*

Այս աշխատության մեջ Եղիշեն տալիս է մի շարք լեզուների, այդ թվում, հայերենի գնահատական-բնութագրումը. «Ուստի եւ գեղեցկաբանութիւն եղեւ ի մի խոշոր լեզուէն.

փափուկ՝ հելենն, սաստիկ՝ հռոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, գեղեցկազարդ՝ ականն, ծաղրական գույն, տափախաւս, խաւարածայն՝ եգիպտացին, ճրճուողական՝ հնդիկն, համեղական՝ հայն» (817):

Վկայությունը չնչին փոփոխություններով տեղ է գտել ուշ շրջանի հեղինակների գործերում (Վարդան Արևելցի, Մխիթար Այրիվանեցի, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթևացի)<sup>10</sup>:

Եղիշեն նկատի է ունեցել հիշյալ լեզուներին բնորոշ լեզվաքերականական, գործառական էական առանձնահատկությունները, որոնք շատ դեպքերում մնում են անբացատրելի:

Փորձենք բացահայտել այդ գնահատականներում «թաքնված» լեզվական իրողությունները՝ բնավ չհավակնելով անքննադատ ընդունելության:

Եղիշեն հունարենը բնութագրում է *փափուկ* ածականորոշիչով, Վ. Արևելցին՝ *փափկագոյն*, Մ. Այրիվանեցին՝ *փափկական*, Հ. Երզնկացին՝ *փափկախաւս*: ՆՀԲ-ը բերում է Երզնկացու վկայությունը՝ *փափկախաւսը* մեկնելով այսպես. «Ոյր փափուկ է խօսքն՝ բարբառն՝ լեզուն», որը, ըստ էության, որևէ լեզվական հատկանիշ չի բացահայտում: *Փափուկ*-ը՝ որպես լեզվաբանական տերմին չկա և Ա. Մուրադյանի գրքում<sup>11</sup>:

Գրաբարում *փափուկ*, *լերկ*, *նուրբ* բառերը հոմանշային եզրեր ունեն, վերջին երկուսը նաև լեզվաբանական տերմիններ են՝ հունարեն համապատասխանակը՝ *φιλός*, որը բազմիմաստ է: Հունարենի բառարանում նշվում է 10 իմաստ, որոնցից վերջինը քերականական տերմին է՝ «պարզ շնչեղազուրկ կամ թույլ շնչեղություն ունեցող» (Տե՛ս Дворецкий, II, 1799):

---

<sup>10</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, *Եղիշեի «Արարածոց մեկնությունը»*, Ե., 1992: Ա. Այվազյան, *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը*, Ե., 2001:

<sup>11</sup> Ա. Մուրադյան, *Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Ե., 1971, էջ 354:

Եղիշեն թերևս նկատի է ունեցել հունարենի հնչյունական համակարգում խուլ բաղաձայնների գերակայությունը ձայնեղների համեմատությամբ: Ա. Այտընյանը *փափուկ* է համարում հունարենի ատտիկյան բարբառը՝ կապ տեսնելով ժողովուրդների և նրան լեզվի միջև. «Առատ գաղափարաց տեր ժողովուրդ մ'ը առատ ու ճոխ լեզուի ալ տեր է... Հին աշխարհի մէջ Ելլադայի նուրբ ու փափուկ ատտիկերէնը և Լատինի հզօր և պերճ լատիներէնը՝ Յունաց գեղեցկասէր մտացն ու Հռոմայեցոց յաղթասէր բնաւորութեանը ճշգրիտ հայելիներն էին»<sup>12</sup>:

**Մաստիկ՝ հռովմայեցին** – *Մաստ*-ը ՆՀԲ-ը բացատրում է. «Բան սաստիկ, իխտ, ցասումն, յանդիմանութիւն», իսկ *յաղթասիրել*-ը «ջանալ յաղթել հակառակա–սիրութեամբ, վիճել» (նկատի ունենք Այտընյանի *հաղթասէր* ածականը):

Բառարանային այս բացատրությունները բնորոշ են հատկապես հռետորական ոճին, ճարտասանական արվեստին: *Մաստիկ* բնորոշումով Եղիշեն ակնարկում է ճառերի, բանավիճային գործերի լեզվական առանձնահատկությունները, որտեղ դեր է խաղում և շեշտը, շեշտադրությունը: Արդեն 5-րդ դարում լատիներենի շեշտի համար բնութագրական էր համարվում ուժային պահը (силовой момент)<sup>13</sup>:

**Սպառնական հոնին** – Հոները՝ որպես վաչկատուն ժողովուրդ, կազմավորվել են II-IV դդ. Նախաուրալում՝ թյուրքալեզու հաննու և տեղական ուգրական ցեղերից: IV դարի 70-ական թվականներին զանգվածային գաղթել են Հյուսիսային Կովկաս, ապա՝ Դոնի ավազան և Հյուսիսային մերձսևծովյան շրջանները (ՀՄՀ, հ. 6, 1980, էջ 544):

---

<sup>12</sup> Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Ե., 1987, էջ 34:

<sup>13</sup> Տե՛ս Ի. Թրոնսկի *И.М., Историческая грамматика латинского языка*, М., 2001, էջ 68:

Կովկասյան հոները անվանվում էին նաև *խայլընդուրներ*, *խայլանդուրներ*: 469 թ. Բալկանյան թերակղզի ներխուժելու անհաջող փորձերից հետո հոները՝ որպես ժողովուրդ, աստիճանաբար անհետանում են, սակայն *հոն(եր)* բառը երկար ժամանակ մնում է որպես քոչվորներին տրվող անվանում (Տե՛ս ԵՇԾ, N 7, 1972, էջ 450):

V դ. հայ պատմագրության մեջ որոշ տեղեկություններ կան հոների և հայերի առնչությունների մասին: Բուզանդի վկայությամբ՝ հոները մոտ 335 թ. արշավել են Հայաստան. «Յայնմ ժամանակի թագաւորն մագքթաց Սանէսան... գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց... Հեշմատակաց... և անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց... Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից գերկիին Հայոց աշխարհին» (III, Է): Հոների մասին (բայց ոչ նրանց լեզվի) վկայություններ ունեն Ագաթանգեղոսը, Խորենացին, Փարպեցին:

Հանրագիտական բառարաններում, պատմագրության մեջ, հոների դաժանությունների, քստմնելի արտաքինի ու անբարո վարքի մասին տեղեկություններից զատ, հաճախ շեշտվում է հոների առաջնորդ Աթիլայի սպառնալիքները՝ ուղղված Հռոմին:

Այդ սպառնալիքները և դաժանությունները արտացոլված են տարբեր բնույթի գեղարվեստական և գրական գործերում: Հիշենք Վերդիի «Աթիլա» օպերան, հայ գրականությունից՝ Չարենցի «Աթիլա» պոեմը.

Էլ չե՛ք մոռանա, չե՛ք հեգնի էլ ինձ՝ | Հոների արքա հզո՛ր Աթիլիին:

Ես կրկին ահա քանդում եմ, վառում | քաղաքներ, գյուղեր փլչում են իմ դեմ.

Եվ այս անգամ ես՝ գո՛՛ն, անհա՛ղթ արդեն՝ | Մի կարմիր  
գիշեր կմտնեմ Հռոմ...

Ավ. Իսահակյանը «Աթթիլյան և իր սուրբ» ստեղծագործության մեջ, ի շարս այդ գազանակերպի դաժանությունների նկարագրության, ունի և հետևյալ տողերը.

Արդ, դողացե՛ք, սասանեցե՛ք Արևմուտքի խարդախ ցեղեր:

Դո՛ւք հետս Հռովմ մեղկ Բյուզանդիոն | Բերում եմ ժանտ վախճանը ձեր:

Երկրներին ու ժողովուրդներին ուղղված հոների այդ սպառնալիքներն է նկատի ունեցել Եղիշեն, թերևս նաև՝ արշավանքների ժամանակ այդ հրոսակների արձակած սարսափազդու ճիչերն ու աղաղակները:

**Աղաչական՝ ասորին** – Բանասիրության մեջ փաստերով հիմնավորված է ասորերենից թարգմանված «Վկայք Արևելից»-ի լեզվաոճական մեծ ազդեցությունը Եղիշեի «Պատմության» վրա: «Արևելեան վկայք շատ ազդած են Եղիշեի մտաց վրայ. կարծես թե իրեն սիրած ընթերցման գիրքը եղած ըլլա. կարդացած միջոցով շատ տեղ ինքն իրենդ կը հարցնես. Եղիշեի էջ մը կ'ընթեռնում արդեօք. Եղիշե ասկից ազդուած է ոչ միայն լեզուին, իմաստներուն և դարձուածներուն, այլ և իր անուշ ու տիրական ոճին» (Բազմավեպ, 1905, էջ 359):

«Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը իսկապես Եղիշեի Պատմության գրական աղբյուրներից մեկն է: Եղիշեն երբեմն ընդօրինակում է Աբրահամի ոճը, նրանից փոխառում որոշ բառեր, դիպուկ արտահայտություններ և համեմատություններ»<sup>14</sup>:

Ասորական գրականության և ասորերենի ազդեցության գործոնով, սակայն, չի բացահայտվում *աղաչական* բնութագրման էությունը:

---

<sup>14</sup> Լ.Տեր-Պետրոսյան, *Աբրահամ Խոստովանողի* «Վկայք Արևելիցը», Ե., 1976, էջ 71:

Կարծում ենք՝ պետք է փնտրել ասորերենի հետ առնչվող այլ գործոն.

«Աստվածաշնչի թարգմանության գուգընթաց թարգմանել են եկեղեցու մեջ ընդունված աղոթքները, որոնք կարող են լինել հունարեն կամ ասորերեն»<sup>15</sup>:

Ըստ երևույթին, դրանք նախապես (կամ մեծ մասամբ) թարգմանվել են ասորերենից: Գրաբարում *աղոթել* և *աղաչել* հոմանիշներ են (ՆՀԲ-ը *աղոթել* մեկնում է. «աղոթս առնել... աղաչել, պաղատել», *Աղաչել*-ը՝ «աղերսել, մաղթել, աղոթել»), հ.-ե. նույն արմատի տարբերակային ձևերը: Հնարավոր է նաև, որ Եղիշեն նկատի է ունեցել Միջագետքում մ.թ. 4-րդ դարում ձևավորված ասորական *məsalḥayāna* «աղոթական, աղոթողներ» կոչված աղանդը: Հավելենք, որ Եղիշեի *աղաչական ասորին* կապակցությունը կա հետագա դարերի բոլոր վկայություններում, բայց զարմանալիորեն աղաչական բառը չկա Նոր հայկազյան բառարանում:

***Պերճական՝ պարսիկն, գեղեցկագարդ՝ ալանն*** – Այս երկու լեզուներին տրված որակումները, ըստ էության, նույնական են: Դա պատահական չէ, որովհետև երկուսն էլ իրանական լեզուներ են, իսկ Իրան և Ալան բառերն էլ ստուգաբանորեն նույն արմատի տարբերակներ են՝ հին իրան. \*aryāna-ից: Սկյութերենում և նրա որոշ բարբառներում տեղի է ունեցել *ry>l* անցում (ОИЯ, М., 1979, էջ 11):

Եղիշեն ծանոթ էր իրանական մշակույթին, գրականությանը. գրադաշտական կրոնին վերաբերող մի շարք բառեր առաջին անգամ հայ մատենագրության մեջ շրջանառության մեջ է դրվել Եղիշեի կողմից: Նա, անշուշտ, գիտեր նաև, որ հայերենի բառապաշարի մի զգալի շերտ

---

<sup>15</sup> Մ.Աբեղյան, *Երկեր*, Գ., Ե., 1968, էջ 103:

փոխառված է իրանական լեզուներից: Այնպես որ, պարսկերենի վերաբերյալ նրա գնահատականը հայեցողական չէ, այլ ունի իրական հիմք: Այդ գնահատականը ուշագրավ է մեկ այլ առումով: Լինելով քրիստոնեության մաքառող պաշտպան, ընդվզելով Իրանի կողմից հայերին զրադաշտություն պարտադրելու դեմ, խորապես գիտակցելով, որ Սասանյան Իրանի և Հայաստանի թշնամական հարաբերությունների հիմքում կրոնական հակասությունն էր, որի կիզակետը Ավարայրի ճակատամարտը եղավ՝ մեր՝ «բարոյական», թշնամու իրական հաղթանակով, Եղիշեն թշնամու լեզվի գնահատման հարցում արդեն ոչ թե մարտնչող ու ժխտող հակառակորդ էր, այլ իրողությունը չբաղաքականացնող ուսյալ անձ: Մի բան, որն այնքան էլ բնորոշ չէր միջնադարի ոչ միայն հայ, այլև օտար շատ պատմագիրների համար:

**Ծաղրական գուրծ** – Հ.Երզնկացու տարբերակում՝ *գուրծ*: Գոթերենը գերմանական լեզուներից մեկն է: Գոթերը 4-րդ դարում ունեցել են այբուբեն, և թարգմանել են Աստվածաշունչը: Ուսումնասիրողները հին գերմաներենի որոշ իրողություններ վերականգնում են գոթերենի տվյալներով:

Անհասկանալի է, թե ինչու Եղիշեն այդ լեզուն համարում է ծաղրական<sup>16</sup>: Մենք էլ, չկարողանալով պարզել այդ բնորոշման լեզվաքերականական հիմնավորումը, այնուամենայնիվ փորձենք տալ այլ, գուցե և ոչ ընդունելի, մեկնություն:

1. Ուսումնասիրողները նշում են, որ գոթերենի այբուբենի հիմքը հունարենի և մասամբ լատիներենի տառերն են: Գուցե

---

<sup>16</sup> Գերմաներենի վերաբերյալ բացասական գնահատական ունի Մխիթարյան միաբաններից Պ. Հովնանյանը. «Կոպիտ բարբառ, որ մինչև նւթէտասներորդ դարուն մէջերը յօրինուածոյն և ուղղագրութեան կողմանէ շատ պակասութիւններ ունէր» (Տէ ս **Հ. Պօղոս Յովնանեանց, Մարդկային լեզուին եւ ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը**», Վիեննա, 1857, էջ 111:

այդ է ծաղրական համարելու պատճառը: Մանավանդ որ Աստվածաշունչն էլ գրված է այդ տառերով:

2. Գ. Տաթևացու տարբերակում *գութն*-ի փոխարեն *մունդն* է, որը հավանորեն գերմաներեն *mund* «բերան» բառն է: Այս դեպքում նկատի է առնվել թերևս գոթերենի հնչյունների և նրանց արտասանության առանձնահատկությունը. «Գոթերենի հնչյունների 1/3-ը ձայնավորներ են, որոնց կազմության և արտաբերման գործում կարևոր դեր է խաղում լեզվի շարժումը հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով»<sup>17</sup>:

***Տափախաւ, խաւարաձայն՝ եզիպտացին*** – Այլ հեղինակների վկայություններում երկու ածականների փոխարեն մեկն է՝ բառաձևային և հնչյունական տարբերակներով (Վ. Արևելցի՝ *խարափաձայն*, Մ. Այրիվանեցի՝ *խարխափական*, Հ. Երզնկացի, Գ. Տաթևացի՝ *խափարաձայն*):

ՆՀԲ-ը չունի *տափախաւ* և *խաւարաձայն* բառերը, իսկ *խափարական* և *խափարաձայն* գլխաբառերը գետեղված են մեկ բառահոդվածում՝ «Ունող զհնչին կամ զձայն խոշոր և թանձր կամ դժուարալուր» բացատրությամբ:

Արմատական բառարանում նշվում է, որ *խափար* «թաւ, թանձր» բառը անկախաբար չի գործածվում և հանդիպում է *խափարաձայն* և *խափարական* բաղադրություններում: Երկու բառարաններն, էլ որպես միակ վկայություն, հղում են Վ. Արևելցուն և Հ. Երզնկացուն:

Գրաբարում *թանձր* և *թաւ* բառերը հոմանիշներ են. վերջինս նաև քերականական տերմին է՝ շնչեղ խուլ բաղաձայնները, նաև *խ*-ն<sup>18</sup>:

---

<sup>17</sup> С.И.Дубинин, *Готский язык*, Самара, 2006, էջ 18, 22:

<sup>18</sup> Տե՛ս Ա.Մուրադյան, *նշվ. աշխ.*, էջ 193:



ՆՀԲ-ը տալիս է մի լրացուցիչ մեկնություն ևս. «մօտ ի Խափշիկ և Խպտի ազգս և ի հնչիւն *խաֆ* տառի և կամ *խապա*, այս ինքն թանձր» (Տե՛ս ՆՀԲ, *խափարական* բառահոդվածը):

Ուրեմն՝ *խափարական*, *խափարաձայն* բնորոշմամբ շեշտվում է եգիպտերենի *խուլ* բաղաձայնների գործառական դերը:

Անբացատրելի է մնում բնագրագիտական մեկ հարց.

Ինչո՞ւ Եղիշեի վկայած *տափախաւս*, *խաւարաձայն* բառերը դուրս են մնացել ուշ շրջանի այլ հեղինակների գործերից:

**Ճրճուղական՝ հնդիկն** – Բառակապակցությունը առկա է բոլոր տարբերակներում, բայց ՆՀԲ-ը չի վկայել: Կա Առձեռն բառարանում՝ «Ճնճղուկի ձայնի նման» բացատրությամբ: Արմատական բառարանը փակագծերում հավելում է «լեզու» (Տե՛ս *ճճուել* բառահոդվածը): Ինչպես տեսնում ենք, բառարանների նշած բառիմաստներով չի պարզվում հնդկերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունը: Կարծում ենք՝ Եղիշեն նկատի է ունեցել հնդկերենի բաղաձայնական համակարգում *Ճ*, *Չ*, *Ջ* հպաշփական հնչույթների հաճախականությունը: Համեմատության համար բերենք հ.-ե. ծագման մի քանի բառերի հնդկերեն և այլ լեզուների համապատասխանակները.

հնդկ. cakra «անիվ» - հուն. κάκλος, հնդկ. pañca- հուն. πεντα- հայ. հինգ, հնդկ. parccati «հարցնում է»- ավեստ. pərəsti- հայ. հարցանեմ, հնդ. jānu «ծունկ», հուն. γόνυ, միջ. պրս. zanuk – հայ. ծունկ(գ), հնդկ. rāj «թագավոր» - լատիներեն rex:

Նշված բաղաձայնների հաճախականությունը նկատելի է նաև հատուկ անուններում:

Իսկ ինչո՞ւ է Եղիշեն հայերենը համարում **համեղական**:

Բերենք այլ հեղինակների տարբերակները. «Հայն՝ համեղ եւ ամենագարդ և համեմական» (Վ.Արևելցի), «հայն՝ համեմական» (Մ.Այրիվանեցի), «համեղական հայն» (Հ.Երզնկացի, Գ.Տաթևացի):

ՆՀԲ-ի *Համեղական* բառի բացատրությունը հետևյալն է. «Ախորժական, համեղ և Հեշտալուր, «համեղական հայն», այսինքն լեզու հայոց, տե՛ս և համեմական»: *Համեմականի* բացատրությունն է. «Ուր գոն համեմք, համեմեալ, ախորժական»: Բնագրային միակ օրինակը Վ.Արևելցու վերոհիշյալ նախադասությունն է (Տե՛ս ՆՀԲ *համեղական* և *համեմական* բառահոդվածները):

Բառարանագիրները *համեղական* բառում տեսնում են *համ* «զգայարաններից մեկը», և համեղ, համեղական մեկնում «քաղցր, ախորժելի», որը այս դեպքում առարկելի է: Գրաբարում *համ* ձևությոն ունի նաև «ամբողջ, համայն, բոլոր» իմաստները. (ծագում է հ.-ե. \*sam-, sm-ից), որը առկա է մի շարք բաղադրություններում՝ *համակ* «ամբողջովին, լիովին», *համակայ* «միասին», *համայն* «բոլոր», *համատարած* «բոլոր կողմերում տարածված» և այլն:

*Եղ* ձևությոն էլ *եղանիլ* բայի արմատն է, որից՝ *եղական* «ստեղծված», *եղանակ* «կերպ, ձև»:

Ուրեմն՝ *համեղական՝ հայն* նշանակում է բոլոր լեզուների հատկանիշները ունեցող: Եղիշեն էլ է այդ հաստատում՝ «*համեղական՝ հայն*, որ կարէ գամենն յինքն ամփոփել», իսկ Գ. Տաթևացին, կրկնելով Եղիշեին, շարունակում է «... և բոլոր խօսիլ, և այլքն՝ ոչ՝ որպես ասացաւ ի վերոյ»:

Հայերենին տրված այս գնահատականը առաջին հերթին վերաբերում է գրաբարի հնչյունական համակարգին, որը հնչյունադարձության և տառադարձության ավելի լայն հնարավորություններ ունի, քան համեմատվող որևէ լեզու:

Այս աշխատության մեջ երևակվում է նաև հեղինակի՝ լեզվաբանական որոշ տեսությունների իմացություն: Օրինակ՝ նա քաջատեղյակ էր բառիմաստի և բառանվան կապի հայտնի բանավեճին, այն է՝ անվանումը պայմանակա՞ն է, թե՞ կապված է բովանդակության (բնույթի) հետ: Եղիշեն, ըստ էության, ընդունում է վերջինը՝ այդ սկզբունքով էլ կատարելով որոշ «ստուգաբանություններ»:

Մեկնաբանելով Ս. գրքի «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնից...» (Մտնդ., Բ, 19) հատվածը՝ գրում է. «Զի ոչ անդէպս ինչ կոչէր, այլ զյարմարն և զնմանն» (784): Այս սկզբունքով էլ ստուգաբանում է *առիւծ, եզն, շուն, կատու* բառերը. «Որպէս եւ զառիւծն ի յառնւոյն, եզն՝ ի հեզութենէն, շունն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տանն կալոյն, խոզն ի խուզողութենէն, և այլքն նոյնպէս (784):

Ստուգաբանական այս մոտեցումը ունի և Դավիթ փիլիսոփան: Լ. Խաչիկյանը, նկատելով այդ ընդհանրությունը, գրում է. «Քերականական այդ սկզբունքը Եղիշեն փոխ է առել Դավթի՞ց, թե՞ հակառակը՝ Դավիթը Եղիշեից... Կարծում ենք, ավելի հավանական է, որ այդ երկու հեղինակները, յուրացրած լինելով հունական քերականագիտությունը, միմյանցից անկախ կանգնած են եղել միևնույն տեսակետի վրա» (Խաչիկյան, 1992, էջ 150):

Եղիշեն բնական և դրական է համարում լեզվական շփումներն ու փոխազդեցությունները, որը երևում է լեզուներին տրված գնահատականների շարունակության մեջ. «Եւ որպէս գոյն առ գունով պայծառանայ եւ դէմք ի դիմաց... նոյնպէս եւ լեզու առ լեզուաւ գեղեցկանայ և պիտանացու առ ստուգաբանութիւն եւ որ կարի իսողտալուր լեզուն է՝ յազուտ գտանի»:

Եղիշեն շրջանառության մեջ է դրել նաև մի շարք լեզվաբանական տերմիններ. «Եւ բանի պարբեկութիւնք է (7) են.

Է (7) գիր, որ ձայնանան եւ բանանան: Զի գործիք են բանի գիծքն, որ և ի մեր լեզուս ԼԶ (36) լինի: Եւ ամենայն տառից առաջին եւ հայր այբն է, եւ առաջին ձայնաւոր եւ սկիզբն բոլոր թուոց» (827): Հեղինակը տարբերակում է *հնչույթը* (ձայն) և *տառը* (գիծ, տառ): *Պարբեկութիւն*-ը, ըստ ՆՀԲ-ի, «շրջաբեկութիւն, ոլորակումն», ըստ ԱԲ-ի՝ «ոլորակ ձայնի»: Արտասանությանը վերաբերող տերմին է՝ *ձայներանգ*:

Հաջորդ պարբերության մեջ հանդիպում ենք հնչյունաբանական այլ տերմինների *պարզ*, *պարզանալ*, *թաւ*, *թավանալ*, *սոսկ*, *սոսկանալ*:

Պետք է շեշտել նաև «Արարածոց մեկնութեան» հարուստ բառապաշարը:

Լ. Խաչիկյանը նկատել է 38 բառ, որ դուրս են մնացել ՆՀԲ-ից (էջ 188-191):

Նշենք մի քանիսը. *Անփոխանորդ*, *անկակուղ*, *ադամաստեղծ*, *խառնահաւ*, ... բառերի այս շարքում է նաև *մարջանանալ*-ը. «Որպէս Ետովսիս թագաւորն Եգիպտոսի և Դարեհ մարջանացան խառնել զծովն Կարմիր ընդ ծովն, որ կոչի Եգիպտոսի» (191):

*Մարջանանալ*-ը ձեռագրերում հաճախակի հանդիպող կցագրությունն է: Պետք է առանձնացնել *Մար* և *ջանալ* բաղադրիչները՝ Դարեհ մար: Իրանի նշանավոր թագավորներից մեկին՝ Դարեհին անվանում էին նաև *Դարեհ մար* (մարացի, մեղացի): Ահա մեկ այլ վկայություն հիշյալ ջրանցքի կառուցման վերաբերյալ. «Որ կամեցան... զերկուս ծովսն ընդ միմեանս խառնել՝ այսինքն զծովն որ է ի սահմանս Եգիպտացոյ, և զհնդիկէս ծով՝ այսինքն է Կարմիր ծով: Նախ սկսան զայս գործ ժպրհութութեան գործել Մետովտրիս Եգիպտացի և յետ նորա Դարեհ արքայ մարաց» (Վեցոր, ճառ Դ, էջ 110):

\*  
\*       \*  
\*

Եղիշեն մեկ այլ ծավալուն աշխատության մեջ ակնարկում է ումն «կադ» *փարավոնի* մասին. «Եւ մինչ դեռ խաղաղասեր վարուք կատարէր զկեանս իւր, եկն ել ի վերայ նորա Փարաուն Կադ յերկրէն եգիպտացոց, եդ ընդ նմա պատերազմ եւ սպան զնա յերկրին Հրեաստանի»<sup>19</sup>:

Գրաբարում *փարաւոն* բառը շրջանառության մեջ է մտել Աստվածաշնչի թարգմանությամբ: Հին կտակարանում բառը ունի 200-ից ավելի կիրառություն, Նոր կտակարանում հաճախական չէ (վկայված է հինգ անգամ)<sup>20</sup>: Բառը հաճախական չէ և 5-րդ դ. ինքնուրույն գրականության մեջ: Այն վկայված չէ Կորյունի, Բուզանդի և Եղիշեի գրքերում (վերջինիս դեպքում նկատի ունենք «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը): Ագաթանգեղոսը և Խորենացին ունեն մեկական վկայություն (նկատի ունենք Խորենացու «Պատմությունը», Փարպեցին՝ երկու, Եզնիկը՝ 4: Եզնիկի վկայությունները նույն համատեքստում են, այսինքն՝ տեղեկությունները միննույն անձի մասին են<sup>21</sup>: Ինքնուրույն գրականության և Նոր կտակարանի օրինակները քաղված են Հին կտակարանի տարբեր հատվածներից:

Այս վկայության մեջ, ինչպէս տեսնում ենք, փարավոնի անձնանվան և թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ որևէ փաստ չկա:

---

<sup>19</sup> Եղիշե, *Վարդապետութիւն ըստ Յովհաննու սիրելոյ ի չարչարանս տեառն* (ՄՇ, Ա հատ., էջ 1004):

<sup>20</sup> Տե՛ս *Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց*, Երուսաղեմ, 2010, էջ 1499-1500:

<sup>21</sup> Տե՛ս *Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանորց*, Ե., 1964, էջ 134:

Փորձենք պարզել, թե եգիպտական բազմաթիվ փարավոնների շարքում ով է հիշյալ «կաղ» փարավոնը:

Կարծիք կա, որ կաղ է եղել Թութանհամոնը:

Վերջինիս դամբարանում հայտնաբերվել է 80 գույգ կոշիկ և ռենտգենյան ուսումնասիրությամբ պարզվել է, որ աջ ոտքը ավելի կարճ է եղել<sup>22</sup>: Վստահորեն կարելի է պնդել, որ Եղիշեի վկայած «կաղ» փարավոնը Թութանհամոնը չէ: Իրադարձությունների նկարագրությունը չի համապատասխանում Թութանհամոնի ապրած ժամանակաշրջանին:

5-րդ դարի թարգմանական գրականության մեջ հիշատակվում է նեքավոլ կաղ փարավոնը. «Եւ ոսկին տային Փարաւոնի նեքաւովր (այլ ձեռ. Նեքաւով) կաղ Փարաւոնի»<sup>23</sup>: Եղիշեն, հավանաբար, նկատի է ունեցել այս վկայությունը:

Հետհինգերորդդարյան գրականության մեջ (ոչ թարգմանական) Նեքավոլի մասին տեղեկություն է հաղորդում Փիլոն Տիրակացին (VII դար). «Յետ սորա թագաւորեաց Յովաքազ՝ որդի իւր, ամս Գ: Չսա կապեաց Նեքաւով արքայ Եգիպտացւոց եւ իջոյց յԵգիպտոս» (ՄՀ, Ե հատ., 2005, էջ 918-919):

13-րդ դ. հեղինակ Մխիթար Այրիվանեցին համարյա կրկնում է հիշյալ վկայությունը՝ հավելելով «կաղ» մակդիրը. «Յովաքազ ամս 3, զսա գերի տարաւ Նաքաւով փարաւոն կաղ»<sup>24</sup>: Ավելի ուշ Զաքարիա Սարկավազը նեքաւով բառը գործածում է ինքնախարագանական «անկարող, անճարակ, տկար» իմաստով. «... և դուք անմեղադիր լերուք, զի այս է կարողութիւն իմ. Զթերին՝

---

<sup>22</sup> St' u www, liveinternet, ru(tags) фараон-Тутанхамон.

<sup>23</sup> Մրբոյն հորն Եւագրի Պոնտացւոյ Վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907, էջ 238:

<sup>24</sup> Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց. Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860 թ., էջ 38:

ձերում գիտութեամբ լցեք, և ներառով Չաքեոսս ի պախարակելոյ ազատ արարեք, և լերուք ողջ հոգւովն Աստուծոյ. Ամէն»<sup>25</sup>:

Եղիշեի վկայած փարավոնի անձնանվան և թագավորության ժամանակաշրջանի որոշման հարցում, անշուշտ, պետք է հենվել համատեքստի այլ անձնանունների՝ աստվածաշնչյան *Յովաքազ*, *Յովսիաս* (Եղիշեի գրքում՝ Ովսիաս) և իրադարձությունների վրա: Այս դեպքում էլ դժվարություններ է հարուցում տարբեր ժամանակներում ապրած, բայց նույն անունը կրող անձանց հանգամանքը<sup>26</sup>:

Աստվածաշնչի և Աստվածաշնչին վերաբերող տարբեր ուսումնասիրությունների և բառարանների վկայությունների համադրմամբ հանգել ենք այն եզրակացության, որ այդ փարավոնը Նեքավովն էր: Բայց եղել է երկու Նեքավով. դրանցից մեկը մ.թ.ա. 667 թ. հավատարմության երդում է տվել Աշուրբանիպալին՝ հետագայում հարելով վերջինիս դեմ գործող ընդդիմությանը: Սա Եգիպտոսի կյանքում որևէ նշանակալից դեր չի ունեցել, իսկ թոռը, որը պատմության մեջ ավելի հայտնի է, թագավորել է մ.թ.ա. 610-594 թթ.: Եղիշեն «Եւ մինչդեռ խաղաղասէր վարուք կատարէր զկեանս իւր» նախադասության մեջ նկատի ուներ այն Յովսիային, որը մահացել է Նեքավովի դեմ մղած պատերազմում՝ մ.թ.ա. 609 թվականին:

Աստվածաշնչում, Ս. գրքի մեկնություններում, հատուկ անունների ցանկերում Նեքավովի «կադ» լինելու մասին խոսք չկա: Ինչ վերաբերում է Եվագր Պոնտացու վկայությանը, կարծում ենք՝ *կադ* բառով հեղինակը Նեքավովի մարմնական արատը չի նշում: Աստվածաշնչյան համարյա բոլոր

---

<sup>25</sup> *Չաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն*, հատոր առաջին, Վաղարշապատ, 1870, էջ 4:

<sup>26</sup> Տարբեր *Յովաքազների և Նեքավովների* մասին տե՛ս Библейская энциклопедия, М., 1891, стр. 348, **Փ. Ա. Брокгауз**, **Ի. Ա. Ефрон**, *Энциклопедический словарь*, т. 38, стр. 953-954, *Еврейская энциклопедия*, С. Петербург, стр. 694, ԲՄԳ, էջ 388-389:

անձնանունները նախապես ունեցել են բառային իմաստ, և այդ բառիմաստները միշտ չէ, որ արտահայտում են այս կամ անձի կամ նրա գործունեության բնորոշ հատկանիշները:

Օրինակ՝ *Ջարուդոն* նշանակում է «բնակարան», *Ջարարիա*՝ «հիշատակ», *Բոնու*՝ «արագություն» կամ «հոգով ուժեղ», *Ովսէէ*՝ «փրկություն», *Մերովբ*՝ «աճումն», *Յովնաթան*՝ «պարզ և տեղան», *Յովնան*՝ «աղավնի»:

Եբրայերեն *Nəkö*, եգիպտ. *Nkaō* նշանակում է «հարվածյալ»: Այս բառիմաստն է պատճառը, որ Նեքավովին Եվագր Պոնտացին (կամ նրա թարգմանիչը) վերագրում է *կադ* մակդիրը:

Այժմ անդրադառնանք *փարաւոն* բառի հետ կապված լեզվաբանական որոշ հարցերի: Ինչպես նշել ենք, գրաբարում գործառության հիմնական ոլորտը Հին կտակարանն է: Քրիստոնեական ժամանակագիրները *փարաւոն*-ը համարում էին հատուկ անուն: Այդ պատճառով էլ մի շարք լեզուներով հրատարակված Սուրբ գրքերում այն գրվում է մեծատառ (հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն), գրաբար և արևմտահայերեն թարգմանություններում նույնպես մեծատառ է, արևելահայերեն՝ փոքրատառ, փոքրատառ է նաև ռուսերենում<sup>27</sup>: *Փարաւոնի* հատուկ անուն դիտելն է պատճառը, որ բառը տեղ չի գտել Նոր հայկազյան և Առձեռն բառարաններում (Ջարմանալիորեն ՆՀԲ-ը չի նկատել նաև *փարաւոն* բաղադրիչով

---

<sup>27</sup> Տե՛ս **Septuaginta**. *Id est Vetus Testamentum Graece*, Stuttgart, 1935, 1939: *Biblia Sacra Vulgata*, Stuttgart, 1969, 1994. *La Bible. Ancien et Nouveau Testament*, 1991, Библия книги священного писания *Ветхого и Нового Завета*, М., 1964. Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վիեննա, 1929: *Աստուածաշունչ* Մատեան Հին և Նոր կտակարանների. արևելահայերէն նոր թարգմանութիւն (վերահրատարակութիւն), Էջմիածին, 1999 թ., *Աստուածաշունչ* գիրք Հին և Նոր կտակարաններու, Moscow, 1994. *Աստվածաշնչի* հին հրատարակություններում (Վենետիկ, 1805, Ս.Պետերբուրգ, 1817) բոլոր հատուկ անունները փոքրատառ են):



կազմությունները). *Փարաւոնակերպ*-ը վկայել է Փարպեցին, *փարաւոնեան*-ը Ագաթանգեղոսը (Առձեռն բառարանը վկայել է միայն *փարաւոնակերպ*-ը):

Ճիշտը, անշուշտ, *փարաւոնը* հատուկ անուն չդիտելն է: Իրականում այն եգիպտական թագավորներին տրվող տիտղոս է: Խուսափելով թագավորի սուրբ անունը տալուց՝ եգիպտացիները ասում են per-oh, որը սկզբնապես նշանակել է «մեծ տուն, պալատ», իսկ XII դինաստիայից սկսած՝ «թագավոր», որը համարվում էր արևի որդի և Օսիրիսի ժառանգորդը (ԵՇՅ, տ. 14, Մ., սրբ. 956): Այդ անվանումը մտել է հին կտակարան phar'օ, իսկ հունարեն *ֆարաօ*, հայ. *փարաւոն* ձևով:

Հայերենում *փարաւոն* բառը ունի գրության մի առանձնահատկություն ևս. խոսքը բառավերջի *ն*-ի մասին է: Հունարենում, ինչպես և եբրայերենում ու ղպտիերենում, առանց *ն*-ի է: Լատիներենում ուղղական հոլովով գործածվելիս Pharao է, հմմտ. «Եւ եղև յետ երկուց ամաց աւուրց ետես Փարաւոն երագ» (Մննդ. ԽԱ, 1), լատ. «Post dous annos vidit Pharao somnium»: Իսկ թերված ձևերում՝ Pharaonis, Pharaoni (Genes. 40, 11): Հունարենում *ֆարաօ*-ն չհոլովվող բառ է:

Հին սլավոներենում *ֆարաօ* է, իսկ հին ռուսերենում՝ *фараонъ*:

Հունարեն *ֆարաօ*-ի հայերեն *փարաւոն* տառադարձումը, կարծում ենք, առաջին հերթին պայմանավորված է գրաբարի ուղղագրության առանձնահատկություններով. հուն. *օ*-ն *աւ* գրելու դեպքում կստացվեր բաց վանկ և կհնչեր \*փարաւաւ, գրության և արտասանության անհամապատասխանություն կստեղծեր նաև բառավերջում *ո*-ի գրությունը՝ փարաւո(յ):

Նկատենք, որ գրաբարյան *ն*-ն մի շարք դեպքերում (նկատի ունենք աստվածաշնչյան կիրառությունները) նաև հոդի դեր է կատարում:

Հայերենի ուղղագրական և արտասանական առանձնահատկություններից ելնելով՝ հայ թարգմանիչները շրջանցել են եբրայերենում և հունարենում գործածվող բառաձևը և նախընտրել ասորերենի *h*-ով գրությունը:

## ԳԼՈՒԽ V

### ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>1</sup>

Փարպեցու կենսագրության որոշ տվյալներ գտնում ենք նրա իսկ հեղինակած «Թղթում»: Եղել է Բյուզանդիայում, ծանոթացել հունական գրականությանը. «Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն... և ջերմ սիրով ընթերցեալ զգրեալս՝ անվնաս և դիրագերծ կարէ լինել հրարձակ նետից չար ձգողացն. զսրբոցն ասեմ զԱթանասէ Աղեքսանդրացոյ, և զերկուց միանուն արանցն՝ զԿիւրղէ Աղեքսանդրացոյ և զԿիւրղէ Երուսաղեմացոյ, և զԲարսղէ Կեսարացոյ, և զԳրիգորէ Նազազացոյ...»: (Թուղթ, 462):

Փարպեցին քաջատեղյակ էր նաև հայ մատենագիրների գործերին և որոշ տվյալներ քաղել է Խորենացուց և Եղիշեից:

Նա դրվատանքով է խոսում Ագաթանգեղոսի մասին. «...Ընդ բազում ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի... յստոյզ և յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարապէս պատմեալ ծանոյց մեզ երանելի Ագաթանգեղոս, այր բանիբուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգի, ստուգարան ի կարգադրութիւն ճառից...» (8):

Փարպեցին, թերևս գաղափարախոսական ինչ-ինչ դրդապատճառներից ելնելով, քննադատում էր, հեզնում Փալստոս Բուզանդին՝ անվանելով «ոմն պատմագիր» (էջ 10): Մեկ այլ տեղ՝ «Արդ այնպիսումն քաղաքի (խոսքը Կոստադնապոլսի մասին է - Լ.Ն.) և ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փալստոս այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս

---

<sup>1</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան. քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Սո. Մալխասյանցի. աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Ե., 1982:

կարգէ՞ր ի պատմութեան իւրում» (12): Շարունակության մեջ, մեղմելով իր քննադատական մոլուցքը, ենթադրում է, որ Բուզանդի որոշ «քննադատելի» հատվածների հեղինակը կարող է ուրիշ մեկը լինել, որովհետև «Ոմանք Հունաստանում, առավել ևս Ասորիքում՝ գաղտագողի դիմում էին այդպիսի անամոթության. տգետ ու հանդուգն մարդիկ իրենք գրում էին դատարկ ու անպիտան ճառեր և իրար խառնելով դնում գիտունների գրքերի մեջ: Հասկացողները հեշտությամբ իրարից կտարբերեն գիտունների խոսքերն ու անմիտների շաղակրատությունները» (13):

Փարպեցու գործերի լեզվի ու ոճական առանձնահատկություններին անդրադարձող բանասերները շեշտում են ժողովրդախոսակցական տարրերի առատությունը՝ համարելով դրանք շեղումներ դասական գրաբարից: Անժխտելիորեն այդ տարրերը կան, որոնք, հեղինակի նախասիրությունից գատ, պայմանավորված են նաև օտար մտածողության, այլ լեզվի (հիմնականում հունարենի) բառակապակցական, շարահյուսական և այլ կարգի ազդեցություններից խուսափելու միտումով, միտում, որ երկը դարձնում է ավելի գրավիչ ու հասկանալի: Համամիտ ենք Վ.Առաքելյանի կարծիքին, որ «Փարպեցին իր գիրքը գրել է շատ մաքուր գրաբար հայերենով, միայն երբեմն կիրառել է ժողովրդախոսակցական բառեր, դարձվածքներ, քերականական ձևեր, շարահյուսություն ու համաձայնություն: ...Փարպեցու խոսքը կիրթ է ու կազմակերպված, զերծ է կցկտուրությունից ու անկապակցությունից... նա չի ձգտել գիտուն երևալ, գրել է իր ժամանակի գրական լեզվով» (Առաքելյան, 1981, 199-200)\*:

---

\* Վ. Առաքելյանի հաշվումներով Փարպեցին կիրառել է ավելի քան 600 նորակազմություն: Այս թիվը չափազանցված է: Մեր հաշվումներով Փարպեցու *Պատմության* մեջ և *Թղթում* նորակազմ բառերի թիվը 350-ի սահմաններում է, այդ բառերից 38-ը վկայված չեն ՆՀԲ-ում:

Անդրադառնանք մի քանի մեկնված և չմեկնված բառերի:

**Ակիտովփեղ**– Այս անձնանունը Փարպեցին վկայել է մեկ անգամ. «... վեր ի վայր տապալեաց զամենայն դառն մտածութիւնս ատն, որպէս գվայրաթոյն խորհուրդն Ակիտովփեղայ» (178): Աստվածաշնչում բառին հանդիպում ենք հիմնականում Աքիտովփեղ գրությամբ:

**Աքիտովփեղ** երբ. նշանակում է «եղբայր խենթության», Դավթի մտերիմներից էր: Աքիտողումի ապստամբության ժամանակ դավաճանեց Դավթին և անցավ վերջինիս կողմը: Իսկ երբ Աքիտողումը չլսեց նրա խորհուրդները, Աքիտովփեղը գուշակեց ապստամբության ելքը և կախվեց. «Եւ Աքիտովփեղ իբրեւ ետես եթէ ոչ եղև խորհուրդն նորա, հանդերձեաց զէջ իւր եւ յարեաւ գնաց ի տուն իւր ի քաղաք, եւ հրաման ետ տան իւրում, և խեղդարկ եւ մեռաւ, եւ թաղեցաւ ի գերեզմանի հօր իւրոյ» (Բ. թագ., ԺԷ, 23):

**Բէեղզեբուղ**– «Եթէ զիս ատեցին՝ և զձեզ ատեն. և եթէ զիս որ տանուտէր էի, Բէեղզեբուղ կարդացին՝ ո՞րչափ ևս առաւել զձեզ և զընտանիս իմ» (456): Փարպեցին նկատի ունի Ս.գրքի հետևյալ հատվածը. «Եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ կոչեցին, որչափ ևս առաւել զընտանիս նորա» (Մտթ., Ժ, 25):

Ծանոթագրվում է. «Հին հրեաները այսպես էին կոչում սատանային» (էջ 457): Այս ծանոթագրումը ճշգրտման և լրացման կարիք ունի: Նկատի ունենալով Նոր կտակարանի վկայությունները՝ աստվածաշնչային մեկնություններում Բէեղզեբուղը համարվում է «չար ոգի, դիվային ուժերի իշխան» (Симфония, 81): Նոր կտակարանում այս բառը, ըստ էության, որպես անձնանուն չի գործածված, այլ փոխաբերական իմաստով՝ «չար ոգի», որն ավելի ցայտուն է դառնում հետևյալ վկայության մեջ. «Եւ դպիրքն, որ յԵրուսաղեմէ իջեալ էին՝ ասէին թէ Բէեղզեբուղ գոյ ի դմա» (Մարկ. Գ, 22):

Այս բառը ռուսերեն և լատիներեն Աստվածաշնչերում գործառում է և Հին կտակարանում (Դ. թագ., Ա 2, 3, 6, 16). «...спросите у Веельзевула, божества Аккаронского: выздоровею ли я от сей болезни? (Դ թագ. Ա, 2): Բոլոր օրինակներում էլ այն հատուկ անուն է՝ աստվածության անվանում: Հայերեն Աստվածաշնչի Հին կտակարանում Բէէղզերուղի փոխարեն գործածված է *Բահաղ Ճանճիկ*. «Երթայք հարցէք ի Բահաղ զՃանճիկ աստուածն Ակկարոնի» (Դ. թագ, Ա, 2), այդպես է և հունարենում՝ βααλ μωϊναν (հուն. μωια «Ճանճ»):

Հին կտակարանի (ռուսերեն) այս անվանումը բառացի նշանակում է «աղբի աստվածություն»՝ (ակկարոնյան աստվածություն, որը պահպանում էր ճանճերից) (Симфония, 81): Նոր կտակարանում Բէէղզերուղը, կարծում ենք, պետք է գրել փոքրատառով: Ռուսերեն Աստվածաշնչի Հին կտակարանում մեծատառ է, Նոր կտակարանում՝ փոքրատառ:

Ինչ վերաբերում է Բէէղզերուղ «աստանա» բացատրությանը, ապա դրա համար հիմք է հանդիսացել թերևս Ս.գրքի հետևյալ վկայությունը. «Եւ անկաւ վիշապն մեծ, օձն առաջին, որ անուանեալ կոչի Բէէղզերուղ եւ Սատանայ» (Յայտ., ԺԲ, 9): Այստեղ հունարեն բնագրից շեղում կա: Հունարենում *Բէէղզերուղի* փոխարեն *բանսարկու* է:

Ըստ Արմ-ի՝ Բէէղզերուղ-ի եբր. համապատասխանակը béelzebub-e է, «որ բուն նշանակում է «ճանճիկ աստուած» և փրղըշտացոց աստուածներից մէկն էր: Եօթանասունք այս բառը մեկնել կամ կարդացել են béelzebūl, որ նշանակում է «աղտեղութեան կամ աղբի աստուած»... ըստ այսմ տառադարձուել է յն. βεελξεβούλ, որից էլ հայերէն ձևը»: Գ. Ղափանցյանը ենթադրում է béel «տեր» և zebul «ղև» բառերը: (Գ. Ղափանցյան, Անտիպ գործեր, Ե., 2008, էջ 7):

**Չանդադան**– «Մի ոմն յՈստանեայ տանէն, որում անուն Չանդադան, սերմն ժանդ, որդի անօրէնութեան» (140): Քննական բնագրի կազմողները և թարգմանիչները *զանդադան*-ը ներառել են անձնանունների ցանկում: Անձնանուն է դիտված և Հ. Աճառյանի Անձնանունների բառարանում. «Ծագումն անհայտ. Ոստանեայ տնից մատնիչ, Վարդանանց գաղտնիքները Վասակին էր տանում» բացատրությամբ (հտ. Բ, էջ 167): Այլ *Չանդադան* անուն բառարանում չկա: Եղիշեի գրքում նույնպես այդպիսի բառ չկա:

Փարպեցին նկատի չուներ այդ դավաճանի իրական անձնանունը, այլ ինքն է հորինել որպես նվաստացուցիչ ածական. բառի առաջին բաղադրիչը՝ *Չանդ*- իրան. Ժանտ (Ժանդ) բառն է՝ «դավաճան, չար, զգվելի»: Իրանական որոշ լեզուներում կան բառեր  $\text{Չ} \rightarrow \text{Շ}$  տարբերակներով, պիլ. *ժանվար*-պրս. *զանբար*, պարթևերեն *ժաման* միջին պարսկերեն *զաման*... և այլն: Իսկ *zandage* նոր պարսկերենում նշանակում է «հավատուրաց, հերձվածող»:

**Խուժիկ**– Փարպեցու մեկ այլ վկայության մեջ առկա *խուժիկ* բառը նույնպես թյուրիմացաբար դիտվել է որպես անձնանուն (գրքի տարբեր հրատարակություններում մեծատառ է և ներառված է անձնանունների ցանկում): Ահա այդ վկայությունը. «Սկսեալ այնուհետև մի ըստ միոջէ պատմել կապելոց նախարարացն Հայոց երանելի այրն Աստուծոյ Խուժիկն, զոր անուանեալ յայսմ հետէ Խուժիկ՝ ծանրանամ և *զանուն սքանչելոյն ոչ ոք հոգացեալ պատմեաց* մեզ» (250) (ընդգծումը մերն է – Լ.Հ.): Ընդգծված նախադասությունն էլ հուշում է, որ Փարպեցին ինքն էլ չգիտեր այդ անձնավորության իրական անունը: Նա բազմիցս եղել էր Հայաստանում, թերևս գիտեր նաև հայերեն, դարձել էր քրիստոնյա և օգնում էր կալանավորված հայ նախարարներին, հավաքում անապատում

նահատակված հայ քահանաների ոսկորները և պատվով թաղում:

*Խուժիկ* բառով Փարպեցին նշում է նրա էթնիկական ծագումը կամ ծննդավայրը՝ *Խուժ* գավառից, *խուժիստանցի*: Իսկ «գոր անուանել *խուժիկ* ծանրանամ» նախադասությամբ Փարպեցին ուզում է ասել, որ ինքը վատ է զգում այդ հայասեր մարդուն խուժիկ անվանելուց:

Խուժիստանի բնակիչները բռի, վայրենի մարդկանց համբավ ունեին, և *խուժ* արմատով իր ապրած դարաշրջանում գործածական էին մի շարք բառեր՝ *խուժ*, *խուժադուժ*, *խուժական*, *խուժան*... «վայրենի, բարբարոս» իմաստներով:

Հավելենք նաև, որ այս խուժիկի մասին վկայում է և Եղիշեն. «Բայց այր մի խուժիկ ի գորացն արքունի ունեք զքրէստոնէութիւնն» (160):

Եղիշեի գրքում, ինչպես գրաբար, այնպես էլ աշխարհաբար թարգմանության մեջ *խուժիկ* իրավացիորեն գրված է փոքրատառ: Քննական բնագրում (գրաբար) սակայն այն գետեղված է անձնանունների ցանկում:

**Կոստանդնուպոլիս**– «Եւ շինեալ քաղաք մեծապայծառ, գոր ըստ իւրում անուանակոչութեանն Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգմանի հայերէն՝ Կոստանդիանոսի քաղաք, գոր ոմանք ըստ Հռովմայեցի բարբառոյն Պաղատն ասեն, որ թարգմանի արքունի» (12): Մի քանի տող վերև Փարպեցին գրում է, այդ բնակավայրը նախկինում մի փոքր «քաղաքիկ» էր Բիւզանդիոս անվանումով: Կոստանդին կայսրը, հաղթելով թշնամիներին, հարթել է տալիս բարձրաբերձ բլուրները և կառուցապատում, ընդարձակում՝ քաղաքը վերակոչում իր անունով:



Կոստանդնուպոլիս- «Կոստանդիանոսի քաղաք»-ը ճիշտ բացատրություն է: Բառի երկրորդ բաղադրիչը հուն. *πολις* «քաղաք» բառն է:

Հին Բյուզանդիոնը հիմնադրվել է մ.թ.ա. 660 թ. Բոսֆորի նեղուցի եվրոպական մասում, որը մ.թ. 330 թ. վերանվանվել է Կոստանդնուպոլիս, իսկ 1453 թ.<sup>2</sup>՝ Ստամբուլ:

*Պաղատն*-ի բացատրությունը նույնպես հավաստի է: Լատիներեն *palatium*-ը բազմիմաստ է. 1.«ապարանք, դղյակ», 2.«Հռոմի պալատինյան բլուրը», 3.«կայսերական պալատ»<sup>2</sup>:

**Տեորասկեդ**– «Եւ ի վերայ բերին երևեր տետրասկեդ յոսկոյ՝ խորանարդ... ծածկեալ յոյժ բարակ կտաւով» (66): Բառի բացատրությունը, ըստ ՆՀԲ-ի՝ «քառոտանի, կամ քառաբարձ կազմած, զոր և դնեն յոյնք ի վերայ մաղզմայի»: Բառը հունարենից կատարված փոխառություն է՝ *τετρασχηλίσ* «քառոտանի»:

Սի քանի պարբերություն հետո Փարպեցին *տետրասկեդ*-ը արդեն ներկայացնում է թարգմանաբար. «Եւ ընդ ահեկէ բերին տեսի աթոռ մի բարձր չորեքկուսի, ծովագոյն սառնակերպ, և ծածկեալ թանձր կտաւով թխագունի» (68):

Ըստ գրաբարի բառարանների տվյալների՝ բառի հինգերորդարյան վկայությունը Փարպեցունն է: «Պատմության» մեջ *տետրասկեդ* գործածվել է երկու անգամ, *չորեքկուսի*-ն՝ յոթ:

**Փաթաղիկէս** - «Ո՛չ զլուսաւորիչն և զտգիտահալած զգրեանն նորա՝ առ անգիտութեան *փաթաղ-իկէս* կոչէին» (Թուրթ., 4821): Բառը ստուգաբանված չէ:

Կան տարբեր կարծիքներ (տես ծան. 32, նաև Արմ, *փաթաղիկէս* բառահոդվածը», այն համարում են «նախատական վերադիր»): Բառը ՆՀԲ-ը և ԱԲ-ը չունեն: Բացառելի չէ սխալագրությունը:

---

<sup>2</sup> И. Х. Дворецкий. *Латино-русский словарь*, М., 1986, 548.

\*

\*

\*

Ակնհայտորեն Փարպեցու աշխատություններում մեկնությունները սակավաթիվ են: Պատճառը, երևի, նախորդներին չկրկնելու սկզբունքն է:

## ԳԼՈՒԽ VI

### ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### I Աշխարհացոյց<sup>\*</sup>

Այս գործի հեղինակի և գրության ժամանակաշրջանի հարցում եղել են ու կան տարակարծություններ: Մանրամասն չենք անդրադառնում բոլոր ուսումնասիրողների փաստարկներին: Նշենք շրջանառության մեջ դրված երկու տեսակետ. *Աշխարհացոյց*-ի մեզ հասած ձեռագրերը, ի բարեբախտություն ուսումնասիրողի, պահպանել են Ե դարի բազմաթիվ իրողություններ, որոնք չէին կարող տեղ գտնել Է դարի հեղինակի երկում... Է դարին աղերսվող մի քանի իրողություններ բնագրային չեն, այլ խմբագրության արդյունք, ուստի չեն կարող փաստաթղթի թվագրման հիմքում դրվել»: Սա Բաբկեն Հարությունյանի կարծիքն է (տե՛ս ՄՀ, հատ. Բ, էջ 2135-2136):

«Աշխարհացոյցի» գիտաքննական բնագիրը հրատարակել է Ալեքսան Հակոբյանը (տե՛ս ՀԱ, 2003 թ., էջ 35-194): Ա. Հակոբյանը «Աշխարհացոյցը» համարում է VII դ. գործ՝ գրված 610-618 թթ.: Չվիճարկելով երկի հեղինակի և գրության ժամանակաշրջանի հարցը՝ նշենք, որ այդ չափազանց կարևոր (տարբեր առումներով) քննական բնագիրը հավաստի նյութ կտա պատմաբանասիրական, լեզվաբանական նոր ուսումնասիրությունների համար:

---

<sup>\*</sup> *Աշխարհացոյցը* ունի մի շարք հրատարակություններ: Հիմնականում օգտվել ենք ՄՀ-ում գետեղված «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց» տարբերակից (ՄՀ, հատ. Բ, էջ 2137-2161): Առանձին դեպքերում հղումներ ունենք այլ տարբերակներից:

Որևէ պատմական գործի հեղինակի հարցը որոշելիս կարևոր են նաև լեզվական փաստերը: Այս առումով մի ուշագրավ դիտարկում ունի Հ. Մանանդյանը. «Խորենացու պատմության մեջ սովորական են բնորոշ դարձվածքներ, ինչպես՝ «գիտեմ», «ոչ գիտեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեեալ», «ոչ հաւատամ», «ճշմարիտ է», որոնք գրեթե չեն հանդիպում մյուս մատենագիրների մոտ: Հետաքրքիր է, արդև ուշագրավ, որ նույն այդ դարձվածքները հանդիպում են շարունակև «Աշխարհացոյցի» մեջ»<sup>1</sup> :

Մեր աշխատանքում էջային հղումները ՄՀ-ից են: Բոլոր վկայությունները կան նաև քննական բնագրում:

«Աշխարհացոյցում» տեղ գտած բոլոր օտար բառերին ու դրանց թարգմանությանը չենք անդրադարձել: Հիմնականում քննության ենք առել այն բառերն ու բառակապակցությունները, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև լեզվաբանական տեսանկյունից:

Հատուկ անունները հիմնականում տեղանուններ ու ցեղանուններ են, հասարակ անունները՝ բնության երևույթներին, կենդանական ու բուսական աշխարհին վերաբերող բառեր: «Աշխարհացոյցի» հեղինակը թարգմանել է օտար անվանումների զգալի մասը կամ այդ անվանումների բաղադրիչներից մեկը: Օտար բառերիև դրանց հայերեն համապատասխանակների հարցին վերաբերող առաջին լուրջ գիտական աշխատությունը Ք. Պատկանյանինն է<sup>2</sup>, որի դիտարկումներին հաճախ անդրադառնում ենք մեր ուսումնասիրության մեջ:

---

<sup>1</sup> Հ. Մանանդյան, *Խորենացու անդրձվածի լուծումը*, էջ 67-68: Հ. Մանանդյանը, սակայն, Խորենացուն V դ. հեղինակ չի համարում:

<sup>2</sup> К. Патканов, *Армянская география VII века по Р.Х.*, СПб, 1877.

«Աշխարհացոյցի» տարբեր բաժիններում տեղեկություններ կան Եվրոպայի, Աֆրիկայի (Լիբիա) և Ասիայի որոշ երկրների մասին:

Եվրոպային և Աֆրիկային վերաբերող բաժինները ծավալուն չեն, բնականաբար, մեկնություններն էլ շատ չեն: Անդրադառնանք հիշյալ երկու տարածքներին վերաբերող մի քանի բառերի.

### ***Եվրոպա***

***Ամաքսարիու-*** «Իսկ հեթանոսաց բազումս, յորոց մին կոչի Ամաքսարիու՝ որ են Սայլակենցադք» (2143): Հուն. αμαξεω նշանակում է «սայլով ճամփորդել»: *Սայլակենցադ*-ը կարելի է թարգմանել «քոչվոր»: ՆՀԲ-ը, բառը դիտելով որպես հատուկ անուն, *սայլակենցադ*-ը չի վկայել:

***Բոնոսու-*** «Յարեւելից սահմանի Դանոբ գետով ունի աշխարհս վեց լինի անդ բոնոսու գագանն՝ որպէս գեգն» (2143): Հուն. βόνασοս նշանակում է «վայրի ցուլ» (Արմ.):

***Սլաւք-*** «...մեծ աշխարհ Դակիա, յորում բնակեն սլաւք» (2144): Սլավոնների (ռուս. славянин) բառի ստուգաբանության բազմաթիվ փորձեր կան: Ավելի հավանական է համարվում, որ «այն ածանցյալ է ջրանունից. հմմտ. Славутич՝ Դնեպր գետը, Служя՝ Վազուլա գետի վտակը»<sup>3</sup>:

### ***Աֆրիկա***

***Արմատակերք-*** «Ունի և գաւառս ազգաց երեսունեւվեց յորոց մինն կոչի Բաբելացիք եւ Արմատակերք» (2146): Հուն. Բιζοφάγοι-ի թարգմանությունն է: Բառարանն էլ նշում է որպես

---

<sup>3</sup> М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. III, стр. 664, Москва, 1987.

Եթովպիայի ցեղերից մեկի անվանում, որ վկայել է Դիոդորոս Սիկիլիացին (Дворецкий, 1453):

**Բարձրագագաթունք**- «Յորոյ ելից կուսէ Բարձրագագաթունք Եթովպացիք, եւ այլ ի ներքս Մարդակեր Եթովպացիք» (2146): Ք. Պատկանյանը գրում է, որ ինքն էլ չկարողացավ պարզել, թե եթովպական որ ցեղերն են կոչվում բարձրագագաթուն (Патканов, 27):

**Բարձրագագաթն** բառը (ոչ որպես ցեղանուն) կա և Խորենացու «Պատմության» մեջ, որը ըստ ՆՀԲ-ի առաջին վկայությունն է. «...երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարսպեալ լեռանց» (I, ԺԲ): Ուրեմն՝ հիշյալ բառը շրջանառության մեջ է մտել Խորենացու կողմից հունարեն համապատասխանակի թարգմանությամբ:

**Գեհոն**- «Բայց գետ ունի Եգիպտոս մի՝ զՆեղոս, որ է Գեհոն» (2145): Նույն վկայությունը ունի և Փիլոն Տիրակացին. «Գետն Գեհովն, որ կոչի Նեղոս» (ՄՀ, հ. Ե., 907): Ս. գրքում Գեհոնը համարվում է դրախտի երկրորդ գետը. «Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն. Նա պատէ զամենայն երկիրն Եթովպացացոց» (Ծննդ. Բ, 13): Այստեղ էլ Գեհոնը նույնացվում է Նեղոսի հետ: Ծանոթագրվում է, որ եբրայերեն բնագրում *Եթովպացոց*-ի փոխարեն *Քուշայ* է: Ռուսերենում էլ Куш է. «...он обтекает вся землю Куш»: **Գեհոն**-ի բառիմաստի և տեղադրման վերաբերյալ առկա են մի շարք կարծիքներ. Գեհոն՝ «առու», «սրբոնթաց». ոմանք այն համարում են Արաքս գետը, ոմանք էլ՝ միայն Վերին Նեղոսը:

**Երեկորնական**- «... ուր կան Երեկորնական պարտեզքն (2145): «... առ որով բնակեալ են Երեկորնականք Եթովպացիք» (2168): **Երեկորնական** նշանակում է «երեկոյան»: ՆՀԲ-ի վկայած երեք օրինակներից երկուսը «Աշխարհացոյց»-ից են:

Բառարանագիրները նշում են, որ հունարենում և լատիներենում ունի նաև «արևմտյան» իմաստը:

**Լինգնասս-** «Լինգնասս, սպուռինք, արջամկունք և այլ բազում սքանչելի գազանք» (2145): Մեր մատենագրության մեջ եզակի վկայություն է: Հ. Աճառյանը գրում է. «Անշուշտ օտար բառ է, բայց աղաւաղուած» (Տե՛ս Արմ, *Լինգնասս* բառահոդվածը): Գ. Ջահուկյանը համարում է փոխառություն, որի բուն աղբյուրը չի հավաստված: Նշված կենդանանունները ՆՀԲ-ը չի վկայել: Թերևս հուն. *λύγξ, γχοσ* «լուսան» բառի աղավաղ ձևն է:

**Կինաբառիս-** «Ասէն թէ կայ ի լերինս այս որք ընդիր կինաբառիս հանեն, այսինքն դեղ կարմիր» (2145): ՆՀԲ-ը բառը մեկնում է «անուն կարմիր ներկոյ»՝ նշելով հուն. *κινάβαρις, κιννάβαρι*, լատ. *cinnabaris* գուգահեռները: Բառարանի բնագրային միակ օրինակն էլ «Աշխարհացոյց»-ից է: Հ. Աճառյանի կարծիքով հունարեն բառը «անշուշտ արեւելեան փոխառութիւն է» (Տե՛ս Արմ, *Կինաբառիս* բառահոդվածը):

**Ձկնկեր Եթոպացիք-** «Եւ յերի նոցա ըստ հիւսիսոյ, առ Ովկիանոսիւ, Ձկնկեր Եթոպացիք...» (2183): Հունարենից կատարված թարգմանություն է (տե՛ս Патканов, стр. 26): Հուն. *Ἰχθυοφάγοι* «ձկնակերներ» (Արաբական և Պարսկական ծովածոցի ավազանի մի շարք ժողովուրդների անվանում) (*Дворецкий, 844*): Ձկնակերների մասին վկայել է և Հերոդոտը<sup>4</sup>:

**Պիռոն-պեդոն-** «Ունի և ազգս վեշտասան, եւ գՊիռոն-պեդոն, որ է Հրագոյն դաշտ» (2144): Բառակապակցության երկու բաղադրիչներն էլ հունարեն են *πυρ*՝ «օ» «վարդագոյն, բոսոր, ծիրանագոյն» և *πεδιάς* «հարթավայր»:

**Պիսինոն** - «Ոստի ասէ Եզեկիէլ ասր բերել ի Տիրոս, այսինքն ծովու բուրդ, որ է պիսինոն» (2145): Հուն. *βύσσινον*

---

<sup>4</sup> Տե՛ս Հերոդոտոս, *Պատմություն ինը գրքից*, թարգմանությունը Միսնս Կրկյաշարյանի, Ե., 1986, էջ 168-171:

«շատ նուրբ վուշից շինուած», βυσσοσ «բեհեզ, շատ նուրբ վուշ» (Տե՛ս Արմ, *Պիսիհնոն* բառահոդվածը): Բառը վկայված չէ ոչ ՆՀԲ-ում և ոչ էլ ԱԲ-ում:

**Պղնձափորանոց** - «Ունի գաւառս ազգաց քսանեւերն, եւ պղնձափորանոց» (2145): Այլ տարբերակում՝ «Գաւառսս քսան եւ հինգ, եւ զպղնձափորանոց երկիրն» (2167): ՆՀԲ-ում բառը չկա, ԱԲ-ը ունի՝ «Պղնձի հանք ունեցող [երկիր]: Բառարանը նկատի է ունեցել էջ 2167-ի տարբերակը:

*Պղնձափորանոց*-ը հուն. Χαλκωροχειον «պղնձահանք»-ի թարգմանությունն է:

**Տրոպոլի** - «Տրոպոլիք՝ որ է երեք քաղաք» (2145): Այլ տարբերակում՝ *Տոիպալիս* (2182): *Տրոպալիս* (2167): Հուն. տրեΐσ, τρια «երեք» և πολισ «քաղաք»:

## **Ասիա**

Ասիային վերաբերող բաժինը ամենածավալունն է: Նպատակահարմար գտանք նյութը ներկայացնել որոշ դասակարգումներով:

### **1. Տեղանուններ**

**Այրեցած (այրեալ) գաւտի** - «Քանզի ի վերայ Այրեցածին ... փոքր Արջն գերիվերոյ կալով երկրի ի հիւսիսային կողմանն...» (2137): «Արդ այսպէս չափեցին գերկիր և զծով, սկսեալ յԱյրեալ գաւտոյն, յորում ոչ ինչ բուսանի» (2138): «Բայց հաւանեալ եմ զարանցն Պտղմեայ, որք շուրջ եկին զայրեցեալ գաւտեան» (2139):

ՆՀԲ-ը *Այրեցած գաւտի* տեղանունը մեկնում է «Տապագին գօտի երկնից ընդ հասարակածին»: Խորենացու «Պատմության» ներքոբերյալ հատվածը որոշ ընդհանրություններ ունի «Աշխարհացոյցի» վկայության հետ. «...գոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղմեայ ասպարիսօք



գրնակութիւնս մարդկան չափեցին, այլ և մասն ինչ գծով և զանբնակս յայրեցածէն մինչև զՔիմիւռոն» (I, L(L,U):

*Այրեցած և բազմաշրջութիւն* բառը 5-րդ դ. ինքնուրույն գրականության մեջ առաջինը գործածել է Մ.Խորենացին:

*Արուաստան* - «Արուաստան, որ կոչի Ասորեստան՝ այս ինքն Մուծդ» (2174): Ըստ Ք. Պատկանյանի՝ Սասանյանների օրոք Արուաստան էր կոչվում Ասորեստանի հյուսիսային մասը (Патканов, 64):

Հ. Հյուբշմանը ենթադրում է, որ *Արուաստան* բառը կազմված է ասոր. 'Araw «արաբ» և պրս. stān տեղանվանական ածանցով, այսինքն՝ Արաբստան<sup>5</sup>:

Տեղանունների բառարանում *Արուաստանը* ներկայացված է մի շարք տարբերակներով՝ Արվաստան, Առվաստան, Արևաստան, Արվեստական, Միգդոնի «Երկրամաս Մեծ Հայքի հարավային մասում, Հայոց Միջագետքում, կենտրոնը Մծբին քաղաքն էր» (ՀՀՇՏԲ, հ. I, էջ 487):

*Ճենք, Ճենաց աշխարհ* – Այս երկրի մասին վկայություն կա նաև Խորենացու «Պատմության» մեջ, որտեղ մի շարք տեղեկություններից զատ նշվում է նաև Մամիկոնյան նախարարական տոհմի ճենական ծագման մասին: Ուսումնասիրողները համակարծիք չեն Ճենաստանի տեղադրության, բնականաբար նաև այդ երկրի էթնիկական պատկանելության հարցում:

Ոմանք Ճենքը համարում են Չինաստանը (որն ի դեպ գերիշխող կարծիք է), մյուսները՝ մերժում: Խորենացու «Պատմության» հին և նոր թարգմանությունների ծանոթագրություններում անվերապահորեն Ճենքը համարվում է Չինաստանը:

---

<sup>5</sup> Հ. Հյուբշման, *Հին հայոց տեղոյ անունները*, Վիեննա, 1907, էջ 180, ծան. 2:

Մ. Էմինը ծանոթագրում է Тченк', Ճենք, китайцы, Китай<sup>6</sup>, Խ. Ստեփանեն՝ «Ճենք անունը, թէ երկրի նկարագրութիւնը ցոյց են տալիս, որ այժմեան չինացիներն և Չինաստանն է նշանակում»<sup>7</sup>: Գ. Սարգսյանը նույնպէս այդ կարծիքին է. «Страна ченов –Китай, чены-китайцы»<sup>8</sup>:

Պատմարան Հ. Սվազյանը, մանրամասն քննելով հայկական աղբյուրների վկայությունները և դրանց հիման վրա տարբեր ուսումնասիրողների հայտնած կարծիքները, գրում է. «Հայկական աղբյուրների ճեները, ոչ մի դեպքում չեն կարող լինել ո՛չ ճաները և, առավել ևս, ո՛չ չինացիները: Այդպիսի նույնացումը անվանումների սոսկ արտաքին նմանության հետևանք է»: Հեղինակի կարծիքով «Ճենաց երկիրը պետք է տարածված լիներ Պարսկաստանի արևելյան սահմաններից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին»<sup>9</sup>: Բնականաբար ենթադրվում է, որ տարածքում ապրող բնակիչները իրանական ծագում ունեցող ժողովուրդներ էին: Միանգամայն ընդունելի համարելով այս տեսակետը՝ փորձենք հիմնավորել այլ փաստարկներով, այդ թվում՝ լեզվաբանական տվյալներով:

Նախքան հիմնավորումներին անցնելը՝ բերենք «Աշխարհացոյցի» և «Պատմության» այն հատվածները, որոնք վերաբերում են Ճենքին:

---

<sup>6</sup> *История Армении Моисея Хоренского*, новый перевод **Н. О. Эмина**, М., 1893, ծան. 315:

<sup>7</sup> *Մովսես Խորենացու Հայկական պատմութիւն*. Աշխարհաբար թարգմանեց և լուսարանեց Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 212-213, ծան. 479:

<sup>8</sup> **Мовсес Хоренацци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, введении и примечания Гагика Саркисяна, Е., 1990, стр. 252, ծան. 527:

<sup>9</sup> **Հ. Այվազյան**, *Ճեները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների*, («Պատմաբանասիրական հանդես», 1976 թ., N 4, էջ 207):

«Աշխարհացոյց»-ից - «Աշխարհ Ասիոյ Միւնիկկա է, որ է Ճենք, յելից կալով Սկիւթիոյ. սահմանի նովաւ ի մտից... և է Ճենաստան ընդարձակ դաշտս... Ունի լերինս վեց, եւ լինի անդ դարիճենիկ և կասիմոն ... հրէշ և մուշկ և սիրամարգ շատ...» (ՄՀ, 2160):

Մյուս խմբագրություններում «լինի անդ դարիճենիկ» նախադասությունից հետո ավելացված են *հռչիքուակ, բուիճենիկ* բուսանունները, և չկա *Աշխարհ Ասիոյ Միւնիկկա է* նախադասությունը (ՄՀ, 2175, 2191):

«Պատմություն»-ից - «Վախճանեալ Արտաշրի որդւոյ Մասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապիոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարևելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն...» (II, 2Ա): Խորենացին նույնպէս որոշ տեղեկություններ է հաղորդում Ճենքի բուսական և կենդանական աշխարհի, զգեստների մասին: Պատմական, լեզվաբանական տեսանկյունից արժեքավոր փաստեր են ճենացիներին վերաբերող մի շարք անձնանուններ՝ Արբոկ, Ճեն-Բակուր, Բդդոխ, Մամգուն (II, 2):

Թե՛ «Աշխարհացոյցի», թե՛ «Պատմության» մեջ Ճենքին վերաբերող հատվածներում որևէ էական բան չենք գտնում, որ բնորոշ լիներ Չինաստանին: Նախքան այդ փաստերին անդրադառնալը՝ նշենք, որ Առաջավոր Ասիայի (այդ թվում և Հայաստանի) ու Եվրոպայի հետ Չինաստանի առևտրային հարաբերությունները սկսվել են, այսպես կոչված, «մետաքսի ճանապարհի» շնորհիվ, որ գործում էր մ.թ.ա. II դ. մինչև մ.թ. V-VI դարերը: Սա դեռևս չի խոսում հայ-չինական աղերսների մասին, որովհետև «մետաքսի ճանապարհի զգալի մասը

պարսկական-սողդիական վաճառականների ձեռքում էր» (ՀՄՀ, հ. 7, 485):

«Աշխարհացոյցի»՝ տարբեր երկրներին վերաբերող բաժիններում մանրամասն նկարագրվում են այդ տարածքների աշխարհագրական առանձնահատկությունները, ժողովուրդների արտառոց բարքերն ու կենցաղը: Ճենքի նկարագրության մեջ չինացիներին բնորոշ որևէ առանձնահատկություն չի նկատվում: Չի խոսվում նրանց արտաքին տեսքի, մաշկի գույնի, դիմագծերի մասին, խոսք չկա նաև չինացիների արտառոց ուտելիքների մասին: Ասում են՝ չինացիները ուտում են այն ամենը, ինչ կա երկրի վրա և գետնի տակ, այդ թվում՝ սողուններ, ճանճեր, միջատներ...: Ոչ միայն չի խոսվում այդ մասին, այլև «Պատմության» մեջ Խորենացին ճենքի ուտեստները համարում է «պատուական և սակաուց ճաշակելիս»: Ոչ մի տեղեկություն չի հաղորդվում նաև չինարենի մասին:

Հին չինարենի վանկը, հետևաբար և արտասանությունը, զգալիորեն տարբերվում է հ.-ե. լեզուների բառակազմական և հնչական իրողություններից: Վանկի կազմում որոշ բաղաձայններ թերևս կատարում էին նախաձայնների կամ վերջաձայնների դեր, իսկ յուրաքանչյուր վանկ կարող էր ունենալ 2-4 իմաստազատիչ դեր:

Եթե լեզվական այս և նման կարգի իրողությունները ծանոթ լինեին հայ հեղինակին, ապա գոնե թռուցիկ ակնարկ կլիներ չինարենի մասին:

Դժվար է պատկերացնել, որ հայերի լեզվամտածողությանը անծանոթ մի մարդ (կամ մարդկանց խումբ) կարող էր Հայաստանում հաղթահարել լեզվական հաղորդակցման խոչընդոտները, տիրապետել ազգային, կրոնական, կենցաղային առանձնահատկություններին և ստեղծել հզոր նախարարական տոհմ:

«Աշխարհացոյց»-ում ճենաց աշխարհի բուսական և կենդանական աշխարհին վերաբերող թվարկումների շարքում ոչ մի չինարեն բառ չկա, գերիշխող են պարսկերեն բառերը՝ *դարիճենիկ, հոշիբուակ, բուիճենիկ, հրէշ, մուշկ, սիրամարգ, քրքում...* (էջ 175): (Մյուս հրատարակություններում չնչին տարբերություններ կան): Հ. Աճառյանի կարծիքով *սիրամարգ* բառը ծագել է *սինամարգ* ձևից և փոխառյալ է իրանական լեզուներից (տե՛ս Արմ. Միրամարգ բառահոդվածը): *Մարգ* բաղադրիչը ակնհայտորեն իրանական է, իսկ սին-ը հավանորեն *չին*(ական) բառն է: Այս փաստն էլ իր հերթին վկայում է, որ միջին իրանական լեզուներում (նաև ավելի վաղ) Չինաստանի անվանումը *ճեն* արմատով չէր: *Մին* արմատը պահպանվել է նաև հայկական ժողովրդական հեքիաթներում՝ Մինամ թագավորի և Մինամ հավքի պլուծներում, որոնցում Չինաստանը ներկայանում է որպես կախարդական աշխարհի խորհրդանիշ<sup>10</sup>:

Խորենացու «Պատմության» *ճենք*-ին վերաբերող բաժնում կա և *էշայծեամն* բառը, որը ՆՀԲ-ում եզակի վկայություն է: Նշված կենդանանունն էլ պրս. xārbūz-ի (xār «էշ», būz «այծ») պատճենումն է:

Մեզ հետաքրքրող հատվածներում հանդիպող որոշ անձնանունների չինական ծագում վերագրելը նույնպես մերժելի է:

Գ. Մարգսյանը նկատում է, որ «Մամիկոնեան» տոհմանվան ստուգաբանությունը եռաստիճան է. «Մամիկոնեանը ստուգաբանվում է «Մամգոնեանով», սա էլ՝ «Մամգոնով»: Անանունի տարբերակով այն ստուգաբանված է գույգ՝ Մամիկ և Կոնակ անուններով: Մամիկ անունը, եթե

---

<sup>10</sup> Տե՛ս Ն.Վարդանյան, *Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ*, «Ոսկե Դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 3, 2011 թ., էջ 89:

հետևենք Մարքվարտին, հիշատակում է *դեռևս Տիգրան Մեծի կապակցությամբ*, Ապպիանոսը» (ընդգծումը մերն է- Լ.Հ.)<sup>11</sup>:

*Մամզոն* անունը հիշատակվում է նաև Խորենացու «Պատմություն» երկրորդ գրքի ՁԴ գլխում. «Գնաց Մամզոն ամենայն աղիսին իւրով զկողմամբք Տարօնոյ... և կարգէ (Տրդատ) գնա նախարար ... անուանելով անուն իւր Մամզոնեան»:

Հ. Աճառյանը Մամզոնը ստուգաբանում է չին. Man-gun «հարավային արիական այլազգիների իշխան» (Անձ. բառ., հ. Գ, Ե., 1946, էջ 184): Այս ստուգաբանությունը հուշում է, որ Մամզոնը չինացի չի կարող լինել:

*Բակուր* անձնանվան «չինա-թյուրքական» ծագման փաստարկները նույնպես համոզիչ չեն: Ումանք բառը բացատրում են «որպես թյուրքական fagtür, չինարեն Tsen-tze «արեգակի որդի» բառի թարգմանության հայացված ձև»: Ավելի հավանական է բառի իրանական ծագումը bāg «աստված» և puh<puh «որդի»: Այնքան էլ տրամաբանական չէ, որ Չինաստանից եկած մեկի անունը, այդքան շուտ և շատ տարածվեր Հայաստանում, ապա հայերի միջոցով՝ Վրաստանում: Անձնանունների բառարանում նշվում են մի շարք Բակուրներ: Այդ անունը գործածված է եղել մ.թ.ա I դարից:

Գ. Աբգարյանը, անդրադառնալով Ճենաց դեսպանի հետ ունեցած զրույցի վկայությանը, նկատում է, որ «Ճենացիները (եթե դրանք իրոք չինացիներ են) դեսպանի՝ Հայաստան եկած ժամանակներում չէին կարող իրենց լեզվով, այսինքն՝ միջին չինարենով ճշգրիտ արտասանել ո՛չ Արտավան, ո՛չ Խոսրով և ոչ

---

<sup>11</sup> Գ.Մարգարյան, *Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ* («Պատմագիտական հետազոտություններ», Ե., 2006 թ., էջ 102):

էլ գրույցում հանդիպող մյուս այն անունները, որոնց կազմում ր հնչյուն կա»<sup>12</sup>:

Հ. Աճառյանը *Կոնսկ* անձնանվան ծագումը համարում է անհայտ նշելով, որ նա չինացի նախարար էր, «որդի Կառնամի. իր Մամիկոն եղբոր հետ փախավ Հայաստան Մեծն Խոսրովի ժամանակ», սրանցից սկսվեց Մամիկոնյան տոհմը (Անձ. բառ.):

*Կոնսկ* անձնանունը Խորենացին հիշատակում է I գրքի ԻԲ և II գրքի ՀԹ գլուխներում: Հ. Աճառյանի կարծիքով «Խորենացու հիշատակությունից պարզ չէ, թե ով է» (ն.տ., էջ 647): Մ. Աբեղյանը Կոնսկներից մեկին համարում է Հայոց թագավոր, մյուսին Պարսից գորավար (տե՛ս էջ 380):

Ակնհայտ է, որ նշված անձնավորությունները չինացիներ չեն, բնականաբար անուններն էլ չինարեն չեն: Դառնանք *Բողոխն* անձնանվանը: Ստ. Մալխասյանը բառը առնչում է մոնղոլերեն Բողդիխան-ի հետ, որը չինական թագավորներին տրվող տիտղոս է<sup>13</sup>: Հ. Աճառյանը նկատում է. «Անհնարին է Խորենացու *Բողոխը* միացնել, *Բողդիխանի* հետ, որովհետև անհնարին է Ե դարում ապրող Խորենացու մեջ գտնել  $\eta=\gamma$ : Նա կարդացվում է միայն *Բըլղոխ*» (տե՛ս Արմ., հ. IV, էջ 653):

Մեկ դիտարկում ևս. բազմաթիվ լեզուներում *Չինաստան* բառի արմատի ձայնավորը *ի* է. հմմտ. անգլ. China, գերմ. China, իտալ. Cina, պրս. *չինի* (չինական), ռուս. Китай, ուլղուրերն Kytta, հին թյուրք. Qytan...:

Չին(աստանը) եթե լիներ Ե դարում հայերենում վկայված *Ճենքր*, *Ճենաց աշխարհը*, ապա վերջինները պիտի ունենային \*Ճինք կամ \*Ճէնք, \*Ճէնաց գրությունը, քանի որ գործում է է-ի

---

<sup>12</sup> Գ. Աբգարյան, *Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ* («Բանբեր Մատենադարանի», N 7, 1964թ., էջ 247):

<sup>13</sup> Տե՛ս Սովսես Խորենացի, *Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները* Ստ. Մալխասյանի, Ե., 1981 թ., էջ 504, ծան. 222:

հնչյունավորությունը և ոչ թե՛ *ե*-ի (հմմտ. վեմ-վիմի, տեր-տիրոջ, սեր-սիրոյ... և այլն):

Վերոհիշյալ և այլ ուսումնասիրողների կողմից բերված փաստարկները թույլ են տալիս եզրակացնելու, որ V դ. վկայված Ճենք-ը Չինաստանը չէ, և, բնականաբար, Մամիկոնյան նշանավոր տոհմին չինական ծագում վերագրելը մերժելի է:

*Ճենեքը*, ամենայն հավանականությամբ, պարթևներին ցեղակից ժողովուրդներ էին՝ հայերի հետ հեռավոր ծագումնաբանական կապով և, որ պակաս կարևոր չէ, լեզվական, հատկապես, բառապաշարային շատ ընդհանրություններով:

Հայերենում *չին* անվանումը վկայված է ուշ շրջանից՝ ՆՀԲ-ի տվյալներով ԺԳ դարից: Հիշյալ բառարանի վաստակաշատ հեղինակներն էլ նույնպես *Ճենք*-ը Չինաստանը չեն համարում: Բառարանը Խորենացու վկայած Ճենագգեայ, Ճենագն մեկնում է «Որ է յազգէ Ճենաց», իսկ Վարդան պատմիչի՝ «Օտարադէմ և այլալեզու շարժել ի *չին* և ի *մաչին* աշխարհէ» օրինակի *Չին*՝ ճշգրտորեն մեկնում՝ «Աշխարհ և ազգ քինաց կամ սինէացոց» (ՆՀԲ, հ. III, էջ 179, 576):

Չինաստանը, ամենայն հավանականությամբ, «*Աշխարհացոյց*»-ի Աշխարհ Միւնեցոցն է. «Աշխարհ Ասիոյ Միւնեցոցն է, առ երի Ճենաց, սահմանի նովաւ ի հիւսիսայ, իսկ ի յելից եւ ի հարաւոյ Անձանոթ երկրաւ» (2161, այլ տարբերակում՝ *Մինէացոց*):

*Պաւլիտիմիտոս* – «Երրորդ ծով՝ Վրկանին է, որ կոչի Կասբից եւ ձգի երկայնութիւն նորա ի բերանոյ Երասխայ... մինչեւ ցՊաւլիտիմիտոս գետոյ, որ թարգմանի բազմապատիկ...» (2141), այլ տարբերակում՝ *Պաւլիտիմետոս* (2165):

Բառը կազմված է հուն. πολός «շատ, բազում» և τμήσις, ητος «հարստություն» բաղադրիչներից:



**Վրկան-(Վրկանի)** - Կասպից ծովի անվանումն է: Բառի արմատը հնդիրանական *vṛka* «գայլ» է: *Գայլ* բառով ջրանուններ շատ կան. *Գայլ* (գետ Հայաստանում): Հուն. *λύκος*-ից՝ գետանուններ Փոյուզիայում, Մարմատիայում:

**Քուստի Նեմոզք** - «Պարսք, որ կոչին Քուստի Նեմոզք» (2174), այլ տարբերակներում՝ «Քուստի Նեմոզ, որ կողմն էր միջալրեայ, որ է հարալ» (2157): «Պարսք են, որ կոչին Քուստի Նեմեռոս» (2190):

Տեղանվան բոլոր բաղադրիչները պարսկերեն բառեր են՝ քուստ «կողմ», նեմ (*nēm*) «կես» և *rōz* «օր»: Միջինիրանական լեզուներում առկա են *č* (*ḍ*)-*z* (*q*)-ով տարբերակները: *rōč* «օր», որից միջ. պրս. *ročik* – ռոճիկ «օրապահիկ», ուրեմն՝ հնարավոր է և նեմոճ տարբերակը: *Նեմոզ, նեմոս* ձևերը կարելի է համարել արտասանական տարբերակներ:

*Քուստ* բաղադրիչով վկայված են իրանական այլ հատկանուններ. «Քուստի Խորասան, որ կողմ է արեւելից» (2157), «Քուստի Կապկոհ, որ կողմն Կալկասու լեռանց» (2157): *Քուստ*-ը իրան. *kausa*, *kōs* (հայ. կոյս «կողմ») բառի տարբերակներից մեկն է: *Կոյս* «կողմ» բաղադրիչով են կազմված *կուսակալ, կուսակալեն, կուսակալութիւն, կուսակցիւմ* «կողմնակից լինել» բառերը:

«Կոյս»-ի «գոս» տարբերակային ձևը նույնպես կա, այն առկա է իրանական լեզուներից փոխառյալ *պասոգոսապան* «երկրակալ, գավառապետ» բառում:

Վերը նշված *նեմոզք* բառը միջին պարսկերենում ունի և «հարալ» իմաստը: Ուրեմն՝ «Քուստի Նեմոզք, որ է կողմն միջօրեայ, որ է հարալ» ճիշտ մեկնությունն է: Գրաբարում նույնպես միջօրեայ ունի «կեսօր» և «հարավ» իմաստները:

*Մի դիտարկում* *ևս*. Հայկազյան բառարաններում (ՆՀԲ, ԱԲ) *նեմոզք* վկայված չէ, իսկ ստուգաբանական բառարաններում

նշվում է որպես իրանական փոխառություն: Կարծում ենք՝ օտար բառակապակցային բաղադրիչը առանձին փոխառյալ բառ դիտելը այնքան էլ համոզիչ չէ: (Ստուգաբանական բառարաններում *քուստ* բաղադրիչը՝ որպես առանձին գլխաբառ, իրավացիորեն զետեղված չէ):

Այդ կարգի բառակապակցություններից են Քուստի Խորասան, Քուստի Կապկոհ, Բահլի Բամիկ (2157-2158), որոնք նաև իզաֆետային կազմություններ են՝ բնորոշ միջին պարսկերենին:

## 2. Ցեղանուններ, բնակիչների անվանումներ

*Ասկիտե* - «Բնակիչք աշխարհին երեք կերպս գոյս ունին, ոմանք քաջասեք են և ոմանք կիսասեք, որոց ազգ որ կոչի Ասկիտե՝ որ է կրանաւորք» (2157):

*Կրօնաւոր*-ը նշանակում է «ճգնավոր, մենակյաց, աշխարհական կարգից հրաժարված» (ՆՀԲ): Բառարանը տալիս է նաև հուն. համարժեքը՝ *ασκητής*: Վերջինիս «կրոնավոր, մենակյաց» իմաստը հունարենի բառարանում արձանագրված չէ (տե՛ս *Дворецкий*, I, 248): Լատ. կա *ascētērum* «ասկետների ապաստան», այսինքն՝ «վանք»:

ՆՀԲ-ում *կիսասեւ* և *քաջասեւ* բառերով միակ բնագրային վկայությունը վերոհիշյալ նախադասությունն է: Նկատենք, որ Խորենացին *քաջ* բաղադրիչով բազմաթիվ կազմություններ ունի նաև «Պատմության» մեջ, որոնք V դ. մատենագրության մեջ միակ կամ առաջին վկայություններն են, ինչպես՝ քաջաբեր, քաջագօտի, քաջագգի, քաջախոր, քաջաձի, քաջաղեղն, քաջամատն, քաջասուն, քաջափոյթ, քաջերէ... և այլն:

**Ձիակերք** - «Եւ ի հիւսիսոյ առ Անձանոթ երկրաւ բնակեն թագաւորական Սարմատք և Ձիակերք» (2149): Հուն. Ἴπποφάγοι-բառի թարգմանությունն է (տե՛ս Патканов, էջ 36):

**Մերկիմաստունք**- «Եւ ազգն Մերկիմաստնոց ոչ ուտեն այլ ինչ՝ բայց միայն միրգ և բրինձ և շաքար» (2159): Խոսքը Հնդկաստանի բնակիչների մի խավի մասին է: ՆՀԲ-ը մերկիմաստակք/ մերկիմաստասերք-ը մեկնում է «իմաստակք կամ իմաստասերք հնդկաց, որք մերկ կամ կիսամերկ շրջին»: Հուն. Γυμνοσοφοισται<sup>14</sup>: **Մերկիմաստասերք**-ը վկայված է նաև «Ալեքսանդրի Պատմության» մեջ. «...այլ մերկիմաստասերք Ալեքսանդրի թագաւորի՝ խնդալ»<sup>15</sup>: Վկայություն կա և VII դարից: «Գիմնոս սոփեստայք, որ կոչին մերկիմաստք» (ՄՀ, հտ. Ե, էջ 909):

**Վայրենակեր**- «Եւ ունին յարեւմտեան կողմանն ազգս յիսունեւիինգ... ոմանք ի նոցա մարդակերք են, եւ այլք վայրենակերք» (2174): ՆՀԲ-ը վկայակոչում է միայն այս օրինակը՝ **վայրենակերք** մեկնելով՝ «կերօղ զվայրի որսս՝ զերէ վայրի»: Ք. Պատկանյանը նշում է հուն. αγριοφάγος զուգահեռը:

Մարդակերների մասին հիշատակում է և Հերոդոտոսը. «Մարդակերները բոլոր մարդկանցից առաւել վայրենի բարքեր ունեն. Նրանք ո՞չ դատ գիտեն, ոչ ևս օրենքներ ունեն և վաչկատուններ են: Նրանք գրում են սկյութականին նմանվող զգեստ, բայց նրանց լեզուն առանձին է: Այս ցեղերի մեջ միայն նրանք են մարդակեր» (Հերոդոտոս, Պատմություն..., էջ 256): **Մարդակեր**-ը հուն. ἀνθρωποφάγος-ի թարգմանությունն է:

---

<sup>14</sup> Դվորեցկու բառարանում նույնպես նշված է, որ հին հույները այդպես էին կոչում հնդիկ փիլիսոփաներին:

<sup>15</sup> Պատմություն Ալեքսանդրի Մակեդոնացոյ, Ե., 1989, էջ 418: Հ. Սիմոնյանը ծանոթագրում է, որ հին մատենագրության մեջ կիրառվել են նաև «մերկիմաստակ», «մերկադաբաղ» նույնանշանակ բառերը, ինչպես նաև բուն հունարեն նախածեր՝ «գիմնոսփեստ» (նշվ. աշխ., էջ 586, ծան. 324):

### 3. Այլ կարգի բառեր

**Ապոռոտիկոն** - «Ի մէջ նոցա Ապոռոտիկոն հնչական և այլ բազում ինչ» (2176): Այլ տարբերակում՝ *ապոռիկիկոն* (2162): Հ. Աճառյանը ճիշտ ձևը համարում է *ապոռիկիկոն*-ը «հարավ» (տե՛ս Արմ *ապոռիտիկիկոն* բառահոդվածը):

Ք. Պատկանյանը ենթադրում է, որ *ապոռոտիկոն հնչական*-ը լատ. flatus apricus- «հարավային քամիներ»-ի թարգմանությունն է (Патканов, էջ 4): Դվորեցկու բառարանում aprici flatus-ը թարգմանված է «տաք քամիներ»<sup>16</sup>: *Հնչական* բառը ՆՀԲ-ը մեկնում է «որ կարէ հնչել, հնչող»՝ հիմնավորելով հետևյալ օրինակներով. «Բարբառ հրեշտակապետին քան զամենայն փող հնչական սաստկացեալ», «Զփողն հնչական», «Պոռոտիկոն հնչական»:

«Աշխարհացոյց»-ի վկայություններում, *հնչականը* ունի բառիմաստային նրբերանգ՝ այն է «քամու փչելը»: Լատ. flato և հայ. *հնչել*-ը բազմիմաստ են, ունեն նաև փչել «քամի» իմաստը: Իմաստային այս նրբերանգներով գրաբարում հոմանիշային եզրեր ունեն նաև *հնչել* և *շնչել* բառերը. «Եթե հողմ շնչեր (կամ հնչեր», «Եկ հարաւ, շնչեա՛ր ի պարտեզ իմ» (ՆՀԲ):

**Առգեղ** - «Լինի առ եզերսն Դակայ գետոյ հող սպիտակ առգեղ անուն, զոր աղացեալ ցանեն ի վերայ ցորենոյ» (2147):

ՆՀԲ-ում բառը չկա: Արմ-ը համարում է փոխառություն հունարենից, հուն. ἄργιλος «կավ»: Բառարանի միակ վկայությունը «Աշխարհացոյց»-ից է:

**Չուկին** - «Լինի անդ իսունկ զուկին՝ զոր Հայք արուս կոչեն» (2147, այլ գրությամբ՝ զուգին): Ըստ Արմ-ի՝ «մի տեսակ

---

<sup>16</sup> И. Х. Дворецкий, *Латино-русский словарь*, М., 1986, стр. 68.

խունկ»: Գ. Ջահուկյանը բառը համարում է փոխառություն, որի բուն աղբյուրը չի հավաստված (ՀՄԲ, 243):

Արուս-ի ծագումը ստուգաբանական բառարանները համարում են անհայտ և մեկնում «սև խունկ»: Բառը ՆՀԲ-ը չի վկայել: Ըստ ԱԲ-ի՝ «խունկի տեսակ մը»:

**Կաստանոն**- «Գտանի պստակ, եւ կաստանոն, որ է մաշկամիրգ» (2152): Բառը առկա է միայն մեկ տարբերակում: Հուն. κάστανον «շագանակ» բառն է, որը փոխառել են մի շարք լեզուներ (տե՛ս Արմ, *կաստանոն* բառահոդվածը):

*Մաշկամիրգ*-ի միակ վկայությունը ՆՀԲ-ում «Աշխարհացոյց»-ից է:

*Մաշկամիրգ*-ը նորաբանություն է, որ ստեղծվել է *կաստանոն* «շագանակ» հասկացության համաբանությամբ: Վրայի կաշենման կճեպի պատճառով է միրգը անվանվել *մաշկամիրգ* (Տե՛ս Արմ, *Մաշկ* բառահոդվածը):

**Միեղջերու**- «Լինի անդ և միեղջերու» (2159, 2175, 2191): Հուն. μονοκέροσ-ի պատճենումն է: Այդ կենդանանունը վկայել են Արիստոտելը, Պլուտարքոսը (Διογενεικὴν, II, էջ 1107):

**Քոռուկիթոս** - «Լինի անդ և քոռուկիթոս, որ է ոսկեքարն» (2156): Հուն. χρυσολιθοσ-ի պատճենումն է: Այդ քարը տոպագ (տպագիոն) է կամ դրա մի տեսակը: Բառը ՆՀԲ-ը չունի:

\*

\* \*

*Աշխարհացոյցը* պատմաաշխարհագրական գիտական աշխատություն լինելուց զատ կարևորվում է նաև գրաբարի բառապաշարի հարստացման, բազմաթիվ նոր բառերի շրջանառության մեջ դնելու առումով: Խոսքը օտար հատուկ անունների թարգմանության կամ պատճենման մասին չէ:

Շարադրանքի ընթացքում այս կամ այն առիթով անդրադարձել ենք որոշ բառերի: Բերենք այլ օրինակներ, որոնք ամենայն հավանականությամբ առաջին անգամ վկայել է *Աշխարհացոյցը*:

**ՆՀԲ-ում չվկայված բառերից նշենք՝**

**Ազգագաւաւտ** - «... և ունի ազգագաւաւտ քառասուն և վեց» (2149):

**Արջամուկն** - «*Լիզնաս, սպուռինք, արջամկունք* եւ այլ բազում սքանչելի գագանք» (2145): Ընդգծված բառերը ՆՀԲ-ը չունի: Արմ-ը նշում է միայն *սպուռին*-ը:

**Գետամտունք** - «Ի Սիսունէ քաղաքէ... մինչեւ ցԹռասիա գետամտունս, գոր կոչեն և Քոռուէաս...» (2154):

**Գեղեցկախայտ** - «... ինձք գեղեցկախայտք յոյժ» (2146):

**Եղջիրակնճիթ** - «... եւ փեղք սպիտակք եւ եղջիրակնճիթք» (2146):

**Երերի** - «Լինի մուրտ եւ երերի և նուռն ազնի» (2153):

**Շնակնճիթ** - «... մարդակերպ գագանք, շնակնճիթ եւ մերկ» (2146):

**Ջրաբնակ** - «Բնաշխարհի Իրալիա... յորում ջրաբնակ գաւառն Վենետիտոյ» (2143):

**Սպիտակախայտ** - «Ունի մարմար կանաչ եւ սպիտակախայտ» (2144):

Շատ բառեր ՆՀԲ-ում միակ կամ առաջին վկայություններն են, որոշ դեպքերում էլ ՆՀԲ-ի վկայությունը այլ գործերից է՝ ուշ շրջանից, այնինչ դրանք կան *Աշխարհացոյց*-ում:

*Աշխարհացոյցի* բառապաշարը լուրջ քննության կարիք ունի: Տարբեր լեզուների տվյալների մանրակրկիտ համադրությամբ հնարավոր կլինի պարզել բառերի այն շերտը, որ Խոբրենացու գրչի արդյունքն է, և այն բառերը, որոնք հետագա հավելումներ են:

## II Պատմութիւն Հայոց\*

5-րդ դարի հայ մատենագրության ամենամանրագնին քննության ենթարկված գործը Խորենացու «Հայոց Պատմությունն» է: Այն դարեր շարունակ դասագրքի դեր է կատարել՝ միաժամանակ դառնալով հետագա շրջանում գրված պատմությունների հենքը:

Անժխտելի է նաև Խորենացու դերը հայ գրական լեզվի զարգացման գործում՝ ոճական բազմազանություն, հարուստ բառապաշար, բազմաթիվ օտար բառերի՝ հայերենի բառակազմական առանձնահատկություններով պայմանավորված թարգմանություններ, օտար բառերի մեկնություններ:

5-րդ և հետագա դարերի հայ մատենագրության մեջ բառերի մեկնությունների թե՛ քանակական, թե՛ հիմնավորող փաստերի բազմազանության, թե՛ սկզբունքների տրամաբանության առումով առանձնանում է «Պատմությունը»:

Ակադեմիկոս Գ.Սարգսյանը նկատում է, որ Խորենացու ստուգաբանությունները որպես համակարգ չեն ուսումնասիրվել, որի պատճառը «կեղծ» կամ «ժողովրդական» ստուգաբանական բնույթն է: Գիտնականը դա իրավացիորեն համարում է թյուր կարծիք, «...մասնավորապես Խորենացու ներաշխարհը և աշխատանոցն ու հետազոտական մեթոդներն ըմբռնելու տեսակետից»<sup>17</sup>:

---

\* **Սովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Մ. Յարութիւնեանի, Ե., 1991թ.: Որոշ օրինակների աշխարհաբար գուգահեռները բերել ենք Ստ. Մալխասյանի թարգմանությունից: (**Սովսես Խորենացի**, *Հայոց պատմություն*, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1981թ.):

<sup>17</sup> Տե՛ս Գ. **Սարգսյան**, *Հատուկ անունների ստուգաբանություններ Սովսես Խորենացու Պատմության մեջ* (Պատմագիտական հետազոտություններ, Ե., 2006 թ., էջ 93):

Գ.Սարգսյանը նոր հայեցակետով գիտական բժախնդրությամբ քննում է «ստուգաբանված» 84 հատուկ անուններ՝ նշելով, որ «շրջանցված են այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են՝ «Հայկաշեն», «Տիգրանակերտ», «Արշակաւան»... և այնպիսի նախարարական տոհմանուններ, ինչպիսիք են՝ «Մոկացի», «Գողթնեցի», «Ակեացի» և այլն, քանի որ սրանց ստուգաբանելի և ստուգաբանիչ տարրերը համընկնում են» (ն.տ.):

Գ.Սարգսյանի աշխատանքը կարևորվում է Խորենացու մեկնությունների մեթոդաբանության բացահայտման, մեկնաբանվող բառերի դասակարգման, բնութագրական հատկանիշների հստակության, դասակարգումների խմբերի և ենթախմբերի («թաքնված», «երկդիմի», «թարգմանական») առանձնացման առումով:

Մենք նույնպես քննության չենք ենթարկել Խորենացու բոլոր մեկնությունները: Առավելապես ուշադրություն ենք դարձրել այն բառերին, որոնց խորենացիական մեկնությունները բացահայտում են բառերի իմաստային և, որ շատ կարևոր է, հնչյունական-հնչյունափոխական օրինաչափություններ ու յուրահատկություններ:

Առանձին դեպքերում նշում ենք այս կամ այն բառի վերաբերյալ նոր վարկածները, նաև անդրադառնում Խորենացու կողմից չբացատրված մի քանի հատուկ անունների:

Խորենացու «Պատմության» մեջ մեծ թիվ են կազմում իրանական ծագում ունեցող կամ հեղինակի կողմից այդպիսին համարվող հատուկ անունները, ուստի նպատակահարմար գտանք դրանք ներկայացնել առանձին բաժնով:



## ՄԱՍ I

### ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՄԵԿՆՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

#### 1. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ

**Աժդահակ** – «Յիշելով այլաբանաբար և զգարմիցն Աժդահակայ, վիշապագունս զնոսա կոչելով, զի Աժդահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ» (I, L): Աժդահակը բարդ բառ է՝ *վիշապ Դահակ*: Խորենացին փաստորեն թարգմանել է առաջին բաղադրիչը՝ *աժ* «օձ»: Հնդեվրոպական նույն արմատից է հայերեն *իժ*-ը: *Վիշապ* բառը նախապես ունեցել է «մեծ օձ (ջրային)», նաև «կետ» իմաստները (Արմ): Հայերենի բարբառներում *վիշապ*-ը (օշափ, ուշափ, յուշապ) նշանակում է «առասպելական հրեշ, դև, հրեշային մեծությամբ մարդ (կենդանի)»:

Ուշադրության արժանի է «ի մեր լեզուս է վիշապ» հատվածը: Խորենացին իրանական ծագում ունեցող բառը համարում է հայերեն: Պատճառը թերևս այն է, որ այն արդեն 5-րդ դարում (զուցե և շատ վաղուց) «յուրացված» փոխառություն էր, որը գիտակցվում էր որպես հայերեն: *Վիշապ* բաղադրիչով ՆՀԲ-ում վկայված է 20 բառ՝ *վիշապաբար, վիշապագունք, վիշապական, վիշապաձայն...* և այլն:

**Բագարատ** – «Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա» (II, ԿԳ): Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ Բագարատ-Բագադիա անձնանվան նույնությունը, սակայն Խորենացու դրույթը հաստատվում է իրանական լեզուներին բնորոշ հնչյունափոխական օրինաչափությամբ: Հին պարսկերենի *d*-ն միջին իրանական լեզուներում, նաև հայերենի իրանական փոխառություն-

ներում միջձայնավորային դիրքում դառնում է r. հմմտ. apādāna- հայերեն՝ *սպարանք*, spāda՝ *սպարա(պետ)*, apēdāt *սպիրատ* և այլն: Խորենացին տեղյակ էր նշված հնչյունափոխական երևույթին, այլապես նա *Բագարատ*-ը և *Բագադիան* չէր նույնացնի: Այս բառերի առաջին բաղադրիչը bāg «աստված»-ն է, իսկ երկրորդը՝ data-ն «տալ»: *Բագարատ-Բագադիան* նշանակում է «աստվածատուր»:

**Խոսքով Փոքր** – «Յադագս թագաւորելոյ Փոքր Խոսքովու եւ փոխելոյ զարքունիսն եւ տնկելոյ զանտառն» (III, Ը): Բուն շարադրանքում այս թագավորի մասին Խորենացին գրում է. «Զի թէպէտ էր մարմնովն փոքր, այլ ոչ որքան Մակեդովնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ունէր զչափ հասակի, և ոչ զհոգւոյն իսպանէր աշխոյժս» (ն.տ.): Բուզանդի գրքում *Խոսքով Փոքր*-ի փոխարեն *Խոսքով Կոտակ* է. «Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսքով Կոտակ» (III, գ):

Միջին իրանական լեզուներում kōtak նշանակում է «մանուկ, փոքր», հմմտ. պրս. kutāh «կարճ»: Խորենացին թարգմանել է օտար բառը:

*Խոսքով*-ն էլ իրանական ծագում ունի՝ հս «լավ» և «srāv»- «խոսք», բառացի՝ «լավ խոսող, ճարտարախոս»\*:

**Կամսար** – «Ի շահատակելն իւրում հարկանէ յումեմնէ սակերբ զգլուխն, և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին... պակաս գոլով բոլորութին զագաթանն՝ անուանեցաւ Կամսար այնր աղագաւ» (II, ԶԷ): Բերենք աշխարհաբար թարգմանությունը. «... և կովի մեջ մեկը սակրով խփում է նրա գլխին և սկավառակի մի մասը կտրում է... բայց զագաթի բոլորակությունը պակաս է մնում. այս պատճառով էլ

---

\* srāv- բաղադրիչը մենք տեսնում ենք և *պարսաւ* բառում, որը Արմ-ում ստուգաբանված չէ, իսկ իրան. h-x հնչյունափոխությունն էլ օրինաչափ է: Տե՛ս Լ. **Հովհաննիսյան**, *Հայ-իրանական նոր ստուգաբանություններ*, Ե., 2005թ., էջ 34, 58:

կոչվել է Կամսար»: Անկախ ստուգաբանության գիտական կամ ոչ գիտական լինելու հանգամանքից՝ Խորենացին ճիշտ է ներկայացնում բառի բաղադրիչների իմաստները. kam «պակաս, քիչ» և sar «զուլի»<sup>\*\*</sup> :

**Շապուհ** – «Եւ կալաւ զաշխարհս մեր... ամս քսան և վեց և յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ, որ լսի արքայամանուկ» (II, ՀԷ): Ճիշտ ստուգաբանություն է. իրան. šāh «արքա» և puh (puh) «որդի»: Բացառելի չպետք է համարել, որ *մանուկը* հուն. βρέφοσ-ի թարգմանությունն է, որն ունի նաև «երեխա, տղա» իմաստը<sup>1</sup>:

«Արքայամանուկ»-ի *մանուկ*-ը նշանակում է «որդի»: Առձեռն բառարանը այդ իմաստը չի արձանագրում, Արմ-ում *մանուկ* բառին վերագրված են հետևյալ իմաստները. «1. երախայ, 2. պատանի, սպասաւոր, զինուոր, 3. փոքր, մանկահասակ» (Տե՛ս Արմ, *մանուկ* բառահոդվածը):

*Մանուկ* «որդի, տղա» իմաստը կամ պետք է համարել Խորենացու ստեղծածը, կամ բառը այդ իմաստով գործածական է եղել հայերենի այն տարածքային տարբերակում (բարբառում), որին ծանոթ է եղել Խորենացին:

Այդօրինակ կիրառության հանդիպում ենք և «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» գրքում. «Մե՛ծ թագաւոր Դարեհ, այս դեսպանս նոյն ինքն Աղեքսանդրոս Մակեդոնացի Փիլիպոսի մանուկն է»<sup>2</sup>: Ի դեպ, *մանուկ* «զինվոր»-ն էլ 5-րդ դ. ոչ

---

<sup>\*\*</sup> *Կամսարը* փորձում են կապել իրան. \*kamasāra- «ըստ կարգի իշխող»-ի հետ (տե՛ս Անձ. բառ., հտ. I, Ե., 1944 թ., էջ 577): Պատմաբան Ս. Պետրոսյանի կարծիքով «Կամսար» անունը գալիս է Շիրակի տարածքի հին հնդեվրոպական որևէ ցեղի լեզվից (տե՛ս ՇՀՀԿԳԱ, I, 1988, էջ 68):

<sup>1</sup> Տե՛ս **И. Х. Дворецкий**, т. I, Москва, 1958, стр. 307:

<sup>2</sup> Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ. աշխատասիրությամբ Հասմիկ Միմոնյանի, Ե., 1989, էջ 402: Արդեն ապացուցված կարելի է համարել, որ այս գրքի թարգմանիչը Մովսէս Խորենացին է:

թարգմանական գործերում առաջինը թերևս կիրառել է Խորենացին. «Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ» (I, ԺԵ): Ստ. Մալխասյանը թարգմանել է. «Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից» (ն.տ.): Ավելի ճիշտ թարգմանությունը կլիներ՝ *զինվորներից* կամ *զինվորների կողմից*:

**Շաւասայ** – Մականախաղի ժամանակ (ձի հեծած) Շավասայ Արծրունին երկու անգամ գնդակը իլում է Շապուհ արքայից: Վերջինս զայրանալով մականով հարվածում է Արծրունուն՝ ասելով. «Ծանի՛ր զքեզ»: Արծրունին պատասխանում է. «Այո՛, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւն *ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեալս եմ*» (III, ԾԵ):

Ստ. Մալխասյանը ընդգծված հատվածը թարգմանում է. «... իրավունք ունեմ քո եղբայրների հետ թագավորի բարձր համբուրելու, ինչպէս և անուն եմ կրում» և ծանոթագրում. «Դժվար է ասել, ի՞նչ է նշանակում այստեղ՝ «որպէս և անուանակոչեալս եմ» խոսքը: Շաւասայ անունը, որ պարսկերէն նշանակում է «սևաձի, չի բացատրում այս խոսքը» (էջ 524, ծան. 320) :

Ն.Մառին հասցեագրված նամակում Գ.Տեր-Մկրտչյանը գրում է. «Իմ կարծիքով՝ «որպէս և անուանակոչեալս եմ» վերաբերում է Շաւասայ անվանը: ...Ասել է, թե այս Արծրունին Շաւասայ անունն ստուգաբանում էր մոտավորապէս, Շահ+ասպաս, այն է՝ «շահի ծառայող, շահողուլի, շահբազ կամ այդպիսի մի բան» (Տե՛ս Գ.Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, Էջմիածին, 1998, էջ 480): Իհարկէ, այս ստուգաբանությունը խոցելի է:

Շաւասայի առաջին բաղադրիչը՝ *šaw(šav)* «սև», արևելագետ Ա. Փերիխանյանը համարում է մարերենին բնորոշ ձև, որը հայերենում դուրս է մղվել իրանական *seaw-*ի կողմից<sup>3</sup>:

Արծրունիների տերությունը գտնվում էր Մարաստանի անմիջական հարևանությամբ: Իսկ Ստրաբոնի վկայությամբ հարավային մարերը նշանավոր ձիավարներ էին և զբաղվում էին հատուկ տեսակի ձիերի բուծմամբ<sup>4</sup>:

Ըստ երևույթին հարգի էին հատկապես սև գույնի ձիերը (*šavasp*): Հիշենք Խորենացու մեկ այլ վկայություն. «Հեծաւ արի արքայն ի սեան գեղեցիկ»:

Արծրունիները երևի նախապես հայտնի էին հատուկ տեսակի ձիերի բուծմամբ, որի, հետագայում նաև այլ գործոնների, շնորհիվ նրանք դասվել են բարձրակարգ նախարարների շարքը՝ ստանալով արքայի բարձր համբուրելու պատվավոր թույլտվությունը:

Գրաբարում *բարձ-*ը ունի «գահ, պատվավոր նստարան, պատվո աստիճան, ավագություն» իմաստները: Երևի այդ բարձր կարգի արժանացողները արքայի ընդունելության ժամանակ պետք է համբուրեին իրենց հատկացված տեղը կամ արքայի գահը:

**Պերոզ** – «Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող» (II, ԿԴ): Ճիշտ ստուգաբանություն է. հմմտ. պրս. *Փիրուզ* «հաղթանակ»: Վաղ միջին իրանական լեզուներում շնչեղ խուլ բաղաձայններ չկային: Հիմնականում գործուն էր ձայնեղ-խուլ հակադրությունը:

---

<sup>3</sup> Նշված ձևերի և հայերենում դրանց գործածության հարցը քննության է առնվել մի շարք իրանագետների կողմից: Այդ մասին տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 64-65:

<sup>4</sup> Տե՛ս **Б. Гафуров, Д. Цибукидис**, *Александр Македонский и восток*, М., 1980, стр. 202:

**Վարած** – «Ուն Վարած անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց և այծեմանց և վարագուց, դիպածութեամբ նետից կորովի» (I, ԺԲ): Այս անձնանվան հետ է կապում և *Վարածունի* տոհմանունը (II, ԺԱ): Երկու օրինակներում էլ *Վարած*-ը «նետաձգության», «որսի» համատեքստում է: Այդ համատեքստում է և *Վարժ* անձնանունը:

Ակադեմիկոս Գ.Սարգսյանը գրում է. «Արդյոք «Վարածը» ածանցված չէ՞ «վարազից» արքունի որսապետի և «աջող յորս... վարագուց»-ի կերպարին անձը հարմարեցնելու համար» (տե՛ս նշվ. աշխ., էջ 101):

**Վարազ-Վարած** – տարբերակային ձևերը կարելի է ընդունելի համարել՝ նկատի առնելով իրանական լեզուներում z - ž հնչյունափոխության առկայությունը. ընդ որում ž- ն ավելի բնորոշ է պարթևերենին, z-ն՝ միջին պարսկերենին. հմմտ. Պերոզ-Պերոժ, Ժաման(ակ)-գաման(ակ) և այլն:

Խորենացին, անշուշտ, տեղյակ էր իրանական լեզուների նշված իրողությանը, ուստի և մերժելի չէ *Վարած-վարազ* աղերսը:

Խորենացու Պատմության մեջ վկայված են բազմաթիվ տոհմանուններ, որոնք հիմնականում կազմված են անձնանուններից: Մեզ հետաքրքրող նյութի շրջանակներում բացառություն է կազմում *Ամատունի* տոհմանունը:

Խորենացին Ամատունիներին համարում է Արեաց աշխարհի արևելյան կողմերից եկվորներ, որոնք բնիկ հրեաներ էին, ապա հավելում է. «Բայց թէ յինչ պատճառաց գալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ... և անուանին Ամատունիք, որպէս *Եկք*» (II, ԾԷ): Այստեղ էլ գործ ունենք «թարգմանական» ստուգաբանության հետ: *Եկք* բառը օգտագործելով՝ Խորենացին նկատի է ունեցել իրան. ամադան «գալ» (ամադ «եկավ») բառը:

Պահլավերենի բառարանում *āmadan*-ը *d*-ով է (ձայնեղ), այդպես է և նոր պարսկերենում. Խորենացին գրում է խուլ տ-ով: Սա դարձյալ ուշագրավ փաստ է: Բանն այն է, որ վաղ պարթևերենի և միջին պարսկերենի *t*-ն ետձայնավորային և միջձայնավորային դիրքում ուշ շրջանում դարձել է *d*: Ուրեմն՝ Խորենացու արձանագրած *\*āmat*- ձևը ավելի հին է:

**ՎՃԵՆ(ք)** – «... և վասն նորա փրկութեան պատերազմեալ ընդ Յոյսս, որք ի Կորճէից և որք ի մերմէ կողմանէս, զյառաջագունից ասեմ, մօտաւորաց Վճենից, ի զարմից Հայկազանց, ոմանք և յեկաց» (II, ԿԴ):

Մ. Արեղյանը հատուկ անունների ցանկում բառը ներկայացնում է *ՎՃենք* ձևով: Ստ. Մալխասյանը «զառաջագունից ասեմ, մօտաւորաց Վճենից, ի զարմից Հայկազանց» հատվածի մասին գրում է. «Խոսքը մութ է և դժվար հասկանալի»: Չընդունելով Էմինի և Ստեփանեի թարգմանությունները՝ «других стран наших из первых наших соседей Вченков» (Էմին), «առաջագոյն մեր դրացի ասված Վճեններից» (Ստեփանե), Ստ. Մալխասյանը թարգմանում է. «...Խոսքս վերաբերում է Վճեններին մերձավոր հին ցեղերին, Հայկազանց սերունդներից, ինչպես և մի քանի եկվորներին»:

Բառի ծագման, բառիմաստի վերաբերյալ Խորենացու հրատարակիչները և ծանոթագրողները որևէ բացատրություն չեն տալիս: Գ. Սարգսյանը *Վճենք*-ը համարում է առեղծվածային անվանում, իսկ ուսումնասիրողների մեկնաբանությունները՝ անհամոզիչ<sup>5</sup>:

*Վճենք (վճենից)*-ի անվանումով կարծում ենք Խորենացին թերևս նկատի է ունեցել թափառաշրջիկ, քոչվոր խմբերին: Բառի արմատը թերևս գրաբարում վկայված *վաչ* «սայլ» բառն է, որը

---

<sup>5</sup> **Мовсес Хоренаци, История Армении**, Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е., 1990, прим. 458.

առկա է նաև *վաչկատուն* «վրանաբնակ, սայլերի մեջ բնակվող քոչվոր» բառում (Տե՛ս Արմ, *վաչկատուն* բառահոդվածը): *Վաչկատուն*-ը V դ. վկայել է Փավստոս Բուզանդը. «...գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց, Թաւասպարաց... և այլոց խառնադանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց» (Բուզ., III, է): Հ. Աճառյանը *վաչկատուն* բառի առաջին բաղադրիչը համարում է *վաչիկ* արմատական ձևը, այնինչ բարդության առաջին բաղադրիչի արմատը պետք է համարել *վաչ*-ը: Վերջինս Արմ-ում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը նույնպես բառի ծագումը համարում է անհայտ և նշում, որ «հնչյունապես հնարավոր չէ կապել հնդեվրոպական \*uegh- «շարժել, քշել» արմատի որևէ ածանցյալի հետ որպես փոխառություն» (ՀՄԲ, 704):

Թեև մեզ ծանոթ իրանական աղբյուրներում *վաչ*-ը վկայված չէ, բայց ենթադրելի է իրան. vač- արմատը: Դա կարելի է փաստարկել իրանական լեզուներին բնորոշ խուլ-շնչեղ-խուլ հնչյունափոխական օրինաչափությամբ, որը նկատելի է և հայերենի իրանական փոխառություններում. հմմտ. *կէշ* և *քէշ* «կրոն», *պաշտպան* և *փուշտիպան*: Ճ-Չ անցման համար հմմտ. *աւաչ* «ձայն, երգ» (միջին պրս. avač «ձայն»): *Ճարպ*- մ.պրս. čarp, պրս. չարբ «պարարտ, յուղոտ»: Խուլ ճ-ով ձևերը ժամանակագրորեն ավելի հին են, քան շնչեղ չ-ով ձևերը: Ուրեմն՝ վճենից-ի \*վաճ-ը նույնպես ավելի հին է, քան վաչկատուն-ի *վաչ*-ը: Կարող է առարկելի լինել ա-ի սղումը: Ասենք, որ հայերենի իրանական փոխառություններում նման երևույթներ կան: Միջ. պրս. čašm-did «տեսանելի, ակնհայտ» հայերենում առկայանում է *ճշմարիտ* ձևով: Թերևս նույն արմատի հնչյունափոխված տարբերակներն են իրանական լեզուներից փոխառյալ *ճամ*-ը և *վճիմ*-ը:



Վաչ-ի \*վաճ տարբերակը ընդունելու դեպքում ընդունելի պետք է համարել Գ. Ջահուկյանի ստուգաբանությունը: Վաճ-ը կարելի է դիտել նաև որպես վազ/վազել-ի արմատի տարբերակ: Վերջինս ըստ Գ. Ջահուկյանի «թերևս հին իրանական փոխառություն է \*vaz (հնդեվրոպական \*vegʰ) ձևից:

Իրանական լեզուներում č-z անցումը սովորական երևույթ է (վերը նշված avač «երգ»-ը պարսկերենում avaz ձևն ունի):

Վճենից-ի -են- ձևույթը ամենայն հավանականությամբ միջին իրանական լեզուներում գործուն ēn- ածանցն է, որը գոյականներից կազմում է հարաբերական ածականներ. հմմտ. tanbār «մարմին» – tanbārēn «մարմնական», vād «օդ» vādēn «օդային» և այլն (ОИЯ, 1981, стр. 1969):

Եթե ընդունելի է Վճենից-ի առաջարկվող ստուգաբանությունը, ապա բառի ուղիղ ձևը (ուղղական հոլով, եզակի թիվ) պետք է համարել Վճեն-ը: Հմմտ. պատճեն-պատճենից:

## 2. ՏԵՂԱՆՈՒՆԵՐ

**Բահղ Առաւօտին** – «Թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ քաջ ի քաղաքին, որ կոչի Բահղ Առաւօտին, յերկրին Քուշանաց» (II,Բ): «Կիսաթարգմանական» ստուգաբանություն է. Խորենացին թարգմանել է *Բահլի բամիկ* տեղանվան երկրորդ բաղադրիչը. հմմտ. պարսկերեն *բամիդա* «առավոտ»:

**Դուին** – «Նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր» (III, Ը): Բուզանդի «Հայոց պատմության» մեջ *Դուինի* իրանական ծագումը չի նշվում. «Մինչև ի դաշտն Մեծամորի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի

Արտաշատու» (էջ 32): Իրանական գրավոր աղբյուրներում այս բառը չկա, և Խորենացու «ստուգաբանությունը» տարբեր մեկնաբանությունների առիթ է տվել:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ռուսայի արձանագրություններից մեկի *tuaini*-ն կարելի է դիտել որպես հասարակ անուն՝ «բլուր, բարձունք» իմաստով<sup>6</sup>: Եթե հավաստի համարվի լատ. *donum* «բարձունք», հին իռլանդերեն *don* «քաղաք, բլուր», հին անգլերեն «բարձունք», ֆրանսերեն *dune*, ռուսերեն *дюна* «ավազաբլուր»-ի հնդեվրոպական ծագումը, ապա կարելի է կարծել, որ այն գործածվել է իրանական որևէ լեզվում, որին և ծանոթ է եղել Խորենացին:

**Մարմետ, Մարաց մարգ** – «Եւ ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ. հասեալ ի դաստակերտն... և միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի Մարս եկն... յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմետ» (II, ԽԶ):

Խորենացին իրան. *amad* «եկավ» բաղադրիչով է ստուգաբանում Մարմետ տեղանունը, ինչպես *Ամատունի* հատկանվան մեջ: Երկու դեպքում էլ նա ճիշտ է ներկայացնում վաղ միջինիրանական ձևը՝ խույ t-ով:

Մարերը բնակվում էին Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան մասում, որը իրանական և օտար աղբյուրներում վկայված է Մադիայ, Մեդիայ ձևով: Հայ մատենագրության մեջ այդ տարածքը հիմնականում անվանվում է Մար(աստան), իսկ բնակիչները՝ Մարք: Նույն տարածքի (և բնակիչների) երկու անվան նշված ձևերի մեջ առկա է դարձյալ հնչյունափոխական օրինաչափ երևույթ: Իրան. d-ն հայերենի իրանական փոխառություններում միջձայնավորային դիրքում արտահայտվում է r-ով. հմմտ. պրթ. *widn* - հայ. վրան:

<sup>6</sup> Г.А.Капанцян, *Историко-лингвистические работы*, т. II, Е., 1975, 35.

Խորենացին վկայել է նաև *Մեղացի, Մեղացիք*: «Պատահեց Մեղացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար ոմն ասացեալ Մաղէս (I, ԺԳ): «Քանզի Վարբակէս գաւառաւ մեղացի» (I, ԻԱ: *Գաւառաւ* նշանակում է ծնունդով): Նույն գլխում նույն անունը գրվում Վարբակէս մար. «... օգնական լինի Վարբակայ Մարի»:

Հայ մատենագրության մեջ, նաև Խորենացու գրքում *Մարք, ի կողմանս Մարաց*-ը միայն իրանական Մարաստան չէ, այլ բուն հայկական տարածք՝ Մասիսի շրջակայքում: Այդպես է Խորենացու հետևյալ վկայության մեջ. «Իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան» (I, L, LԱ): Այդպիսի վկայություն ունի և Կորյունը. «... կերպակերպ նմանությամբ դիւացն փախստական լինելով՝ անկան ի կողմանս Մարաց»: Ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը ծանոթագրում է, որ Մարք, ի կողմանս Մարաց բուն Մարաստանը չէ, այլ «հին Հայաստանի Վասպուրական նահանգի մասն էր կազմում. հնում այստեղ մարեր (մեղացիք) են բնակվել, դրա համար էլ այդ կողմերի անունը մնացել է Մարք»<sup>7</sup>:

Մար ցեղանվան միջոցով է Խորենացին ստուգաբանում նաև Մարաց Մարգ տեղանունը. «Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն... նսեմաւ ի վերայ դիականցն բնակեին... և անուանեաց զհովիտն, ուր ի վերայ դիականցն բանակեցան՝ Մարաց մարգ» (II, ԽԶ):

Գ. Մարգայանը նշում է, որ XIII դարի երեք արձանագրություններում այդ տեղանունը մի դեպքում հիշատակված է Խորենացու ավանդած ձևով, մյուսներում՝ «Մարանց», այսինքն՝ մայրերի մարգ. գիտնականը *Մարանց մարգը* համարում է ավելի իրատեսական՝ ենթադրելով, որ Խորենացին, ունենալով երկու

---

<sup>7</sup> Տե՛ս՝ Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի. *աշխատասիրությանը Արտաշես Մաթևոսյանի*, Ե., 1994թ., էջ 130, ծան. 55:

տարբերակ, ընտրել է իր պատմությունը կերտելու համար հարմարագույնը<sup>8</sup>:

*Մարանց մարգ* տարբերակին կողմնակից է և պատմաբան Ս.Պետրոսյանը: Նա բառի առաջին բաղադրիչը համարում է *մայր* բառը, իսկ *մէտ*-ը՝ «շեն, բնակատեղի՝ հ.-ե. \*mei-d(h)- ամրացնել» նախաձևից<sup>9</sup>:

**Պատիժահար Գաւառ, Գեղմանց լեառն** - «Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար Գաւառ, որ է Գեղմանց լեառն, և ծովեզերայք, և այսր ևս քան զնոսա...» (II, ԾԳ):

Խորենացու «Պատմության» առաջին թարգմանիչները այս հատվածը ճիշտ չեն հասկացել. *պատիժահար*-ը և *Գեղմանց*-ը դիտել են որպես հայերեն բառեր: Անգլիացի Ուիստոն եղբայրների լատիներեն թարգմանության մեջ *պատիժահար*-ը թարգմանված է *poenālis*՝ լատ. «պատժական», «պատժի ենթակա» (*poena* «պատիժ») *Գեղմանց*-ը *vellorum* («բրդերի»), գեղմն՝ «բուրդ»: Էմիլը նույնպես *գեղմանց*-ը թարգմանել է «горю руна» (*руна*- «գեղմ, բուրդ»): Այդպես է և Լանզլուայի թարգմանությունը. «Le canton Badijahar, c'est a dire la montagne des laines»<sup>10</sup>:

Վերոհիշյալ հատվածի ճիշտ մեկնությունը տվել է Ք. Պատկանյանը: Նա բերելով հայ մատենագրության մեջ *Գեղմանց*-ի հնչունական տարբերակներով վկայված ձևերը՝ *Գելան, Գեղան, Գեղում, Գեղումն, Գելմն...* և նկատի առնելով այդ վայրի տեղադրությունը, նշվածները համարում է իրանական *Գիլան* տեղանունը, իսկ *Պատիժահարը*՝ Ստրաբոնի վկայած *πατεισχορεϊσ*-ն, որը իրանական լեզուներում վկայված է

<sup>8</sup> Գ.Մարգարյան, *Պատմագիտական հետազոտություններ*, էջ 82-83:

<sup>9</sup> Ս.Պետրոսյան, Լ.Պետրոսյան *Անին և Երվանդունիները* (ՇՀՀԿԳԱ, XIV, 2011թ., էջ 29):

<sup>10</sup>Տե՛ս և **К.Патканов**, *Армянская география VII века*, Санкт-Петербург, 1877, стр. 59-60:

*պաղէշխվարգար* (և սրա հնչյունական այլ տարբերակային ձևերով)<sup>11</sup>:

Ք. Պատկանյանի դիտարկումը առաջինը հաշվի է առել Խ. Ստեփանեն. «*Պատիժահար* ուսուցչապետի վկայելով, այն սարերն են, որոնց Ստրաբոնը կոչում է *πατειχορεις...* ուստի Մովսէս Խորենացու Պատմութեան այս հատվածն այսպէս պետք է հասկանալ. «որը իրանց լեզուով Պատիժահար է կոչվում, այն է՝ Գեղմն սարը»<sup>12</sup>: Պատկանյանի այդ համոզիչ նկատառումը հաշվի են առել Խորենացու հետագա թարգմանիչները: Ստ. Մալխասյանը թարգմանել է. «Բայց նրան չկամեցան հնազանդել այն լեռան բնակիչները, որ իրենց լեզվով կոչվում է Պատիժահար գավառ, որ Գեղումների լեռն է...», իսկ Գ.Սարգսյանը՝ «... называемой на их языке патижахар, которая является горой гелумцев»: Գ. Սարգսյանը ծանոթագրում է «Պատիժահարը Ստրաբոնի (վկայած) *Παραχοατρ*-ն է, դա Էլբուրս սարն է՝ Կասպից ծովի հարավարևմտյան ափի մոտ. այն գտնվել է գեղումների (այժմ Գիլյան) մարզում»<sup>13</sup>: Ժ. Մահեի թարգմանությունն էլ համարյա նույնն է, նա Գեղմանցը տառադարձել է *Gelmant'c* (*la montagne de Gelmant'c*), սակայն ծանոթագրում է, որ *Գեղմանցի* արմատը գեղմ «բուրդ» բառն է (ֆրան. *toison*)<sup>14</sup>:

---

<sup>11</sup> *նշվ. աշխ.*, էջ 60:

<sup>12</sup> Տե՛ս *Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն*. աշխարհաբար թարգմանեց և լրաւարանեց Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս.Պետերբուրգ, 1889, էջ 189-190, ծան. 380:

<sup>13</sup> **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е., 1990, стр. 105, 246:

<sup>14</sup> *Histoire de l'Arménie par Moïse de Khorène. nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé avec une introduction et des notes*, 1993, էջ 207, ծան. էջ 369:

Ռ. Թումսոնը նոր մեկնություն չի տալիս և հղում է Հյուբշմանին և Մարկվարտին<sup>15</sup>:

*Պատիժախար*-ի տեղադրության և անվանման մասին տեղեկություն է հաղորդում միջին պարսկերենով գրված գրադաշտական կրոնին վերաբերող *Բունդահեշն*-ը. «Պաղեշ-խվարգար լեռը այն է, որ Թաբարիստանում է և Գիլանի շրջանում... Այդ նույն Պաղեշխվարգարից մինչև Կումիշ լեռը [գտնվում է] մի լեռ, որին անվանում են Մադոֆրիյադ, որի մոտ Վշտասպը ջախջախեց Արջասպին...»<sup>16</sup>: Մեզ հետաքրքրող բառի մասին բացատրություն կա Դեհխոդայի հայտնի բառարանում, որում նույնպես այն լեռնանուն է. լեռը սկսվում է Ռեյի մոտակայքից և ձգվում՝ Սավադքուհ Դեմեվենդ, Էլբուրսի լեռնաշղթա...<sup>17</sup>: Պաղեշխ(վ)արգար-ի բաղադրիչներն են *պաղեշ*՝ «մոտ կամ առաջ», *խվար* (*խար*) (տեղանուն է), *գար* «սար» բառացի՝ «Խվարի մոտ գտնվող սար»: Ինչ վերաբերում է իրան. *պաղեշ* և հայ. *պատիժ*-ի շ-ժ հնչյունական անցումներին, ապա դա կարող է կատարված լինել կամ հայերենում. (մի երևույթ, որ նկատելի է իրանական փոխառություններում՝ հմմտ. միջ. պարս.

---

<sup>15</sup> **Moses Khorenatsi**, *History of the Armenians*. Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, Ann Arbor, 2006, էջ 192, ծան. 360:

<sup>16</sup> Зороастрийские тексты. Суждения духа разума (Дадестан-и меног-и храд): Сотворение основы (Бундахишн) и другие тексты, издание подготовлено О. М. Чунаковой, Москва, 1997, стр. 272-273.

<sup>17</sup> Dehkhoda, *Loghatnāme* (պարսկերեն) հտ. 4-րդ, էջ 4719: Պարսիկ ուսումնասիրողները բառի վերաբերյալ բազմաթիվ դիտարկումներ ունեն, որոնցում նաև անդրադարձ կա եվրոպացի գիտնականների նկատառումներին: Այս կարգի մի շարք աշխատությունների էլեկտրոնային տարբերակները մեզ է տրամադրել հայագետ Սոհամեդ Մալեք Սոհամադին: Նշենք մի քանիսը՝ *պաղեշխվարգար չիստ վե քոջաստ* (ինչ է պաղեշխվարգարը և որտեղ է գտնվում, հեղինակը Հադիգաթ Աբդոլ Ռաֆի): *Ջողրաֆիյայի Թարիխի Իրան-ի Բարթան* (հին Իրանի աշխարհագրությունը, հեղինակը՝ Սոհամադ Ջավադ), Թեհրան, 1371: Էսադի Աբադոլահ, «Մազանդարանի (տեղ)անունների ստուգաբանություն» և այլն:

dušxēn - հայ. դժխեմ), կամ էլ իրանական որևէ բարբառում այն արտասանվել է ž (ժ): Օրինակ՝ միջին. պարս. žužak «նետոզնի»-ի համար, ենթադրվում է իրան. \*dužaka- կամ \*dušaka- (\*duš «վատ», \*aka «կեռ, սրածայր»)՝<sup>18</sup>: Անկախ գոյություն ունեցող տարաբնույթ ստուգաբանություններից՝ պատիժահար-ի իրանական բնույթը ակնառու է: Պատիժահար-ը, ինչպես նշում է Մ. Էմինը, հավանական է, որ հին պարսկերեն բառ է, «որի իմաստը մեզ համար այժմ կորած է, բայց որը հավանաբար հասկանալի է եղել Խորենացուն»<sup>19</sup>:

Ս.Պետրոսյանը պատիժահար-ը համարում է հայերեն բառ՝ կազմված պատ (կիրառված լեռնաշղթա իմաստով), իժ «օձ» և հար «խփել, հարվածել» բաղադրիչներով, այսինքն՝ պատիժահար նշանակել է «իժահարի լեռնաշղթա»<sup>20</sup>:

\*

\* \*

Անդրադառնանք իրանական ծագում ունեցող ևս մի բառի, որը հատուկ անուն չէ: Իր «Պատմության» երկրորդ գրքի ԽԲ գլուխը Խորենացին վերնագրել է՝ «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ»: Բուն շարադրանքում ձեռակերտի փոխարեն դաստակերտ է. «Քաղցր է ինձ ասել յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, որ յօրինեաց նոյն ինքն Երուանդ...»:

**Դաստակերտ և ձեռակերտ** բառերը հոմանիշներ են. գրաբար մատենագրության մեջ հաճախական է *դաստակերտը*,

---

<sup>18</sup> В. С. Расторгуева, Д. И. Эдельман, *Этимологический словарь иранских языков*, т. 2, Москва, 2003, стр. 490.

<sup>19</sup> *История Армении Моисея Хоренского*, перевел с армянского и объяснил Н. Эмин, М., 1858, стр. 297, прим. 274.

<sup>20</sup> Ս. Պետրոսյան, *Հայ-շումերական առասպելաբանական աղերսների շուրջ* (ՇՀՀԿԳԱ, XIV, 2011թ., էջ 5-6):

այն գործածել են հինգերորդ դարի շատ հեղինակներ՝ Կորյուն (1), Բուզանդ (4), Ագաթանգեղոս (4), Փարպեցի (1), Եղիշե (4), Խորենացի (21)\*:

*Ձեռակերտ*-ը գրաբարում ունի մի քանի իմաստ՝ 1. «ձեռքի գործ, ձեռքով ստեղծված», 2. «կուռք»:

Վստահորեն կարելի է ասել, որ *Ձեռակերտ* «ցուղ, ավան, քաղաք» իմաստներով V դարում առաջինը գործածել է Խորենացին:

*Դաստակերտ*-ի երկու բաղադրիչներն էլ իրանական փոխառություններ են՝ *դաստ* «ձեռք» և *կերտ* «կերտել, գործ, շինություն»՝ kar, kr «անել, պատրաստել» արմատից:

*Կերտ*-ը V դ. արդեն, այսպես կոչված, «յուրացված» փոխառություն էր, բառիմաստը՝ հասկանալի: Այդ բաղադրիչով հայերենը ունի բազմաթիվ բառեր՝ *Երուանդակերտ, Խոսրովակերտ, Տիգրանակերտ, նկարակերտ, փայտակերտ, ըղձակերտ, հնարակերտ, մոմակերտ, քարակերտ...*

*Դաստ* «ձեռք» բառը V դարում շատերի համար հասկանալի չէր և զիտակցվում էր որպես օտար, թարգմանելի բառ՝ ի տարբերություն *կերտ*-ի: ՆՀԲ-ն *դաստ* «ձեռք» բառով ունի միայն մեկ վկայություն՝ այն էլ 13-րդ դարից, իսկ *դաստ* բառով կազմությունները ամբողջական փոխառություններ են. *դաստակերտ, դաստապակ, դաստապան* «սրի կոթ», *դաստառակ* «սրբիչ», *դաստիարակ...* և այլն, որոնցում «ձեռք» իմաստը բացահայտվում է միայն ստուգաբանորեն:

---

\* Փակագծերում բառերի գործածության թիվն է: Օգտվել ենք Համաբարբառների տվյալներից: Տե՛ս նաև Օ. Խաչատրյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարան, Ե., 1986, էջ 156, 124:



## ՄԱՍ II

### ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

**Աբգար**– «Թագաւորէ Աբգար որդի Արշամայ ի քսաներորդ ամի Արշարի արքայի պարսից: Այս Աբգարոս կոչէր աւագ այր, վասն առաւել հեզութեանն և իմաստութեանն. որում յետո և տիքն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորոց՝ կոչեցին Աբգարոս» (II, ԻԶ):

Այս թագավորի անունը Խորենացին հիշատակում է բազմիցս՝ միայն վերոհիշյալ օրինակում գործածելով *Աբգարոս* հունարէն ձևը:

*Աբգարի*՝ «աւագ այր» ստուգաբանությունը ուսումնասիրողների կողմից գիտական չի համարվում, իսկ Գ. Սարգսյանը նկատում է, «որ իր այս անունը Աբգարը, ըստ Խորենացու, ստացել է հասուն տարիքում, այսինքն՝ վերանվանվել է: Սկզբնական անունը Խորենացին չի հայտնում»<sup>1</sup>:

Խորենացին հիշյալ անձի համար բնորոշ է համարում հեզությունը, իմաստությունը և տարիքը:

Եվսեփոս Կեսարացին բնութագրական է համարում Աբգարի քաջությունը. «Աբգար արքայ հեթանոսաց, որ յարեւելից կողմանէ Եփրատու անուանէր քաջութեամբ, ապականեցաւ մարմին նորա չարաչար ցաւօք»<sup>2</sup>:

Աբգարի մասին ավելի ընդգրկուն պատմական տեղեկություններ կան Լաբուբնայի գրքում, որի հրատարակիչը ծանոթագրում է «զԱբգար ստուգաբանեն ոմանք յարաբացի ձայնէ Աբ-

---

<sup>1</sup> Գ. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 96:

<sup>2</sup> *Եսեփոսի Կեսարացոյ Պատմութիւն եկեղեցոյ*, Վենետիկ, 1877, էջ 59:

պար, էքպէր «մեծ և ընտիր», ումանք յասորւոյն կադ, իսկ պատմահայր մեր Խորենացի ասէ զսա ի հայկականէս *աւագ այր*»<sup>3</sup>:

Հ.Աճառյանը, հղելով Հ.Հյուբշմանին, բառը համարում է ասորական հատուկ անուն: Նա մերժում է արաբերեն ‘abgari «կատարյալ մարդ, ցեղի մեջ ամենից փառավոր և ազդեցիկ մարդը» զուգահեռը՝ համարելով այն պատահական նմանություն, իսկ Խորենացու «աւագ այր»-ը դիտում է որպէս «քմահաճ մեկնություն» (Անձ. բառ., հտ. Ա, 1942, էջ 5-6):

Անկախ Խորենացու մեկնության հավաստիությունից՝ նկատելի է, որ պատմահայրը հաշվի է առել ստուգաբանության համար անհրաժեշտ երկու կարևոր գործոն՝ բառիմաստը և հնչյունական կազմը:

Նա Աբգարի կերպարում շեշտում է իմաստությունը և տարիքը, որոնք փոխադարձաբար կապված են իրար հետ (հիշենք, որ Եվսեբիոսը Աբգարի կերպարի մեջ շեշտում էր միայն ուժը):

Գրաբարի բառարանները *աւագ*-ը մեկնում են «մեծ, երիցագոյն, մեծապատիւ, երևելի...» (Տե՛ս ՆՀԲ, *Աւագ* բառահոդվածը): Բառի այդ իմաստները ակներև են նաև *աւագ* բաղադրիչով կազմություններում. *աւագագործ* «մեծագործ, հոյակապ, գերապանծ» (ՆՀԲ), աւագամեծար «գերապատիւ, վսեմական» (ՆՀԲ):

Խորենացին իր «ստուգաբանության» հիմքում դրել էր *աւագ*-ի՝ գրաբարում գործածական իմաստները: Իսկ ինչ վերաբերում է հնչյունափոխությանը, ապա հայերենում, ինչպէս և այլ լեզուներում նկատելի է բ>ւ (վյուն) անցումը (օրինակները տե՛ս *Աղուանք*-ին վերաբերող բաժնում):

---

<sup>3</sup> *Լարութնէայ դիւանագիր դպրի Եղեսիոյ Թուղթ Աբգարու*, Վենետիկ, 1868, էջ 1-2:

Վերը նշված դիտարկումները թույլ են տալիս, թեկուզ ոչ վստահաբար, ենթադրելու, որ թագավորին անվանել են *աւագ այր*, գուցե՛ հասուն տարիքում, ինչպես նշում է Գ.Սարգսյանը:

*Աւագ*-ի վստահելի ստուգաբանություն չկա<sup>4</sup>: Կարծում ենք բառը ունի հ.-ե. ծագում. հմմտ. իրան. (a)vāk «բառ, խոսք», նաև «համբավ, հռչակ»: *Isou̯p, p̯an* → «մեծ, իմաստուն, անվանի» անցումը առկա է մի շարք լեզուներում. լատ. oro «ասել, խոսել»- orator «ճարտասան», անգլ. speak «խոսք»- speaker «խոսնակ, խորհրդարանի ավագ»: *F̯an* արմատով *p̯anwagh*-ն գրաբարում նշանակում է «մեծանուն, անվանի, հռչակավոր»:

**Աղուանք** – «...ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա» (II, ը):

Գրաբարում, իրոք, *աղու*-ն ունի «քաղցր» իմաստը: Աղ-ը քնիկ հայերեն բառ է. հ.-ե. \*sal-d- կամ \*sal-ից: Հնդեվրոպական մի շարք լեզուներում, այդ թվում և հայերենում, այդ արմատով կազմությունները ձեռք են բերել նաև «քաղցր» իմաստը, գրաբարում *աղի* «աղի, դառն» հմմտ. «Հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրք», *աղու*՝ «քաղցր, անուշ» (ՆՀԲ), ռուս. соль «աղ»- сладкий «քաղցր»: (Մանրամասն տե՛ս Արմ. *աղ* բառահոդվածը):

*Աղուանք* տեղանունը պատմագրության մեջ հայտնի է նաև *Ալբանիա*, *Առան* անվանումներով: «Ալբանիա» և «ալբանա-

---

<sup>4</sup> «Օսրոյենէի առաջին պատմականորեն հավաստի թագավորը Տիգրան Բ-ի դաշնակից Աբգար I Պիկան էր (94-68): Նրան հաջորդած թագավորների գրեթե կեսը նույնպես կրում էր Աբգար անունը (ավելի ստույգ՝ «Ավգար»): Աբգար արամեական անունը վկայված է մ.թ.ա. VII դարում, իսկ պալմիրյան արձանագրություններում սովորաբար թարգմանվում է «կաղ» (տե՛ս **Ա. Հակոբյան**, *Արամեագիտության և ասորագիտության ներածություն*, Ե., 2015, էջ 215):

ցիներ» տերմինները «որպես նշված երկրի ու այն բնակեցնող ցեղերի անվանումներ, առաջին անգամ պատմության մեջ մեզ են հասել Պոմպեոսի Կովկասյան արշավանքներից հետո՝ հանրահայտ Ստրաբոնի միջոցով: Բայց նա չի բացատրում ո՛չ դրանց ծագումը, ո՛չ էլ նշանակությունը»<sup>5</sup>:

Մ.թ. I դարից մինչև մեր օրերը *Աղուանք* տեղանվանը տրվել են մի շարք տարաբնույթ մեկնություններ՝ «Սպիտակ երկիր» լատ. «albi»-ից, «լեռների երկիր» «alp, alb»-ից, կապվում է *halb* ցեղանվան հետ և այլն<sup>6</sup>:

Ալբանիա–Աղուանք-ի հարցում կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում.

Ուսումնասիրողների մի մասի կարծիքով «*Աղուանք*» անվանումը հունա-հռոմեական *Ալբանիա* անվան տառադարձումն է՝ հայերենի օրենքներին համապատասխան»:

Հ. Սվազյանը իրավացիորեն մերժում է այդ տեսակետը՝ գտնելով, որ «Հայերեն «Աղուանք» անվանումը ծագել է հայկական միջավայրում, ինչպես սովորաբար առաջանում են աշխարհագրական անվանումները՝ կապված որևէ պատմական դեպքի, անձի, ժողովրդի կամ բնության առանձնահատկությունների հետ» (ն.տ. էջ 52):

Մ.Աղաբեկյանը, նույնպես մերժում է հայ. *Աղուանք*-ի հունահռոմեական Albania-ից ծագած լինելը: Հունարենի և նախապատմական շրջանի հայերենի հնչյունական առանձնահատկությունների համադրմամբ նա չի բացառում, որ «Հունահռոմեական Albania տեղանունը առաջանար հայերեն \*Alupan(k') կամ \*Alupan ձևից:

---

<sup>5</sup> **Հ. Ս. Սվազյան**, *Աղվանից աշխարհի պատմություն* (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 49:

<sup>6</sup> *Նշվ. աշխ.*, 49-51:

Լեզվաբանը պարսկերեն Aran ձևը նույնպես հայերենից կատարված փոխառություն է համարում<sup>7</sup>:

*Աղուանք-Ալբանիա* բառերի *վ-բ* հնչյունափոխությունը եզակի դեպք չէ: Նման կարգի օրինակներ շատ կան. հմմտ. հ.-ե. \*al-bho-, \*aləbhniā- հայ. աղանի, լատ. caballum, իտալ. cavalle «ձի»- ֆր. cheval, միջ. պրս. vat- պրս. bad «վատ», իրան. \*vafra- պրս. barf: Հատուկ անուններից՝ Գաբաուն – հուն. Γαβαθων, Չաբուդոն – հուն. Ζαβουδων:

**Անգեղեայ, Անգեղ տուն** – «Իսկ զայր *խոժոռագեղ* և բարձր և *կոպտարանձն* և *տափակաքիթ*, *խորակն* և *դժնահայեաց...* Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել *ժահաղիմութեանն* ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արևմտից և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն» (II, Ը):

Հատվածը վերաբերում է Տորք Անգեղին, որին Խորենացին բնութագրում է «ուժեղ» և «տգեղ» հատկանիշներով: Ուշադրության արժանի է այն, որ ընդգծված բառերը Խորենացու ստեղծածն են: ՆՀԲ-ը այլ հեղինակներից վկայություն չունի: Նույն հատվածի «առնու վեմս բլրաձևս և ձգէ զկնի» նախադասության *բլրաձև* բառն էլ դարձյալ առաջին անգամ գործածել է Խորենացին: Ըստ երևույթին այդ կարգի կազմությունները պատճենում կամ կիսապատճենումներ են հունարենից: Օրինակ *բլրաձև*-ի հուն. գուգահեոն է βουνο-ειδής-ը «բլրի ձև ունեցող», βουνός «բլուր, բարձունք», εἶδος «տեսք, ձև»:

**Անգեղայ, Տորք** բառերի ստուգաբանության վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ: Ուսումնասիրողները Խորենացու բացատրությունը համարում են «ժողովրդական ստուգաբանություն»: Տարակարծություններ կան հատկապես *անգեղեայ*-ի շուրջ:

---

<sup>7</sup> Մ. Աղաբեկյան, *Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք տեղանվան վերաբերյալ»* (ՊԲՀ, 1990, N 1, էջ 168-177):

Գ. Ղափանցյանը կարծում է, որ «Անգեղ տուն» կապակցության Անգեղ-ը՝ նախապես «ամրոց» իմաստով, հասարակ անուն էր: Նա ընդունում է *Տորք*-ի՝ Փոքր Ասիայի ժողովուրդների շրջանում տարածված Tarku, Tarhu աստվածության անվանման հետ ունեցած կապը<sup>8</sup>:

Գ. Զահուկյանը մերժում է Տորք անվան հայերեն մեկնությունը (իբրև Տուրք<տուր-ք)՝ ընդունելով բառի փոքրասիական բնույթը՝ հայերենին ավելի մոտ թրակյան ձևը<sup>9</sup>:

Նա, Անգեղեայ-ի՝ Խորենացու մեկնությունը համարելով ժողովրդական ստուգաբանություն, ավելի հավանական է համարում կապը *Անգեղտուն* գավառի և նախարարական տոհմի անվան հետ: «Կապ ունի՝ արդյոք *անգղ* թռչնանվան հետ, ինչպես կարծում է Ն. Աղոնցը: Թերևս հնարավոր է *անգղ*-ի հ.-ե. ծագումը \*ank- «ծռել, թեքել» արմատից. թռչունը կարող էր այսպես կոչվել ըստ կտուցի ձևի»<sup>10</sup>:

Խորենացու ստուգաբանության վերաբերյալ յուրօրինակ դիտարկում ունի Գ. Սարգսյանը: «Մա «թաքնված ստուգաբանության» դեպքերից է, երբ Խորենացին «անգեղ» բառը բացատրության մեջ փոխարինել է «ժահաղիմութին» բառով, որը դեռ ուղեկցվում է նախորդող «կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց» որակումներով»: Գ. Սարգսյանը, բերելով «Անգեղի» վերաբերյալ Անանուն պատմիչի տեղեկությունները, շարունակում է. «Անանունն, ուրեմն գիտե

<sup>8</sup> Տե՛ս Գ. Капанцян, *Историко-лингвистические работы*, Е., 1956, стр. 200, 273:

<sup>9</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները* (ՊԲՀ, 1981, №3, էջ 60): Մեկ այլ տեղ նա հավանական է համարում Տորք անվան փոքրասիական ծագումը՝ բերելով մի շարք զուգահեռ ձևեր: (Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, էջ 75):

<sup>10</sup> Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 411-412:

այն փաստը, որ Աստվածաշնչում Անգեղը հանդես է գալիս որպես «բարբարոսների» աստվածություն: Խոսքը 4-րդ թագ. ԺԷ, 30-ում «և արք Քուրայ արարին զԱնգեղ» արտահայտության մասին է, որին համարժեք նախադասության մեջ հունական բնագիրը հիշատակում է Ներգալին՝ բաբելական ստորգետնյա աստծուն»: Այն, որ Խորենացին շրջանցել է իր տեսադաշտում առկա Աստվածաշնչի այս դիցանունը, ինչպես և նրա կապը Բագարատի հետ, գուցե կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նա այդ տեղեկության համար Տորքի առասպելի մեջ հենակետ չի գտել, կամ գուցե նա այդ արել է Բագրատունիների ոչ հայկյան լինելու տեսակետը (I, 22) անսասան պահելու նպատակով»<sup>11</sup>:

*Անգեղ*-ի՝ Խորենացու մեկնությունը անդրադարձել է նաև Ա. Պետրոսյանը: Նա Խորենացու մեկնությունը համարում է «իսկությունը մոտ»՝ նկատելով որ առասպելի ասուրական տարբերակում Ներգալը շիլ է, կաղ և ճաղատ:

Ա. Պետրոսյանը հ.-ե. \*wel- «տեսնել»-ից կազմված հայ. *գեղ*[եցիկ] բառի մեջ նկատում է «տեսքոտ՝ գեղեցիկ», իսկ *անգեղ*-ը «տգեղ, անտեսք» հավելելով, որ հայ առասպելներում «Արա Գեղեցիկ և Տուրք Անգեղեայ անուններով հերոսների գոյությունը, որոնք կարող են դիտվել «տեսքոտ» – «անտեսք» հակադրության համատեքստում, ևս մի փաստարկ է *Անգեղի գեղ*- արմատով մեկնաբանության օգտին»<sup>12</sup>:

*Արագած* – «Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լեքինն ի նոյն կողմանէ, և զլեառոնն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած, և զկալուածսն՝ ոտն Արագածոյ» (I, ԺԲ):

<sup>11</sup> Գ.Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 95-96:

<sup>12</sup> Արմեն Պետրոսյան, *Արամագղ. կերպար, պաշտամունք, նախաստիպեր*, Ե., 2006թ., էջ 38-39:

Նկատելով, որ Արամանեակ-Արագած մեկնությունը այնքան էլ համոզիչ չէ, Խորենացին գտնում է արդարանալու միջոց՝ գրելով *յանկագոյն իւր անուն* («հարմարեցնելով իր անվանը») բառակապակցությունը: Գրաբարում յանգլ յանկ ունի նաև *հարմար* իմաստը (Տե՛ս ՆՀԲ, *Յանգ* կամ *Յանկ* բառահոդվածը): Գ. Ղափանցյանը *Արագածի* առաջին բաղադրիչ իրավացիորեն համարում է Ար(ա) հատուկ անունը, որը նախապես ունեցել է պաշտամունքային բովանդակություն (գարնան աստվածություն), հմմտ. նաև ռուս. Яр, Ярило: Ար(ա) բաղադրիչով Գ. Ղափանցյանը բերում է մի քանի տեղանուններ՝ Արահեզ, Արահուծ, Արագեճ, Արագած՝ վերջինիս համար հնարավոր համարել «Արայի գահ» ստուգաբանությունը<sup>13</sup>: Ընդունելի է նաև «Արայի գոտի» ստուգաբանությունը<sup>14</sup>:

Գրաբարում *գոտի* բառը ունի նաև «լեռան շրջապատ, կամ շարունակություն» իմաստը: ՆՀԲ-ը վկայում է Խորենացու հետևյալ նախադասությունը. «Ի սորա աուրս աղմուկ մեծ լեալ ի գոտիս մեծի լերինն Կուկասու յաշխարհին Բուլղարաց» (II, Թ): Ստ. Մալխասյանը թարգմանել է՝ «Արա ժամանակ մեծ խռովություններ ծագեցին Կովկաս մեծ լեռան գոտիներում, բուլղարների աշխարհում»:

**Բարքոբայ** – Այս անձնանունը Խորենացու գրքում վկայված է մեկ անգամ. «Քանզի ի ժամանակին որպես ապստամբեցին Հրեայք յԱդրիանոսէ... և ետուն պատերազմ ընդ Ռուփոսի եպարքոսի, առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի, որում անուն էր Բարքոբայ, այսինքն աստեղ որդի, որ էր գործովք չարագործ և սպանող» (II, Կ):

<sup>13</sup> Տե՛ս Գ. Капанцян, *Историко-лингвистические работы*, т. II, Е., 1975, стр. 136:

<sup>14</sup> *Գած* և *գոտի* բառերի՝ հ.-ե. նույն արմատից ծագած լինելու մասին տե՛ս Է. Աղայան, *Բարբրենական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 48-50:



Ստ. Մալխասյանը այս անվան վերաբերյալ որևէ ծանոթագրություն չի տալիս:

Գ. Սարգսյանը ծանոթագրում է, որ Բար Կոխբան հրեական ապստամբության ղեկավար Միմոնի պատվավոր անունն է<sup>15</sup>:

Անձնանվան ստուգաբանությունը, ավելի ճիշտ, անձնանվան բաղադրիչների թարգմանությունը ստույգ է: Սրամեերեն *բար* նշանակում է «աստղ», կոխբա (Քուխբա) «զավակ, որդի»: Բար Կոխբան 132-135 թթ. հակահռոմեական ապստամբության ղեկավարն էր: Խորենացին նրան որակում է «չարագործ և սպանող»: Բացասական գնահատականը թերևս գալիս է այն օտար աղբյուրից, որից օգտվել է Խորենացին: Իրականում Բար Կոխբան բարյացակամորեն էր տրամադրված քրիստոնյաների նկատմամբ:

Մեռյալ ծովի շրջանում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել էր Բար Կոխբայի մի գրություն, որում նա հորդորում էր վնաս չպատճառել քրիստոնյաներին (ԵՇՅ, 3, ստ. 15):

Բար Կոխբայի ապստամբության անհաջողությունից հետո եբրայերենը աստիճանաբար դադարեց խոսակցական լեզու լինելուց՝ իր տեղը զիջելով արամեերենին<sup>16</sup>:

**Դիմաքսեան** – «Եւ զՆերսէս գորդի որդւոյ իւրոյ ստընտուին Գիսակայ, ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահատակութեանց հօրն- Դիմաքսեան. քանզի, որպէս ասացաքն՝ զկէս դիմացն սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի» (II, ԽԷ): Առաջին հայացքից, թվում է, արտառոց

<sup>15</sup> **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е., 1990, стр 247, прим. 434:

<sup>16</sup> Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, *Հրեական քերականական ուսմունքի կայացումն ու զարգացումը 9-13-րդ դարերում* (թեկնածուական ատենախոսություն, Ե., 2014, էջ 23):

մեկնաբանություն է: Սակայն այդ անվան ստուգաբանությանը (գուցե և ոչ գիտական, որը տվյալ դեպքում էական չէ) Խորենացին թերևս ծանոթ է եղել օտար աղբյուրներից:

Ստրաբոնը նշում է *սարապարա* ցեղանունը. այդ ցեղերի մի մասը վերաբնակվել է Մարաստանի սահմանների մոտ. Ն. Ադոնցը *Սարապարա*-ն մեկնում է «գլուխը պատոված», ինչպես թարգմանել են հույները: Սա նշանակում է Կամսար-ի՝ Խորենացու ստուգաբանության որոշ հիմքերի առկայություն: Գ. Ղափանցյանն էլ, հաշվի առնելով Կամսարականների և Դիմաքայանների ցեղակցական կապը, այդ հասկանիշը՝ «գլուխը պատոված, կտրված», վերագրում է և Դիմաքայաններին՝ նկատելով, որ հայերեն ձեռագրերում *Դիմաքստան*-ը երբեմն գրվում էր Դիմակիստան<sup>17</sup>:

**Գնունի** – «Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս, որ սքանչելի իմն դիպեալ եղև ըստ գործոյն և անունն. քանզի պատրաստեր զըմպելիսն արքայի յընտիր և ի համեղ գինեաց, ունէր և կոչումն անուանն Գին. ընդ որ կարի զուարճացեալ, ասեն, Վաղարշակ՝ կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց» (II, Է):

Գնունիների պալատական մատովակներ լինելու փաստը թերևս անժխտելի պետք է համարել: Պատմաբան Ս. Պետրոսյանը Գնունիների զբաղեցրած հազարապետի պաշտոնի անվանումը նույնպես դիտում է որպես

---

<sup>17</sup> Այդ ցեղանունների և Ղափանցյանի վարկածի մասին տե՛ս **Г. Капанцян, Историко-лингвистические работы**, т. II, Е., 1975, стр. 119: Ս. Պետրոսյանը, շեշտելով տոհմական քրմական ծագումը, ենթադրում է նախնական Դիմանաքս//Դի-ման-ա-քուս ձևը (դի «աստված», ման- \*men «խոսք», քուս «բամբասանք, չարախոսություն»: Ըստ այդմ՝ \*Դիմանաքուս-ը նշանակելու է «աստծու խոսքը տարածող», իսկ դա քրմական դասի մենաշնորհն էր» (Տե՛ս **Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում**, Ե., 2006թ., էջ 410):

խաղողագինեգործության բնագավառին վերաբերող անվանում, այլ ոչ թե 1000 (հազար) բառից կազմված<sup>18</sup>:

Այս համատեքստում Խորենացու ստուգաբանությունը որոշակի հիմքեր ունի: Առարկել կարելի է գինի-Գնունի ոչ օրինաչափ հնչյունափոխությունը: Բառակազմության ժամանակ գինի-ի առաջին վանկի ի-ն սովորաբար պահպանվում է (այդպես է և արդի հայերենում): Նկատենք սակայն, որ գրաբարում կան բառեր, որոնցում առկա է *գին*, ոչ թե *գինի* բաղադրիչը. գինեակ, գինեբուխ, գինեգոյն, գինեզեն բառերից գատ ՆՀԲ-ն վկայում է նաև *գինավաճառ*, *գինարբու*, *գինարբուք*, *գինաւէտ...* բառերը: Չի կարելի անվերապահորեն ժխտել ընդգծված բառերի՝ հետագա գրչագրական-ձեռագրական միջամտության արդյունք լինելու փաստը, բայց պետք է և հաշվի առնել վկայված իրողությունը, այսինքն՝ *գին* արմատից կազմված լինելը:

Գ. Սարգսյանը գրում է. «Գնունի տոհմանվան կապակցությամբ հիշատակելի է և «Գնել» անձնանունը: Թեև Խորենացին այն անմիջական մասնակից չի դարձնում տոհմանվան ստուգաբանությանը, բայց և այնպես նրա մոտ այդ անվան երեք կրողներն էլ առնչվում են այդ տոհմին, ըստ որում դրանցից մեկը հանդես է գալիս որպես արքունի տակառապետ»<sup>19</sup>:

*Գինի* բառի մեջ –ի նախնական ածանց լինելը համեմատելի է *այգի* բառի *ի*-ի հետ<sup>20</sup>:

*Այգի*-ն նախապես ունեցել է միայն «խաղողի այգի» իմաստը: Այդ ակնառու է հատկապես Աստվածաշնչի հունարեն և այլ լեզուներով համապատասխան հատվածների

---

<sup>18</sup> Սարգիս Պետրոսյան, *Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ*, ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 177:

<sup>19</sup> Գ. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 94:

<sup>20</sup> *Գինի* բառը գրաբարում գործածվել է նաև խաղող իմաստով: Այդ մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, «Խաղող» հասկացության իմաստային դաշտի հին անվանումների շուրջ («Էջմիածին», Ա, 2013թ., էջ 90-91):

համեմատությամբ: Ահա մի օրինակ. «Կերիցեն գոչխար եւ զարջառս ձեր, եւ կերիցեն զայգիս և թզենիս ձեր և զձիթենիս» (Երեմիա, Ե., 17), ռուս. «съедят овец твоих... съедят виноград твой и смоквы твои»:

Հ.Աճառյանը *այգի* բառի արմատը համարում է \*այգ «խաղող»-ը, իսկ ի-ն՝ բուսականության, ծառանունների բնորոշ ածանց» (Տե՛ս Արմ, *այգի* բառահոդվածը): Մերժելի չպետք է համարել և նախնական *գին* «խաղող, գինի», *գինի* «խաղողի որթ, խաղողենի» իմաստները:

*Գինի* բառում -ի- ածանցի գոյությունը ընդունում է և Գ. Ջահուկյանը. «Վաղնջահայերենում այն եղել է դեռևս գործուն և արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեև պահպանվել են ածանցելի և ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ ալի-ք, աղանի, աղ-աւր-ի-ք, այգի, անդի... գինի» (ՀԼՊ, 231):

Չանդրադառնալով հարցին վերաբերող այլ մանրամասներին՝ արձանագրենք, որ Խորենացու՝ *Գնունի*-ի մեկնությունն էլ կարելի է հավաստի համարել:

***Ջեւքսիպոն*** – «Ջոր յետոյ Սեւերիոս արքայ Հռովմայեցոց նորոգեաց և ինքն շինեաց զբաղանիսն ի տեղուջ սեանն, որ ունէր ստորագիր խորհրդական անուն Արեգակն, ըստ Թրակացոց բառի Ջեւքսիպոն, որոյ կոչմամբ յորջորջեցան և բաղանիքն» (II, 2Ը): Ստ. Մալխասյանը թարգմանել է «Հետո հռոմեացիների Սեվերիոս կայսրը նրան նորոգեց և իր կողմից շինեց բաղանիքը այն սյունի տեղում, որի տակ գրված էր խորհրդավոր Արեգակ բառը, Թրակացոց լեզվով՝ Ջեւքսիպոն, և այս անունով էլ կոչվեց բաղանիքը»:

Խոսքը Բյուզանդիոնում (հետագայում Կոստանդնուպոլիս) կառուցված մի շինության մասին է, որի անվանումը Խորենացին համարում է թրակերեն: Նշենք, որ թրակերենը

որպես առանձին լեզվու լինելու մասին V դ. մատենագրության մեջ առաջին անգամ արձանագրել է Խորենացին: Թրակերենի բառարանում նման բառ չգտանք: Գուցե որոշ վերապահությամբ այն կարելի է համարել թրակերեն *zvaka(s)*-ը «փայլուն, պայծառ, սպիտակ»<sup>21</sup>:

Բառի առաջին բաղադրիչը թերևս հուն. Ζεύς «Ջևս» աստված բառն է, երկրորդը ἴπιος «ձի», որն ունի նաև «կառքին լծված ձիեր, երկձի կառք» իմաստները:

Ժ. Մահեն նշում է, որ այս դեպքում նկատի է առնվել «միստիկական արևային կառքը, որ գոյություն ունեւ թրակյան ավանդություններում»<sup>22</sup>:

Խորենացու *խորհրդական անուն արեգական* կապակցությունն էլ հավաստում է հասկացության միստիկական բնույթը: *Խորհրդական* բառը գրաբարում ունեւ նաև «ծածուկ, գաղտնի, գաղտնախորհուրդ» իմաստները, ինչպես հուն. *μυστηρίος, ἱθος*-ը:

Ինչ վերաբերում է *Արեգակն*-ին, ապա դա հին աստվածություններից Ապոլոնն է, որը հետագայում նույնացվեց Հելիոսի հետ: Վերջինիս նվիրված շինության սյուներից մեկում թրակյան ավանդույթներով արձանագրված էր *Ζευξπιος*, որը ըստ էության Հելիոսն (Արեգակ) էր:

Կայսրերը նպատակ ունեին Բյուզանդիոնը դարձնել «Նոր Հռոմ» (այդ մասին ակնարկում է և Խորենացին)՝ վերջինիս բնորոշ կառույցներով՝ թատրոն, ձիարշավարան, բաղնիքներ: Հետագայում՝ քրիստոնեություն ընդունելուց հետո, միտում կար փոխելու հին հռոմեական ավանդույթները, սրա հետ կապված՝

---

<sup>21</sup> Տե՛ս *Дурадинов, Словарь фракийского языка* (Էլեկտրոնային տարբերակ):

<sup>22</sup> Տե՛ս *Mahé, նշվ. աշխ.*, էջ 383, ծան. 12:

նան անվանումները. Սեվերիոսի բաղնիքներն էլ վերանվանվեցին Կոստանդինյան<sup>23</sup>:

**Հեղիայ** – «Եւ ինքն շինէր զԵրուսաղէմ, զաւերեալն ի Վեսպասիանոսէ... և անուանեաց Հեղիայ յուր անուն, որպէս և կոչէրն իսկ Ադրիանոս՝ արեգակն» (II, Կ): Հեղիայ-ն հուն. ἡλιοσ «արև, արեգակ»-ի տառադարձումն է: Ինչ վերաբերում է Ադրիանոս – արեգակ նույնացմանը, ապա այն հունարեն Էլիոս և լատիներենի Aelius-ի (այդպես էր Ադրիանոսի հռոմեական անվանումը) արտաքին-հնչյունական նմանութեան արդյունք է<sup>24</sup>:

**Մեստրայիմ** – «Քանզի Մեստրայիմդ է Մեծրայիմ, որ իմանի Եգիպտոս» (I, Ե): Ստ. Մալխասյանը աշխարհաբար թարգմանել է «Որովհետև այդ Մեստրայիմը Մեծրայիմն է, որի տակ հասկացվում է Եգիպտոսը» (ն.տ.):

**Մեստրեմ**-ը անձնանուն է, ըստ Աստվածաշնչի՝ Քամի որդիներից մեկը. «Եւ որդիք Քամայ՝ Քուշ եւ Մեստրեմ, փուղ և քանան» (Ծննդ. 7, 6, Ա.Մնաց, Ա. 8): Խորենացու գրքում այդ անձնանունը Մեստրայիմ ձևով է. «Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ և երրորդ ի Քամայ» (ն.տ.): Խորենացին այնուհետև նշում է. «...այսպէս զսա կարգեալ ի յուշմագունէ և ընթերցասիրէ ումեմնէ ասորոյ. և հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն»:

Ինչ վերաբերում է **Մեստրայիմ/Մեծրայիմ** տարբերակներին, ասենք, որ հունարեն Աստվածաշնչում *μεσοραϊμ* է, այդպես է և լատիներենում, ֆրանսերենում, ռուս. *Месораим*: Չայերենի Մեծրայիմ-ը (նաև ռուսերենը) ավելի մոտ է եբրայական գրությանը և արտասանությանը: Անբացատրելի է մնում Մեստրայիմ բառի մեջ *տ*-ի առկայությունը:

<sup>23</sup> Այս և Բյուզանդիոն (Կոստանդնուպոլիս)-ի մասին բազմաբնույթ տեղեկություններ տե՛ս u Biblioth que Byzantine,  tudes-7. Naissance d'une capitale. Constantinople et ses institutions, de 330 a` 451. par Gilbert Dagron, Paris, 1974.

<sup>24</sup> Տե՛ս **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е., 1990, стр 247, прим. 435:

Բառարանում *Մեստրիմ* գլխաբառի բացատրությունը հետևյալն է. «Մին յորդուց Քամայ և հայր այլևայլ Ափրիկեցի ցեղերու, բայց մանաւանդ Եգիպտացուց, որ և կոչեցան յանուն նորա: Մեստրեմ է նաև եբրայեցերէն անուն Եգիպտոսի ի Սուրբ Գիրս և արաբացիք ցարդ Մըսըր անունը կու տան այս երկրին» (ԲՄԳ, 355):

**Նիկանովր** – «Զկնի որոյ թագաւորեաց Բաբելովնի Սելեւկիոս, զհուովից կորզելով զիշխանութիւն. ուստի և զՊարթևս հնագանդեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ Նիկանովր այնորիկ աղագաւ» (II, Ա):

Ստ. Մալխասյանը աշխարհաբար թարգմանության մեջ Նիկանովր բառից հետո փակագծերում ավելացնում է *«հաղթող»*. «...որի պատճառով և Նիկանովր (հաղթող) կոչվեց: Թեև Խորենացին Նիկանովրը *«հաղթող»* չի մեկնում, իմաստը հասկանալի է դառնում համատեքստից:

Հուն. Νικάωթ բառացի նշանակում է «այրահաղթ» (Անձ. բառ.): Բառաբաղադրիչների իմաստները, անշուշտ, գիտեր և Խորենացին: Նա հունարեն ω- ն տառադարձել է -ով- հնչյունակապակցությամբ: Դասական հայերենում ω- ով տառադարձումը նկատելի է հատկապես հատուկ անուններում: Է. Աղայանը ենթադրում է, որ այդ վ-ն շատ թույլ արտասանություն ուներ»<sup>25</sup>:

V դարում *վ*-ով և առանց *վ*-ի ձևերը բառային տարբերակներ էին: Հաճախ նույն հեղինակը այս կամ այն բառի երկու տարբերակներն էլ օգտագործում է: Խորենացու գրքում՝ Բաբելոն (I, Ժ, ԺԲ), Բաբելովն (I, ԺԱ, II, Ա): Քննական բնագրում Մեսրոպ ձևով է, բայց ծանոթագրվում է, որ ձեռագրային տարբերակներում կա և Մեսրովր, Մեսրովպ:

---

<sup>25</sup> Է. Աղայան, *Գրաբարի քերականություն*, հտ. I, գիրք Ա, Ե., 1964, էջ 361-362:

Ենթադրելի է, որ V դ. հայերենում հաճախական, երբեմն էլ արդեն հայերեն գիտակցվող բառերը (ոչ միայն հատուկ անունները) ավելի շատ գրվում, բնականաբար և արտասանվում էին առանց վ-ի:

**Ոլիմպոս–Դիցընկէց** – «Եւ սպանեալ զերկուս ոմանս վասն երդմանն և ուխտին հաստատուն կալոյ՝ խորհի այնուհետեւ քոյր նոցա Աստղիկ հանդերձ կանամբք Ջրուանայ, հաւանեցուցանել զոմանս ի Տիտանացն՝ ապրեցուցանել զայլ մանկունս, և յարևմուտս կոյս յուղարկել ի լեառնն, որ անուանեալ կարդային Դիցընկէց, իսկ այժմ կոչի Ոլիմպոս» (I, 2):

Ոլիմպոս լեռը, ըստ հունական դիցաբանության՝ գլխավոր (օլիմպիական) աստվածների բնակավայրը, գտնվում է Թեսալիայում:

**Դիցընկէց** – հայերեն բառը մեկնում են «այն տեղը, որտեղ ընկած (թաղված) են աստվածները՝ դիք (չաստվածները)<sup>26</sup>, «աստվածների խառնաժողով», կամ «աստվածների տապալում»<sup>27</sup>:

ՆՀԲ-ը **դիցընկէց** բառով բերում է միայն մեկ օրինակ՝ Խորենացու վկայությունը՝ բառը համարելով «մակդիր լերին, ուր հսկայք դիցագունք դնելով լերինս ի վերայ լերանց՝ կամեին ընկենուլ յերկնից ի վայր գդիոս, այն է անցք աշտարակաշինութեան. կամ ուր զաւակք դիցագանց փախստեայ անկան ի կոտորածէ տիտանեանց»: ԱԲ-ի բացատրությունը շատ կարճ է «դիցընկէց լեառն. Ոլիմպոս լեռը»:

---

<sup>26</sup> *Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն. աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորեն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս.Պետերբուրգ, 1889, ծան. 35:*

<sup>27</sup> **Мовсес Хоренаци, История Армении**, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Е., 1990, стр 221, прим. 42:



Այս և այլ կարգի մեկնություններից ակնհայտ է դառնում մի բան, այն է՝ *Ոլիմպոս-Դիցընկէց* աղերսը հստակ չէ և նոր մեկնաբանության կարիք ունի:

Ստ. Մալխասյանը ծանոթագրում է. «Երևում է, որ *ὄλυμπος* (Օլիմպոս) լեռան անունը համարել են ծագած հունարեն *λειπω, λιπ* արմատից, որ նշանակում է *ձգել, ընկենուլ*, ուրեմն և դիցընկէց: Բառը համարել են համանշանակ Օլիմպոս բառին» (էջ 463, ծան. 23): Բոլորովին չհավակնելով այդ կնճռոտ հարցի վերջնական լուծման՝ հավանական ենք համարում, որ Խորենացու «Պատմության» հետագա գրիչները Ոլիմպոսը շփոթել են հուն. *ὄλλυμι*-ի հետ, որը բազմիմաստ է և «կործանել, ոչնչացնել, սպանել» իմաստներից զատ՝ նշանակում է նաև «հանել, հեռացնել» (Տե՛ս *Дворецкий*, 1166):

***Տարբան*** – Այս տեղանունը Խորենացին կապում է Տարբան անձնանվան հետ. «Իսկ ի կրտսերագունից որդւոցն նոցա Տարբան անուն, երեսուն ուստերօք և հնգետասան դասերօք... բնակէ ի նոյն գետեզեր, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարբան» (I, 2):

Գ. Սարգսյանի դիտարկումով Խորենացու ստուգաբանած տեղանուններից չորսը կապվում են Օլիմպիոդորոսի պատմած աստվածաշնչական Մեմի՝ Հայաստանի բնակեցման առաջին ալիքին վերաբերող առասպելին, դրանք են Սիմ(լեռ)-Մեմ, Զարուանդ-Զրուան, Տարօն-Տարբան, Յրօնք-Մեմի որդիների բաժանման վայրը<sup>28</sup>:

Չանդրադառնալով *Տարբան* տեղանվան և Տարբան անձնանվան կապի իրական կամ մտացածին լինելու հարցին՝ նշենք, որ հնարավոր է *ւ(ու) > բ* հնչյունափոխությունը, որն առկա է նաև այլ լեզուներում. հմմտ. միջ. պրս. *uzvan*- պրս. *zabān* «լեզու»:

---

<sup>28</sup> Գ.Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 120:

*Տարան* և *Տարբան* բառերի վերաբերյալ կան նաև ստուգաբանական այլ փորձեր: Գ. Զահուկյանը Տարան ձևի գուգահեռներ է նշում հ.-ե. մի քանի լեզուներում՝ որպես անձնանվան բաղադրիչ՝ բխեցնելով հ.-ե. dō-ro-, də-ro «նվեր»-ից (որից՝ հայերեն «տուրք»)՝<sup>29</sup>:

*Տարբան*-ի ստուգաբանության երկու տարբերակ է առաջարկում Ս. Պետրոսյանը՝ հնարավոր համարելով հայերեն *տորբան* «վարդապետություն» բառի տարբերակը, կամ հուն. τάρβος «վախ, ահ, սրբազան վախ, ակնածանք» բառը: «Երկու դեպքում էլ Տարբան անձնանունը բացահայտում է իրեն կրողի «քրմական» էությունը: Ըստ երևույթին նախապես այն եղել է գահանունը կամ տիտղոսը հնագույն Տարոնում իշխած քուրմ-արքաների»<sup>30</sup>:

Գրաբարում *տորբան*-ը որպես առանձին բառ վկայված չէ: Այն առկայանում է *տորբանել* և *տորբանական* կազմություններում: Երկու ձևերն էլ վկայել է Գրիգոր Մազիստրոսը:

Մազիստրոսի վկայությունների հիման վրա ՆՀԲ-ը *տորբանական*-ը մեկնում է «երկարաբան», *տորբանել*-ը «երկարաբանել»:

Բառարանի հեղինակները «երկարաբանել»-ից գատ նշում են նաև «կազմել զբան ոլորեալ և մանուածոյ իբրև գտոռն»՝ փորձելով տորբ-ը նույնացնել *տոռն* «լար, պարան» բառի հետ: Հ. Աճառյանը թեև տորբան-ը չի ստուգաբանում, սակայն գրում է. «Պետք է կարծել, որ կազմուած է *տոր+բան* «խօսք» բառերից, բայց անյայտ է *տորք*» (Տե՛ս Արմ, *տորք* բառահոդվածը): Գ. Մազիստրոսի լեզուն խրթին է, նրա գործածած շատ բառեր անհասկանալի են և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք

<sup>29</sup> Գ. Զահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, էջ 78:

<sup>30</sup> Ս. Պետրոսյան, *Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում*, Ե., 2006 թ., էջ 221-222:

են տվել: Մենք էլ առաջարկում ենք մեկ այլ վարկած. *Տորթանել-ի տոր* բաղադրիչը գուցե եբրայերեն *Torah* «ուսմունք, օրենք» բառն է:

\*  
\* \* \*

«Պատմության» մեջ հանդիպում ենք մի շարք մականունների, որոնք քննական բնագրում զետեղված են հատուկ անունների ցանկում:

**Եղբայրասեր** - «Որպես և Պտղոմէոսն, որ և Եղբայրասեր, պետ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և զվէպս ի յոյն լեզու փոխարկեաց...» (I, Բ): Ստ. Մալխասյանը ծանոթագրում է, որ հիշյալ Պտղոմէոսը «հայտնի դարձավ իբրև գիտությունների և արվեստի հովանավոր: Մասնավորապես հիշատակելու է, որ նրա նախաձեռնությամբ 72 գիտնականներ երբայեցերենից հունարեն թարգմանեցին Ս. գիրքը, որ կոչվում է «Եօթանասնից թարգմանություն»: *Եղբայրասերը* հեգնական անուն է, որովհետև նա սպանել էր իր եղբորը (տե՛ս էջ 457, ծան. 4): Խորենացու «Պատմության» աշխարհաբար թարգմանության մեկ այլ՝ ավելի ուշ հրատարակության ծանոթագրության մեջ բացակայում է «Պտղոմէոս Եղբայրասերը (հեգնությամբ այսպես կոչված, որովհետև նա ի եղբորը սպանեց) հատվածը»<sup>31</sup>:

**Պառաբատոս** - «Այս Խոռոհբուտ դպիր եղեալ Շապիոյ թագաւորին Պարսից, և ի ձեռս Յունաց անկեալ, յորժամ Յուլիանոս, որ և Պառաբատոսն, զորու հանդերձ ի Տիգրոն չոգաւ» (II, Հ): Բառը հայերենում վկայված է մի շարք տարբերակներով *պառաւատոս*, *պառավատոս*, *բառապաղ...*: Աճառյանը նշում է, որ բոլոր վկայություններում այն Հուլիանոս կայսեր մականունն

---

<sup>31</sup> Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Հայոց պատմություն*, 1990 թ., ծան. 4:

է. հուն. παραβατησ «ուխտադրուծ»: (Տե՛ս Արմ, *պառավատու* բառահոդվածը): Հունարեն բառն ունի նաև այլ իմաստներ. «օրինազանց, հանցավոր» (տե՛ս Дворецкий, 1235):

**Միրիպինդէս** - «Զոր կալեալ Արշակայ՝ տարաւ ի Պարթևս հանդերձ երկաթեղէն կապանք, ուստի և Միրիպինդէսն կոչեցաւ» (II, Բ): Մտ. Մալխասայանը համարում է աղավաղված ձև՝ «փոխանակ Միտիրիդէսի, որ հունարեն նշանակում է երկաթյա» (տե՛ս էջ 478, ծան. 107):

**Երկաթ**-ը հուն. σιδηροσ-ն է (տե՛ս Дворецкий, 1472):

\*

\* \*

**Ամփոփում:** Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» գիտական արժանիքներից մեկն էլ հատուկ անունների մեկնությունն է: Այն էապես տարբերվում է V դ. այլ հեղինակների մեկնություններից: Խորենացին հատուկ նպատակադրմամբ ձեռնարկել և ստեղծել է մի կուռ համակարգ, ստուգաբանության մշակված սկզբունքներ, որը նրա «Պատմությունը» դարձնում է ոչ միայն գրավիչ ու հետաքրքիր, այլև՝ մեր ժողովրդի պատմության խորենացիական մոտեցումների յուրատեսակ փաստարկում:

Եթե սկզբնապես «Պատմության» ուսումնասիրողները, թերահավատորեն էին վերաբերում Խորենացու «ստուգաբանություններին», ապա այժմ վստահորեն կարելի է ասել, որ ըստ արժանվույն գնահատվում է նաև Պատմահոր այդ ձեռնարկը: Անշուշտ, կան դեռևս առարկելի մեկնություններ, որը բոլորովին չի ստվերում Խորենացու մեկնաբանական համակարգը, և սպասելի է, որ ապագայում նորանոր փաստերով կհիմնավորեն նրանց ճշմարտացիությունը:

Անկախ հավաստիությունից դրանք կարևորվում են ստուգաբանության համար անհրաժեշտ գործոնների՝ բառիմաստի և հնչյունական կողմի հաշվառմամբ:

Բառիմաստների դեպքում Խորենացին փորձել է հնարավորինս ներկայացնել մեկնաբանվող հատկանվանակրի կապը պատմական իրադարձությունների, բնակավայրերի առանձնահատկությունների և հատկանշական այլ երևույթների հետ:

Ինչ վերաբերում է բառերի հնչյունական կողմին, որը արդի լեզվաբանության մեջ դիտվում է որպես ստուգաբանության կարևորագույն նախադրյալ, ապա Խորենացին այս հարցում անխոցելի է: 19-րդ դ. առաջին կեսին ձևավորված պատմահամեմատական մեթոդի առաջադրած այս կարևոր սկզբունքի սաղմերը ակնառու են Խորենացու «ստուգաբանությունների» համակարգում: Հնչյունական կողմին հարազատ մնալու համար, ինչպես նշում է Գ. Մարգսյանը, Խորենացին (ա)ւան բաղադրիչը, որով կան բազմաթիվ տեղանուններ, Երուանդավան բառը գրում է վ-ով, որպեսզի հարմար լինի ստուգաբանությանը. «Եւ անուանեաց զհովիտն Մարաց մարգ, և գտեղի ճակատուն՝ Երուանդավան... այսինքն եթէ յայսմ տեղուջ վանեաց՝ զԵրուանդ» (II, ԽԶ):

Խորենացու մեկնություններից ակնհայտորեն զգացվում է, որ նա, բացի հունարենից, քաջատեղյակ էր և միջին պարսկերենին: Նրա «Պատմությունը» նաև հայ գրավոր (գրական) լեզվի բառապաշարի հարստացման աղբյուր է: Գ. Մուրադյանը «Պիտոյից գրքից» առանձնացնում է 17 նորաբանություններ, որոնք առկա են նաև Խորենացու «Պատմության» մեջ<sup>32</sup>:

---

<sup>32</sup> Գիրք Պիտոյից. աշխատասիրությանը Գոհար Մուրադյանի, Ե., 1993, էջ 320:

Մեր հաշվումներով մոտ 500 բառ՝ որպես եզակի կամ առաջին վկայություն, ավանդված է «Պատմության» մեջ: Դրանց մի մասը հունական աղբյուրների համապատասխան բառերի նրբանկատ «հայացումն» է. ինչպես՝ *աշխարհագրություն, արագաբանություն, ատարածին, ծննդաբանություն, մակագրություն, քարտուղարություն...* և այլն:

# Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

## 1. Գրքեր, հանդեսներ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Երևան, 1983:

Բզմվալ. - Բազմավելյ:

Բիւզ. - Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:

Բրսղ. (Վեցօր) - Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, Երևան, 1984:

Եզն. - Եզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Երևան, 1994:

Եղիշ. - Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989:

Խաչ. Եղիշ. - Լ.Խաչիկյան, Եղիշէի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992:

Խոր. - Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, 1981:

ՀԱ - Հանդէս ամսօրեայ:

ՀԼՊ - 1. **Հ.Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, 1-2, Երևան, 1940-1951:

2. **Գ.Ղափանցյան**, *Հայոց լեզվի պատմություն, հին շրջան*, Երևան, 1961:

3. **Գ.Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987:

ՄՀ - Մատենագիրք հայոց, Ա-Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003:

ՇՀՀԿԳ - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ:

Ոսկ. Եսայ. - Յովհաննու Ոսկերեբանի Մեկնություն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880:

Ոսկ. Պոդ. - Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862:

ՊԲՀ - Պատմաբանասիրական հանդէս:

Սգր. - Սուրբ Գիրք (Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վիեննա, 1929: (Աստվածաշնչի գրքերի համառոտագրությունները տալիս ենք ըստ ընդունված կարգի):

Փարպ. - Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1982:

Փիլոն. մնաց. - Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826:

ОИЯ - Основы иранского языкознания, 1-2, Москва, 1979-1981.

TPS – Transactions of the Philological Society, London, 1945.

## 2. Բառարաններ

ԱԲ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Անձ. բառ. - **Հ.Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, 1-5, Երևան, 1942-1962:

Արմ - **Հ.Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, 1-4, Երևան, 1972-1979:

ԲՄԳ - Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

ՀՀՇԱԲ - **Թ.Հակոբյան, Ստ.Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1-5, Երևան, 1986-2001:

ՀՄԲ - **Գ.Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:

ՀՄՀ - Հայկական սովետական հանրագիտարան:

БСЭ - Большая советская энциклопедия.

СИМФОНИЯ – Симфония к синодальному изданию Библии, Стокгольм, 1995.



ЭСИЯ – В.Расторгуева, Д.Эдельман, Этимологический словарь иранских языков, 1-3, Москва, 2000-2007.

### 3. Լեզուների անվանումներ

ակկադ. - ակկադերեն

անգլ. - անգլերեն

ասոր. - ասորերեն

ավեստ. - ավեստերեն

արամ. - արամեերեն

գերմ. - գերմաներեն

եբր. - եբրայերեն

եգիպտ. - եգիպտերեն

գենդ. - գենդերեն

հ. պրս. - հին պարսկերեն

հայ. - հայերեն

հնդ. - հնդկերեն

հուն. - հունարեն

մ. պրս. - միջին պարսկերեն

չին. - չինարեն

պիլ. - պահլավերեն

պրս. - պարսկերեն

ռուս. - ռուսերեն

սանս. - սանսկրիտերեն

ուրարտ. - ուրարտերեն

ֆրանս. - ֆրանսերեն

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	5
ԳԼՈՒԽ I	
Եզնիկ Կողբացու մեկնությունները.....	9
ԳԼՈՒԽ II	
Ագաթանգեղոսի մեկնությունները.....	21
ԳԼՈՒԽ III	
Փավստոս Բուզանդի մեկնությունները.....	32
ԳԼՈՒԽ IV	
Եղիշեի մեկնությունները	
I Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին.....	51
II Մեկնութիւն Արարածոց.....	60
ԳԼՈՒԽ V	
Ղազար Փարպեցու մեկնությունները.....	84
ԳԼՈՒԽ VI	
Մովսես Խորենացու մեկնությունները	
I Աշխարհացոյց.....	92
II Պատմութիւն Հայոց	112
ՄԱՍ I	
Իրանական լեզուների տվյալներով մեկնվող հատուկ անուններ	
1. Անձնանուններ, տոհմանուններ.....	114
2. Տեղանուններ.....	122
ՄԱՍ II	
Այլ բնույթի հատուկ անուններ	130
Համառոտագրություններ	152

ԼԱՎՐԵՆՏԻ ՇԱՀԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ  
ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ